**Շրջակա միջավայրի նախնական ուսումնասիրություն**

---

ՀԱՅ. Սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագիր

Ոսկեհատի միջնակարգ դպրոցի վերակառուցում

2023 թվականի օգոստոս

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ........ 4
I. ԱՄՓՈՓԱԳԻՐ ........ 5
Ծրագրի նախապատմություն ........ 5
ԱՄՔՓ քաղաքականության և Հայաստանի ՇՄԱԳ-ի օրենքի համապատասխանությունն ու իրագործումը ........ 7
Հաշվետվություն, մեթոդաբանություն և ուսումնասիրության շրջանակ ........ 9
II. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ . 10
Բնապահպանական կառավարումը և գնահատումը կարգավորող հայաստանյան օրենսդրություն ........ 10
Միջազգային բնապահպանական կարգավորումներ ........ 14
Ծրագրի իրականացման շրջանակ ........ 15
III. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ........ 16
Ընդհանուր նախապատմություն ........ 16
Ծրագրի տեղադիրքը ........ 17
Առկա կառույցների նկարագրություն ........ 18
Աշխատանքների նկարագրություն ........ 19
IV. ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ........ 21
V. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ........ 22
Ընդհանուր շրջանակ ........ 22
Կլիմա ........ 24
Երկրաբանություն ........ 24
Տարածքի սեյսմիկ բնութագրերը ........ 24
Օդի որակը ........ 24
Մակերևութային և ստորգետնյա ջրային մարմիններ ........ 25
Էկոլոգիական ռեսուրսներ ........ 25
Սոցիալ-տնտեսական պայմաններ ........ 25
VI. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ........ 26
Դրական ազդեցություններ ........ 26
Բացասական ազդեցություններ ........ 27
Գումարային ազդեցության գնահատում ........ 40
VII. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ, ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ........ 41
Տեղեկատվության հրապարակում ........ 41

Քննարկում և մասնակցություն ..... 42
VIII. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ ..... 43
Ներածություն ..... 43
Իրականացման մեխանիզմներ ..... 43
Ազդեցությունների կառավարում ..... 44
Մեղմում ..... 44
Թերությունների վերացման ժամկետ (ԹՎԺ) ..... 59
Մոնիթորինգ ..... 60
Հաշվետվություն ..... 60
Ծախսերի նախահաշիվ և հաշվարկված բյուջե ..... 62
IX. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 63
Եզրակացություններ ..... 63
Առաջարկություններ ..... 64
X. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ..... 66
**Հավելված 1. Արագ բնապահպանական գնահատման (ԱԲԳ) ստուգաթերթ** ..... 66
**Հավելված 2. Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված/վավերացված միջազգային պայմանագրերը և կոնվենցիաները շրջակա միջավայրի և կենսաբազմազանության պաշտպանությանը վերաբերյալ** ..... 68
**Հավելված 3. Հանրային հաղորդակցության և քննարկումների վերաբերյալ հաշվետվություն** ..... 71
**Հավելված 4. Բողոքների լուծման մեխանիզմ** ..... 81
**Հավելված 5. Պատասխանատու մարմինների առաջադրանքները և ձեռքբերումները** ..... 84
**Հավելված 6 (ա). Բնապահպանական կառավարման պլան. Մեղմում** ..... 87
**Հավելված 6 (բ). Բնապահպանական կառավարման պլան. Մոնիթորինգ** ..... 126
**Հավելված 7. Վթարների/պատահարների մասին զեկույցի ձևերը** ..... 143
**Հավելված 8. Մեղմման համապատասխանության և տեսչական ստուգման մոնիթորինգի ստուգաթերթեր (օրինակ)** ..... 149
**Հավելված 9. Լուսանկարներ** ..... 157

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

| | |
|---|---|
| ԱԶԲ | Ասիական զարգացման բանկ |
| ԱԵԱ | Ազդեցության ենթակա անձ |
| ՀՏԶՀ | Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ |
| ԹՎԺ | Թերությունների վերացման ժամկետ |
| ՇՄԱԳ | Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում |
| ԲԿՇ | Բնապահպանական կառավարման շրջանակ |
| ԲԿՊ | Բնապահպանական կառավարման պլան |
| ԲԳՈՒՇ | Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ |
| ԲԼՄ | Բողոքների լուծման մեխանիզմներ |
| ԱԱԿՊ | Առողջապահության և անվտանգության կառավարման պլան |
| ԻՄ | Իրականացնող մարմին |
| ՆՍԳ | Նախնական սոցիալական գնահատում |
| ՇՄՆ | Շրջակա միջավայրի նախարարություն |
| ՏԿԵՆ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն |
| ԳՁ | Գործառնությունների ձեռնարկ |
| ՆԿՀ | Նախնական կիրառման մասին հաշվետվություն |
| ՀՔՀՊ | Հանրային քննարկումների և հաղորդակցության պլան |
| ՀՀ | Հայաստանի Հանրապետություն |
| ՏՔՇ | Տարաբնակեցման քաղաքականության շրջանակ |
| ՏՀԲԿՊ | Տեղանքին հատուկ բնապահպանական կառավարման պլան |
| ԱՄՔՓ | Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթուղթ |
| ՍԱԲԾ | Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր |
| ԴԱՎԾ | Դպրոցների ամրացման և վերանորոգման ծրագիր |

## I. ԱՄՓՈՓԱԳԻՐ

### Ծրագրի նախապատմություն

1. Հայաստանը գտնվում է աշխարհի սեյսմիկորեն ամենաակտիվ շրջաններից մեկում, և երկրաշարժերը հանդիսանում են հիմնական բնական վտանգը: Վերջին ժամանակների ամենաավերիչ երկրաշարժը տեղի է ունեցել Սպիտակում 1988 թվականի դեկտեմբերի 7-ին՝ Ռիխտերի սանդղակով 6.9 մագնիտուդ հզորությամբ: Երկրաշարժի հետևանքով զոհվել է 25,000 մարդ (այդ թվում՝ 6,000 դպրոցականներ), վիրավորվել՝ 15,000 մարդ, 517,000 մարդ մնացել է անօթևան, ավերվել է թվով 190 դպրոց: Սպիտակի երկրաշարժի գնահատված ուղղակի տնտեսական վնասը կազմում է 15–20 միլիարդ դոլար[1]: 2020 թվականից ի վեր Հայաստանում տեղի է ունեցել 5 և ավելի մագնիտուդ ուժգնությամբ 14, և 5 մագնիտուդից պակաս ուժգնությամբ ավելի քան 2700 երկրաշարժ[2]: 2023 թվականի փետրվարի 6-ի հարավ-արևելյան Թուրքիայում և Սիրիայում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժերը և հետցնցումները մեծացրել են Հայաստանի սեյսմիկ ռիսկը: Հասարակական շենքերի մեծ մասը, հատկապես խորհրդային տարիներին կառուցված դպրոցների շենքերը, նախագծված չեն եղել երկրաշարժի վտանգի պայմաններին դիմակայելու համար: Սպիտակի երկրաշարժից հետո՝ 1995, 2006 և 2020 թվականներին թարմացվել են խորհրդային շաբլոնային շինարարական նորմերը և չափանիշները: Հայաստանում կա մոտ 1,400 հանրակրթական դպրոց, որոնցից մոտ 1,000-ն ունի ամրակայման կամ վերակառուցման կարիք, քանի որ մեծ է հավանականությունը, որ դպրոցների շենքերը կփլուզվեն չափավոր կամ ուժեղ երկրաշարժից:

2. 2015 թվականին կառավարությունը հաստատել է Դպրոցների ամրացման և վերանորոգման ծրագիրը (ԴԱՎԾ)՝ որպես Աղետների ռիսկի նվազեցման ազգային ռազմավարության հիմնական ազգային ծրագիր[3]: Ազգային ռազմավարությունում շեշտվում է աղետներին դիմակայությունը և անհատների ու հասարակության անվտանգության մեծացումը, ներառյալ՝ դպրոցների վերակառուցումն ու ամրակայումը, պատրաստվածության և արձագանքման մեծացումը, ինչն էական է կայուն զարգացման համար: ԴԱՎԾ-ը տրամադրում է ըստ սեյսմիկ ռիսկի և զարգացման կարիքների՝ դասակարգված դպրոցների միասնական ցանկը՝ օգտագործելով ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) աջակցությամբ մշակված առաջնահերթության չափորոշիչները: ԴԱՎԾ-ի նպատակն է 2015-2035 թվականների ընթացքում ամրակայել կամ վերակառուցել առաջնահերթ 431 դպրոցները՝ 1.7 միլիարդ դոլար գնահատված արժեքով:

3. Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ) 2015 թվականի սեպտեմբերի 22-ին հաստատել է Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիրը (ՍԱԲԾ)[4]՝ 88.5 միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք գումարով, և հարակից տեխնիկական աջակցությունը: ՍԱԲԾ-ն աջակցում է Աղետների ռիսկի նվազեցման ազգային ռազմավարության իրականացմանը՝ երկրաշարժերի ժամանակ դպրոցներում դժբախտ պատահարները ու վնասները նվազեցնելու նպատակով դպրոցների սեյսմիկ անվտանգությունը բարելավելու, և երկրաշարժերից հետո ընդհանուր

---

[1] Համաշխարհային բանկ. 2009 թ.: *Disaster Risk Reduction and Emergency Management in Armenia /Աղետների ռիսկի նվազեցումը և արտակարգ իրավիճակների կառավարումը Հայաստանում/:* Վաշինգթոն ԴիՍի:

[2] Volcano Discovery կայք. [Past earthquakes in Armenia: Jan 1, 2020–Apr 9, 2023 – list, stats and map]() /Վերջին երկրաշարժերը Հայաստանում. 2020 թվականի հունվարի 1-ից՝ մինչև 2023 թվականի ապրիլի 9-ը – ցանկ, վիճակագրություն և քարտեզ (մուտքը՝ 2023 թվականի մարտի 31-ին):

[3] Հայաստանի Հանրապետության կառավարություն. 2017 թվական: *Աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարության և դրա իրականացման գործողությունների ծրագրի հաստատում:* Երևան:

[4] ԱԶԲ. Հայաստան. Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր:

հանրության համար դպրոցների շենքերի՝ որպես ապաստարաններ և արտակարգ իրավիճակներին արձագանքման կենտրոնակայաններ ավելի լավ օգտագործումը հնարավոր դարձնելու միջոցով:
Ծրագրի վերջնարդյունքը սեյսմիկ առումով անվտանգ դպրոցական շենքերի բարելավված ծածկույթն է: Ուղղակի արդյունքներն են. (i) դպրոցների շենքերի սեյսմակայունությունը մեծացել է, (ii) սեյսմիկ աղետներին պատրաստվածության և արձագանքման կարողություններն ուժեղացել են, (iii) սեյսմիկ աղետների ռիսկի կառավարման և նվազեցման մասով աջակցող քաղաքականությունները և համակարգերը բարելավվել են, և (iv) սեյսմիկ անվտանգության ներդրումային ծրագրի կատարման և իրականացման ազգային կարողությունները մեծացել են: Ամրացված կամ վերակառուցված դպրոցական շենքերը կհամապատասխանեն երկրաշարժի համար միջազգայնորեն ընդունված սեյսմիկ անվտանգության չափանիշներին: Ամրացված կամ վերակառուցված դպրոցական շենքերը կհամապատասխանեն նաև էներգաարդյունավետության մասով կառավարության պահանջներին, և կունենան հաշմանդամների անվասայլակների համար մատչելի արահետներ ու տարբեր սեռի աշակերտների համար առանձնացված զուգարաններ, որոնք հնարավորություն կտան դպրոցական շենքերն ավելի լավ օգտագործել որպես ապաստարան երկրաշարժից հետո վնասված կամ հաշմանդամություն ունեցող անձանց համար: 2027 թվականին Ծրագրի ավարտից հետո դրանից անմիջականորեն կօգտվեն մոտ 18,000 աշակերտներ և 3,100 ուսուցիչներ, ինչպես նաև դպրոցների այլ աշխատակիցներ:

4. Բարգավաճ և դիմակայուն Ասիայի և Խաղաղ օվկիանոսի Ճապոնիայի հիմնադրամի (JFPR) դրամաշնորհով ֆինանսավորվող Սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագիրը (Ծրագիր) կփոխլրացնի Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիրը (ՍԱԲԾ): Այն ենթադրում է Երևանի մերձակայքում մեկ հանրակրթական դպրոցի նախագծում և կառուցում: Դպրոցը կլինի սոցիալապես ներառական, 21-րդ դարի կրթությանը հարիր, վերափոխվող համայնքային գործունեության համար և կհամապատասխանի սեյսմիկ անվտանգության բարձր չափանիշներին: Ծրագիրը բոլոր մակարդակներում կխրախուսի կառավարության գործընկերներին՝ աղետների ռիսկի կառավարման ոլորտում նորարարական և ծախսարդյունավետ լուծումների ինստիտուցիոնալացման հարցում: Ծրագիրը կտրամադրի (i) ոչ ավանդական ծախսարդյունավետ նախագծային լուծումներ սեյսմիկ ամրակայման համար, որոնք կկրկնօրինակվեն և կմասշտաբավորվեն ԴԱՎԾ-ի այլ դպրոցներում, (ii) շենքերի պահպանման ուղեցույց JFPR-ի ավարտին հասցված դպրոցի համար, որը կօգտագործվի և կգործարկվի այլ դպրոցներում, և (iii) մոտեցումներ Հայաստանում ԱՌՆ թիրախային և արդյունավետ քարոզարշավների համար: Անհրաժեշտության դեպքում սեյսմակայուն նախագծման համար նախատեսված շինարարական նորմերը հետագայում կարդիականացվեն և ազդեցություն կունենան երկրի շինարարության ամբողջ ոլորտի վրա: JFPR դրամաշնորհային աջակցության ասպեկտներից մեկը, այն է՝ ճապոնացի գործընկերների հետ նախապես հաստատված հանդիպումներ և քննարկումներ ենթադրող լավ պլանավորված գնահատման այց Ճապոնիա, կբարձրացնի կարողությունների զարգացման բաղադրիչի արդյունավետությունը: Հայաստանում կուսումնասիրվի և կկիրառվի նորարարական և թիրախային իրազեկման արշավների միջոցով սեյսմիկ աղետների ռիսկի մեղմման ճապոնական փորձը: Սեյսմիկ իրադարձությունների մասին հանրային իրազեկվածության և պատրաստվածության բարձրացման նպատակով տեխնոլոգիաների, սոցիալական մեդիայի և որպես բարի կամքի դեսպաններ՝ հայտնի մարդկանց օգտագործումը նորույթ կլինի սոցիալական մեդիայի միջոցով ոչ սովորական թեմայի խթանման իմաստով: ՍԱԲԾ-ի իրականացման ընթացքում քաղված դասերը կկիրառվեն Ծրագրում և (i) հետագայում կբարձրացնեն սեյսմակայուն շենքերի ճարտարագիտական նախագծման և կառուցման մասով ԻՄ-ի կարողությունները. (ii) որպես դրամաշնորհի արդյունավետության նախպայման՝ կսահմանեն ընտրված ծրագրի պատրաստության գործողությունները, ինչպիսիք են՝ ծրագրի դպրոցի, աշակերտների թվի վերհանումը, նախագծող ընկերության/խորհրդատուի ընտրությունը, և (iii) ուշադրությամբ կմշտադիտարկեն արտածին գործոնները, որոնք կարող են հետագայում ազդել Ծրագրի վրա:

5. Ծրագրի ազդեցությունը կշարունակի համապատասխանել Աղետների ռիսկի նվազեցման ազգային ռազմավարությանը: Ծրագրի վերջնարդյունքն է ունենալ սեյսմիկ անվտանգության ստանդարտներին համապատասխանող դպրոցում սովորող առնվազն 290 երեխա՝ դիմակայուն դպրոցների համար կրկնօրինակման մոդել լինելու ներուժով: Ծրագրի ուղղակի արդյունքներն են. **Ուղղակի արդյունք 1. Սեյսմիկ աղետների նկատմամբ դիմակայուն ենթակառուցվածքների և ռիսկերի կառավարման կարողության հզորացում:** Ծրագիրը կֆինանսավորի Երևանից 20 կմ հեռավորության վրա գտնվող՝ Արմավիրի մարզի Ոսկեհատ բնակավայրի Խրիմյան Հայրիկի անվան միջնակարգ դպրոցի նախագծումը և կառուցումը: Դպրոցն ունի մեկից երեք հարկանի 5 մասնաշենք և ընտրվել է, քանի որ i) դպրոցի շենքը գտնվում է անգործածական ֆիզիկական վիճակում և ընդգրկված է ԴԱՎԾ-ում, ii) այն համեմատաբար փոքր է՝ նախատեսված 290 աշակերտի համար և կարող է ավարտին հասցվել դրամաշնորհային ֆինանսավորմամբ, iii) նախնական տեսողական գնահատման հիման վրա շենքը կարող է ամրակայվել, ինչը միջամտության նախընտրելի տեսակ է, որ կարող է առավել հեշտությամբ կրկնօրինակվել այլ դպրոցներում, iv) այն գտնվում է Հայաստանի Արմավիրի մարզում, որը հայտնի է իր խաղողի այգիներով՝ օժտված գինու տուրիզմի միջազգային և ազգային ներուժով, և կապահովի մոդելային դպրոցի և Ճապոնիայի աջակցության լայն տեսանելիություն: Ավարտված շենքի համար կմշակվի և կգործարկվի շենքի պահպանման և շահագործման ուղեցույց, որը կկրկնօրինակվի այլ դպրոցներում: Դպրոցի վարչական անձնակազմը կանցնի ուղեցույցի կիրառման վերաբերյալ համապատասխան վերապատրաստում: Կառավարության պաշտոնյաների կազմով հայկական պատվիրակությունը կայցելի Ճապոնիա՝ երկրի աղետների կանխարգելման և կառավարման համատեքստին ծանոթանալու և այն զգալու նպատակով: Ուսուցման հիմնական ուղղությունները կլինեն դիմակայուն նախագիծը և շինարարությունը, ինչպես նաև՝ սեյսմիկ աղետների ռիսկի կառավարումը: **Ուղղակի արդյունք 2. Սեյսմիկ անվտանգության վերաբերյալ իրազեկվածության բարձրացում:** Ծրագիրը կուժեղացնի Հայաստանում սեյսմիկ աղետների ռիսկի կառավարման վերաբերյալ իրազեկվածությունը: Ընտրված կին ու տղամարդ հայտնի դեմքերը և սոցիալական ինֆլյուենսերները /ազդեցության գործող անձինք/ կներգրավվեն և կծառայեն որպես բարի կամքի դեսպաններ: Տեխնոլոգիաների և սոցիալական մեդիայի ուժը կօգտագործվի JFPR-ի և ՍԱԲԾ-ի դպրոցների համայնքների շրջանակից դուրս տեղեկատվության ավելի լայն տարածումը խթանելու նպատակով:

6. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (ՏԿԵՆ) կլինի կատարող մարմինը, իսկ ՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը՝ (ՀՏԶՀ) իրականացնող մարմինը:

7. Իրականացվել է բնապահպանական և սոցիալական սքրինինգ՝ ապահովելու, որպեսզի բնապահպանական և սոցիալական նկատառումները վաղ փուլից սկսած ներառված լինեն ծրագրի նախագծում՝ առաջարկվող Ծրագրի կայունությունն ի ցույց դնելու ընդհանուր նպատակի հետ միասին: Ազգային և միջազգային ստանդարտների համաձայն՝ մանրամասն նախագծման փուլում պահանջվող վերանայման ու գնահատման մակարդակը որոշվել է, իսկ սքրինինգից ստացված տվյալներն ամփոփվել և ներկայացվել են Շրջակա միջավայրի նախնական ուսումնասիրությունում (ՇՄՆՈւ)՝ Ոսկեհատի միջնակարգ դպրոցի վերակառուցման համար:

### ԱՄՔՓ քաղաքականության և Հայաստանի ՇՄԱԳ-ի օրենքի համապատասխանությունն ու իրագործումը

8. Ծրագրի համար կատարվել է շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատում, իսկ սույն ՇՄՆՈւ հաշվետվությունը պատրաստվել է ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթղթի (ԱՄՔՓ, 2009) հետ լիակատար համապատասխանության պայմաններում և Հայաստանի օրենսդրական դաշտին,

մասնավորապես՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքին (2014 թվական) համապատասխան:

9. Փաստացի ուսումնասիրությունն իրականացվել է ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթղթի (2009 թվական), Բնապահպանական գնահատման ուղեցույցի (2003 թվական), և Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակի (2015 թվական) համաձայն, որոնք պատրաստվել են ՍԱԲԾ-ի շրջանակում ֆինանսավորվող և ՀՀ կառավարության ու ԱԶԲ-ի միջև համաձայնեցված ծրագրերի բնապահպանական գնահատումը կատարելու հարցում ԻՄ-ին առաջնորդելու նպատակով: ԲԳՈւՇ-ը սահմանում է ընդհանուր սկզբունքները. ընտրության չափորոշիչները, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում կատարելու ընթացակարգը և կազմակերպումը, և ՍԱԲԾ-ի շրջանակում ծրագրի ցիկլի ողջ ընթացքում ԲԿՊ-ի իրականացումը: Միջազգայնորեն ճանաչված չափանիշներն ու ուղենիշները ապահովել են ուղեցույց այն դեպքերում, երբ տեղական չափանիշներ չեն եղել:

**Սքրինինգ և դասակարգում**

10. ՍԱԲԾ-ի ինստիտուցիոնալ համակարգերը կկիրառվեն JFPR-ի ծրագրի նկատմամբ: Ծրագրի անվտանգության մեխանիզմների համակարգերի գնահատումը (ԾԱՄՀԳ/PSSA) պատրաստվել ՍԱԲԾ-ի համար, և թարմացվել լրացուցիչ ֆինանսավորման նպատակով: Վերհանված ռիսկերը մեղմելուն ուղղված գործողությունների մեծ մասն իրականացվել է ՍԱԲԾ-ի իրականացման ընթացքում, իսկ ինստիտուցիոնալ կարողությունները և համակարգերը ստեղծվել են բնապահպանական և սոցիալական ազդեցությունները կառավարելու համար: Շինարարական տեղամասերում տեղայնացված JFPR ծրագրի համար ակնկալվում են ժամանակավոր բացասական ազդեցություններ շինարարական աշխատանքների ընթացքում, որոնք կարող են մեղմվել շինարարության կառավարման լավ գործելակերպերի միջոցով: Հարկադիր տարաբնակեցում կամ բնիկ ժողովուրդների վրա որևէ ազդեցություն չի նախատեսվում, քանի որ դպրոցի շենքի վերակառուցումը/ամրակայումը տեղի կունենա գոյություն ունեցող վայրում, իսկ Հայաստանը միատարր է իր էթնիկ կազմով: Սոցիալական երաշխիքների մասով պատշաճ ուսումնասիրությունը հաստատել է հողերի օտարման և տարաբնակեցման ազդեցության բացակայությունը և առաջարկել մեղմման միջոցառումներ ցանկացած հնարավոր խնդրի համար, որ կարող է առաջանալ շինարարության փուլում: Ծրագրի անվտանգության մեխանիզմների դասակարգումը կատեգորիա B է շրջակա միջավայրի, կատեգորիա C՝ հարկադիր տարաբնակեցման և կատեգորիա C՝ բնիկ ժողովուրդների համար: Լրացված Արագ բնապահպանական գնահատման (ԱԲԳ/REA) ստուգաթերթը կցվում է որպես սույն հաշվետվության Հավելված 1:

**Հանդիպումներ, հանրային քննարկում և տեղեկատվության հրապարակում**

11. Հանրային կապը, քննարկումները և ներգրավվածությունը իրականացվել են Հայաստանի օրենսդրության և ԱԶԲ-ի ԱՄՔՓ-ի (2009 թվական) համաձայն: Բոլոր շահագրգիռ կողմերի բովանդակալից և արդյունավետ մասնակցությունն ապահովելու նպատակով՝ քննարկումներ պլանավորվում են Ծրագրի բոլոր փուլերում, սկսած նախագծումից՝ մինչև շինարարություն ու շահագործում:

12. Անցկացվել է ներածական հանդիպում Վաղարշապատ համայնքի ազդեցության ենթակա Ոսկեհատ բնակավայրի իշխանությունների հետ: 2023 թվականի մայիսի 12-ին տեղի է ունեցել ծրագրի ճարտարագիտական և բնապահպանական երաշխիքների թիմերի համատեղ հանդիպումը Ոսկեհատ բնակավայրի վարչական ղեկավար Արմեն Խուդաբաշյանի և Ոսկեհատի միջնակարգ դպրոցի տնօրեն տիկին Սոֆիկ Պետրոսյանի հետ: Հանդիպման ընթացքում ծրագրի թիմը ներկայացրել է առաջարկվող Ծրագիրը, տեղեկացրել է ՇՄՆՈւ-ի և պահանջվող մեղմման միջոցառումների անհրաժեշտության մասին, և աջակցություն խնդրել արդյունավետ ու բովանդակալից հանրային քննարկումների համար: Ազդարարվել է նաև

ազդեցության ենթակա անձանց և այլ շահագրգիռ հանրության շրջանում հրապարակման և տարածման  համար նախատեսված առաջիկա հանրային քննարկման մասին:

13. Ծրագրի մասին տեղեկատվությունը հրապարակվել է 2023 թվականի մայիսի 18-ին Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրում կայացած հանրային քննարկման միջոցով: Հանրային հաղորդակցության, քննարկման և տեղեկատվության հրապարակման մանրամասները ներկայացված են Հավելված 3-ում:

**Բողոքների լուծման մեխանիզմ**

14. ԱԶԲ-ի ուղեցույցների և քաղաքականությունների՝ խնդիրների լուծման գործառույթից բխող Բողոքների լուծման մեխանիզմը (ԲԼՄ) մշակվել է ՍԱԲԾ-ի համար, և այն կկիրառվի այս ծրագրի նկատմամբ: Այն նպատակ ունի ծրագրի իրականացման ընթացքում շարունակաբար հաղորդակցվել ազդեցության ենթակա անձանց հետ, որպեսզի ստանա և հասցեագրի նրանց մտահոգությունները, բողոքները և առաջարկությունները Ծրագրի բնապահպանական կատարողականի վերաբերյալ: Բողոքների լուծման մեխանիզմը նախագծվել է ծրագիրն իրականացնող կողմերի համար, որպեսզի շուտափույթ, ժամանակին և արդյունավետ կերպով հասցեագրի ազդեցության ենթակա մարդկանց մտահոգությունները և բողոքները՝ օգտագործելով պարզ ընթացակարգ և թափանցիկ գործընթաց, որն առանց որևէ ծախսի և հատուցման հեշտ հասանելի կլինի ազդեցության ենթակա մարդկանց բոլոր հատվածներին: Մեխանիզմը խոչընդոտներ չի ստեղծում երկրի դատական կամ վարչական համակարգերի համար: Ազդեցության ենթակա մարդիկ պատշաճորեն կտեղեկացվեն ԲԼՄ-ի մասին հանրային քննարկումների ժամանակ: Ծրագրի բոլոր փուլերի համար ԲԼՄ-ը մանրամասնորեն ներկայացված է Հավելված 4-ում:

## Հաշվետվություն, մեթոդաբանություն և ուսումնասիրության շրջանակ

15. Բնապահպանական գնահատումը և Բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլանը (ԲԿՊ), որն  իրենից ներկայացնում է ծրագրի շրջակա միջավայրի պահպանության և մեղմման պահանջների չափման ու դրանց համապատասխանության ճեռքբերման ուղեցուցային փաստաթուղթ, ինչը սովորաբար ծրագրի թույլտվությունների/հաստատումների պահանջներն են,   ներառում է հետևյալ հիմնական գործողությունները.

i. Ծրագրի տարածքի ֆիզիկական, կենսաբանական և սոցիալ-տնտեսական միջավայրի վերաբերյալ ելակետային տեղեկատվության հավաքագրում և տեխնիկական, սոցիալական ու ինստիտուցիոնալ ասպեկտների ընկալում:
ii. Քննարկումներ համապատասխան գերատեսչությունների աշխատակիցների հետ:
iii. Հանրային քննարկում:
iv. Տեղադիրքի, նախագծման, շինարարության և շահագործման հետ կապված հնարավոր խնդիրների, մտահոգությունների և ազդեցությունների սքրինինգ՝ տարանջատելու այն ամենը, որոնք հետագա ուսումնասիրության ընթացքում հավանականորեն կլինեն նշանակալի և կարևոր:
v. ԲԿՊ-ի պատրաստում, որտեղ կնշվեն ազդեցության տարածքները, առաջարկվող մեղմման միջոցառումները, ազդեցությունների մոնիթորինգային մեթոդը, պատասխանատու գերատեսչությունները/անձինք և հարակից ծախսերը, և
vi. ԲԿՊ-ի իրականացման համար ինստիտուցիոնալ կառուցվածք առաջարկելը:

16. Սույն ՇՄՆՈւ հաշվետվության կառուցվածքը առաջնորդվում է հետևյալ ուրվապատկերով.

a) Ամփոփագիր
b) Բնապահպանական քաղաքականություն, իրավական և վարչական շրջանակ
c) Ծրագրի նկարագրություն
d) Այլընտրանքների վերլուծություն
e) Ելակետային պայմաններ

f) Նախատեսվող բնապահպանական և սոցիալական ազդեցություններ
g) Տեղեկատվության հրապարակում, Հանրային հաղորդակցություն, Քննարկում և մասնակցություն, Բողոքների լուծման մեխանիզմ
h) Բապահպանական կառավարման և մոնիթորինգի պլան(ներ)
i) Եզրակացություններ և առաջարկություններ
j) Հավելվածներ

17. Ելակետային տվյալները և այլ տեղեկությունները ստացվել են հրապարակված և չհրապարակված աղբյուրներից, ներառյալ՝ կլիմայի, տեղագրության, երկրաբանության և հողերի, բնական ռեսուրսների, բուսական և կենդանական աշխարհի և սոցիալ-տնտեսական տվյալները: Օդի որակի վերաբերյալ ֆիզիկական ելակետային տվյալները ստացվել են Շրջակա միջավայրի նախարարության (ՇՄՆ) Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոնից: Մանրամասն դաշտային հետազոտությունները, տվյալների մշակումը և շահագրգիռ կողմերի հետ քննարկումները կիրականացվեն մանրամասն նախագծման փուլում և կներառվեն թարմացված ՇՄՆՈւ-ում:

## II. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ

### Բնապահպանական կառավարումը և գնահատումը կարգավորող հայաստանյան օրենսդրություն

18. Հայաստանն ունի շրջակա միջավայրի պահպանության մասով բավականին զարգացած օրենսդրական և կարգավորման դաշտ: Սահմանադրության 12-րդ հոդվածում (06.12.2015 թվական) նշվում է շրջակա միջավայրի պահպանության, վերարտադրության և բնական պաշարների կայուն օգտագործման համար պետության պատասխանատվության մասին:

19. Իրավական դաշտը ներառում է շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող ավելի քան 30 օրենքներ և ավելի քան 100 օժանդակ իրավական կարգավորումներ: Սքրինինգի շրջանակներում ուսումնասիրվել են ազգային քաղաքականությունները և կարգավորող օրենսդրական դաշտը, որոնք պարունակում են քաղաքաշինության համար այս կամ այն չափով կիրառելի կարգավորումներ, ինչպես նաև դրանց գործնական կիրառումը: Բնապահպանական և սոցիալական պաշտպանությանն առնչվող առավել կիրառելի ազգային օրենքներն ու կանոնակարգերը, ինչպես նաև իրավական պարտավորությունները թվարկվում են ստորև.

**Շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրություն**

Օրենսգրքեր և օրենքներ

20. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով (2023 թվականի մայիսի 3) պահանջվում է ծրագրերի գնահատում՝ շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցությունների մասով, սքրինինգ և դասակարգում՝ ըստ գործունեության տեսակի, գնահատման հաշվետվությունների փորձաքննություն և փորձաքննության եզրակացության տրամադրում: Սույն օրենքը Շրջակա միջավայրի նախարարության համար ծառայում է որպես երկրում տարբեր զարգացման ծրագրերին հավանություն տալու շրջանակ: Գլուխ 3-ի 12-րդ հոդվածի համաձայն՝ ՇՄԱԳ-ի և փորձաքննության ենթակա տնտեսական գործունեության տեսակները կամ ծրագրերը պետք է նախագծման փուլում ենթարկվեն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, իսկ իրականացումը պետք է մեկնարկի միայն ՇՄՆ-ի կողմից հաստատումից հետո: 4-րդ և 7-րդ գլուխները սահմանում են ընթացակարգեր ու պահանջներ ՇՄԱԳ-ի ու փորձաքննության, և համապատասխանաբար՝ հանրային ծանուցման և հանդիպումների համար:

21. «Թափոնների մասին» օրենքը (2004 թվական) կարգավորում է թափոնների, այդ թվում՝ շինարարությանն առնչվող թափոնների հավաքումը, փոխադրումը, պահումը, մշակումը, օգտահանումը և հեռացումը:

22. «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենքը (2005 թվական) կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպումը և կիրարկումը:

23. «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքը (2000 թվական) կարգավորում է տնտեսական գործունեության նկատմամբ ստուգումների իրականացման ընթացակարգերը:

24. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքը (1994 թվական, վերջին անգամ լրամշակվել է 2007 թվականին) կարգավորում է արտանետման թույլտվությունները և նախատեսում մթնոլորտային օդի աղտոտման առավելագույն թույլատրելի ծանրաբեռնվածությունը/կոնցենտրացիան, և այլն:

25. Հողային օրենսգիրքը (2001 թվական) կարգավորում է հողօգտագործման գործընթացում առաջացող բոլոր հարաբերությունները, և նախատեսում իրավական հիմք արդյունավետ հողօգտագործման, հողի բերրիության բարելավման և պահպանման, և հողային ռեսուրսների պաշտպանության համար՝ հաշվի առնելով դրանց ընդգծված բնապահպանական, տնտեսական և սոցիալական նշանակությունը:

26. Ջրային օրենսգիրքը (2002 թվական) նախատեսում է իրավական հիմք երկրի ջրային ռեսուրսների պահպանության և արդյունավետ կառավարման համար՝ հանուն ապագա սերունդների: Ջրային օրենսգրքի (2002 թվական) հետևյալ կարգավորումներն ու ընթացակարգերն են վերաբերելի. (ա) ջրօգտագործման թույլտվության ընթացակարգեր, (բ) բնապահպանական հոսքեր, (գ) ջրահեռացում, (է) ստորգետնյա ջրային աղբյուրների պահպանում և (թ) հասարակության իրազեկվածություն և ՇՄՆ-ի Ջրային ռեսուրսների կառավարման վարչության (ՋՌԿԳ) կողմից մշակված այն փաստաթղթերի և այլ նորմատիվ փաստաթղթերի հրապարակայնությունը, որոնք նախատեսում են ջրի և բնապահպանական խնդիրների հետ ուղղակիորեն կապված ուղեցույցներ:

27. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքը (1999 թվական) ընդհանուր գծերով նկարագրում է բույսերի բնական պոպուլյացիաների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտադրության և կառավարման, ինչպես նաև՝ կենսաբազմազանության վրա մարդու գործունեության ազդեցությունը կարգավորող ազգային քաղաքականությունները: Օրենքը նախատեսում է տեսակների, հատկապես՝ հազվագյուտ և անհետացող տեսակների գնահատում և մոնիթորինգ:

28. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-52 03.04.2000 թվական) սահմանում է Հայաստանի Հանրապետությունում կենդանիների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտադրության և կառավարման, ինչպես նաև՝ կենդանիների թվի և նրանց կենսամիջավայրերի վրա մարդու գործունեության ազդեցությունը կարգավորող ազգային քաղաքականությունները: Այն նաև նախատեսում է տեսակների, հատկապես՝ հազվագյուտ և անհետացող տեսակների գնահատում և մոնիթորինգ:

29. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-211 27.11.2006) սահմանում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտադրության և կառավարման,

ինչպես նաև՝ կենսաբազմազանության վրա մարդու գործունեության ազդեցությունը կարգավորող քաղաքականությունը:

30. «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքը (11.11.1998 թվական):

Այլ իրավական ակտեր

- ✓ Արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման սանիտարական նորմեր 245-71,
- ✓ ՀՀ կառավարության թիվ 1325-Ն որոշումը «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» (19.11.2014 թվական):
- ✓ ՀՀ կառավարության թիվ 160-Ն որոշումը «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) և Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների բանած գազերում վնասակար նյութերի պարունակության սահմանային թույլատրելի նորմատիվները հաստատելու մասին» (02.02.2006 թվական):
- ✓ ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» թիվ 121-Ն որոշումը նախատեսում է Հայաստանում, այդ թվում՝ քաղաքաշինության ոլորտում առաջացող վտանգավոր թափոնների հետ վարվելու կարգավորումները (30.01.2003 թվական):
- ✓ ՀՀ բնապահպանության և ընդերքի նախարարի Հրաման թիվ 120-ը «ՀՀ տարածքում առաջացող թափոնների՝ ըստ վտանգավորության աստիճանի դասակարգման մասին» (05.12.1996 թվական):
- ✓ ՀՀ կառավարության թիվ N1404-Ն որոշումը «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու մասին» (02.11.2017 թվական):
- ✓ ՀՀ կառավարության թիվ 1396-Ն որոշումը «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու մասին» (8.09.2011 թվական):
- ✓ ՀՀ կառավարության թիվ 108-Ն որոշումը «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու մասին» (08.02.2018 թվական):
- ✓ ՀՀ կառավարության թիվ 967-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» (14.08.2008 թվական):
- ✓ ՀՀ կառավարության թիվ 764-Ն որոշումը «Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը հաստատելու մասին» (27.05. 2005):
- ✓ ՀՀ շրջակա միջավայրի նախարարի թիվ 64-Լ հրամանը «Անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումների ցրման հաշվարկի համակարգչային ծրագրերը սահմանելու մասին» (18.02.2020 թվական):
- ✓ ՀՀ առողջապահության նախարարի թիվ 20-Լ հրամանը «Վտանգավոր քիմիական թափոնների գործածությանը և վտանգավոր քիմիական նյութերի պահպանմանը և փոխադրմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.001-09 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» (29.11.2009 թվական):
- ✓ ՀՀ առողջապահության նախարարի թիվ 138 հրամանով ընդունված «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» 2-III-11.3 սանիտարական նորմերը (06.03.2002 թվական):
- ✓ ԳՈՍՏ 17.2.4.05-83. «Շրջակա միջավայրի պաշտպանություն. Մթնոլորտ. Փոշու մասնիկների որոշման գրավիմետրիկ մեթոդ»:

- ✓ ՀՀ կառավարության թիվ 160-Ն որոշումը «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին» (02.02.2006 թվական):
- ✓ ՀՀ կառավարության թիվ 72-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության բույսերի կարմիր գիրքը հաստատելու մասին» (29.01.2010 թվական),
- ✓ ՀՀ կառավարության թիվ 71-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենդանիների կարմիր գիրքը հաստատելու մասին» (29.01.2010 թվական):
- ✓ ՀՀ կառավարության թիվ 1059-Ա որոշումը «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին»(25.09.2014):
- ✓ ՀՀ կառավարության թիվ 781-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» (14.08.2014 թվական):
- ✓ ՀՀ կառավարության թիվ 438 որոշումը «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման» կարգի վերաբերյալ (20.04.2002 թվական):
- ✓ Շրջակա միջավայրի նախարարի թիվ N246-L հրամանը «Ասբեստ պարունակող նյութերի հետ վարվելու ուղեցույցն ընդունելու մասին » (28.07.2020 թվական):

**Աշխատանքային առողջության և անվտանգության վերաբերյալ օրենսդրություն**
<u>Օրենսգրքեր և օրենքներ</u>

31. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքը (2005 թվական),
32. «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (1998 թվական):

<u>Այլ իրավական ակտեր</u>

- ✓ ՀՀ կառավարության թիվ 1631-Ն որոշումը անհատական պաշտպանական միջոցների վերաբերյալ (2004 թվական):
- ✓ ՀՀ կառավարության թիվ 1089-Ն որոշումը բժշկական զննության վերաբերյալ (2004 թվական):
- ✓ ՀՀ կառավարության թիվ 2390-Ն որոշումը «Մեքենաների և մեխանիզմների անվտանգությանը ներկայացվող պահանջների վերաբերյալ» (2006 թվական):
- ✓ ՀՀ կառավարության թիվ 286 որոշումը «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» (12.04.2001 թվական):
- ✓ ՀՀ առողջապահության նախարարի թիվ 15-Ն հրամանը «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին (19.09.2012 թվական):
- ✓ ՀՀ քաղաքաշինության նախարարի հրամանը ՀՀՇՆ[5] IV-11.07.01-2006 (ՄՇՆ[6] 3.02-05-2003) «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերի հաստատման մասին»:

---

[5] ՀՀՇՆ - Հայաստանի Հանրապետության շինարարական նորմեր:
[6] ՄՇՆ – Միջազգային շինարարական նորմեր:

## Միջազգային բնապահպանական կարգավորումներ

**Հայաստանի մասնակցությունը միջազգային բնապահպանական կոնվենցիաներին և արձանագրություններին**

33. Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է ավելի քան 35 միջազգային կոնվենցիա, որոնցից 24-ը վավերացվել են 1993 թվականից: Առաջարկվող Ծրագիրը սքրինինգի է ենթարկվում այս միջազգային պարտավորություններին համապատասխանության մասով: Բացահայտումն այն է, որ դրանցից ոչ մեկը չի խախտվելու:

34. Վտանգավոր նյութերի հետ աշխատելու առումով Հայաստանի Հանրապետության կառավարությունը վավերացրել է Ստոկհոլմի կոնվենցիան և հանդիսանում է Բազելի կոնվենցիայի կողմ: ՀՀ կողմից ստորագրված և վավերացված միջազգային բնապահպանական կոնվենցիաների և արձանագրությունների ամբողջական ցանկը ներկայացված է Հավելված 2-ում:

35. Միջազգայնորեն ճանաչված ստանդարտները պետք է կիրառվեն այն դեպքում, երբ տեղական ստանդարներ չկան, իսկ միջազգային ուղեցույցները պետք է կիրառվեն այն ժամանակ, երբ նախնական ելակետային տվյալներն արդեն իսկ գերազանցում են ազգային օրենսդրական չափանիշները ազգային ուղեցույցներ չլինելու դեպքերում: Բոլոր նման դեպքերում, ՇՄՆՈւ հաշվետվությունը կհիմնավորի կոնկրետ ծրագրի կամ տեղամասի համար ընտրված մակարդակներն ու մոտեցումները:

**ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթուղթը (ԱՄՔՓ, 2009 թվական)**

36. Գնահատումն իրականացվել է համաձայն Հայաստանի կառավարության ու ԱԶԲ-ի միջև համաձայնեցված ԱՄՔՓ 2009-ի, Բնապահպանական գնահատման ուղեցույցների (2003 թվական) և Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակի (ԲԳՈւՇ): Միջազգայնորեն ճանաչված ստանդարտներն ու ուղեցույցները կիրառվել են այն դեպքերում, երբ տեղական ստանդարտներ չեն եղել: Դա ներառում է Համաշխարհային բանկի խմբի «Բնապահպանական, առողջապահական և անվտանգության ընդհանուր ուղեցույցները» (2007 թվական):

37. ԱՄՔՓ 2009-ը նկարագրում է ԱԶԲ-ի անվտանգության մեխանիզմների ընդհանուր նպատակները, սահմանում է քաղաքականության սկզբունքները և նախանշում ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերի իրականացման գործընթացը: Այն նաև սահմանում է ազդեցության գնահատման (ԱԳ) պահանջները բոլոր ծրագրերի համար: Կախված ծրագրի ազդեցությունների և ռիսկերի նշանակությունից՝ գնահատումը կարող է կազմված լինել A կատեգորիայի ծրագրերի համար շրջակա միջավայրի վրա ազդեցության ամբողջական գնահատումից (ՇՄԱԳ), շրջակա միջավայրի նախնական ուսումնասիրությունից (ՇՄՆՈւ) կամ B կատեգորիայի ծրագրերի համար համարժեք գործընթացից: Գնահատման մանրամասնության և համապարփակության մակարդակը ուղղակիորեն կապված է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների և ռիսկերի նշանակության հետ: Քաղաքականության հիմնական սկզբունքներից մեկը առաջարկվող յուրաքանչյուր ծրագրի համար հնարավորինս շուտ սքրինինգ կիրառելն է՝ բնապահպանական գնահատման համապատասխան չափն ու տեսակը որոշելու համար, որպեսզի կատարվեն հնարավոր ազդեցությունների և ռիսկերի նշանակությանը համարժեք՝ համապատասխան ուսումնասիրություններ:

**Սքրինինգ և դասակարգում**

38. ՍԱԲԾ-ի ինստիտուցիոնալ համակարգերը կկիրառվեն Ծրագրի նկատմամբ: Ծրագրի անվտանգության մեխանիզմների համակարգերի գնահատումը (ԾԱՄՀԳ) պատրաստվել է

ՍԱԲԾ-ի համար, և թարմացվել լրացուցիչ ֆինանսավորման նպատակով: Վերհանված ռիսկերի մեղմանն ուղղված PSSA-ի գործողությունների մեծ մասն իրականացվել է ՍԱԲԾ-ի իրականացման ընթացքում, իսկ ինստիտուցիոնալ կարողություններն ու համակարգերը ստեղծվել են  բնապահպանական և սոցիալական ազդեցությունները կառավարելու համար: Շինարարական տեղամասերում տեղայնացված ծրագրի շրջանակում՝ շինարարական աշխատանքների ընթացքում ակնկալվում են ժամանակավոր բացասական ազդեցություններ, որոնք կարող են մեղմվել շինարարության կառավարման լավ գործելակերպերի միջոցով: Հարկադիր տարաբնակեցում կամ բնիկ ժողովուրդների վրա որևէ ազդեցություն չի նախատեսվում, քանի որ դպրոցի շենքի վերակառուցումը/ամրակայումը տեղի կունենա գոյություն ունեցող վայրում, իսկ Հայաստանը միատարր է իր էթնիկ կազմով: Սոցիալական երաշխիքների նկատմամբ պատշաճ ուսումնասիրությունը հաստատել է հողերի օտարման և տարաբնակեցման ազդեցության բացակայությունը և առաջարկել մեղմման միջոցառումներ ցանկացած հնարավոր խնդրի համար, որ կարող է առաջանալ շինարարության փուլում: Ծրագրի անվտանգության մեխանիզմների դասակարգումը համարվում է կատեգորիա B շրջակա միջավայրի, կատեգորիա C՝ հարկադիր տարաբնակեցման և կատեգորիա C՝ բնիկ ժողովուրդների մասով:

## Ծրագրի իրականացման շրջանակ

39. ՍԱԲԾ-ի համակարգերը և իրականացման պայմանավորվածությունները կպահպանվեն Ծրագրի համար: Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (ՀՏԶՀ) լինելու է Ծրագրի գործունեության ամենօրյա կառավարման համար պատասխանատու իրականացնող մարմինը: ՀՏԶՀ-ն ամբողջությամբ համալրված է անհրաժեշտ մասնագետներով և ղեկավարվում է լրիվ դրույքով աշխատող գործադիր տնօրենի կողմից: ՏԿԵՆ-ը կլինի կատարող մարմինը և կվերահսկի իրականացումը: ՍԱԲԾ-ի ղեկավար կոմիտեն կհամակարգի իրականացումը և կդյուրացնի Ծրագրին առնչվող որոշումները և կառավարության կողմից հաստատման ընթացակարգերը: ՀՏԶՀ-ի Կառավարման խորհուրդը կհաստատի ազգային քաղաքականության ուղեցույցները և կտրամադրի ռազմավարական առաջնորդություն ու աջակցություն

40. ՀՏԶՀ-ն կներգրավի արհեստավարժ ճարտարագիտական նախագծման և տեխնիկական հսկողության ընկերությունների՝ մանրամասն ճարտարագիտական նախագծի պատրաստման և շինարարական գործունեության ամենօրյա վերահսկողության համար: Ընկերությունները համալրված կլինեն շրջակա միջավայրի և առողջապահության ու անվտանգության ոլորտների փորձագետներով՝ Ծրագրի պահանջների պահպանմամբ համապատասխան ասպեկտներն ընդգրկելու համար: Գլխավոր ճարտարագետը/տեխնիկական ոլորտի վերադասը կապահովի և կվերահսկի Ծրագրի շինարարությունը, ներառյալ՝ ԲԿՊ-ի իրականացումը շինարարության և թերությունների վերացման ժամկետի ընթացքում, կկառավարի պայմանագրային փոփոխությունները, պահանջները և շրջանակի վերանայումները:

41. Շինարարության կապալառուն՝

i. կիրականացնի ԲԿՊ-ն,
ii. մեկ լրիվ դրույքով վարձու աշխատանքի կվերցնի բնապահպանության ու սոցիալական ոլորտի մասնագետի և մեկ լրիվ դրույքով՝ առողջապահության ու անվտանգության ոլորտի մասնագետի, կամ մեկ լրիվ դրույքով բնապահպանության ու սոցիալական ոլորտի մասնագետի, ով կունենալ փորձ առողջապահության և անվտանգության ոլորտում, ինչը սահմանվում է մրցութային փաստաթղթում,
iii. կես դրույքով վարձու աշխատանքի կվերցնի սողուններով գծով մասնագետի (հերպետոլոգ)՝ անձնակազմին վերապատրաստելու, և օձերի ու այլ սողունների առանձնյակներին հավաքելու  ու մեկուսացնելու համար, եթե այդպիսիք դիտարկվեն:

iv. անհապաղ կտեղեկացնի տեխնիկական ոլորտի վերադասին և արտակարգ իրավիճակների համապատասխան մարմիններին արտակարգ իրավիճակների և պատահարների կամ արտասովոր իրավիճակների դեպքում,

v. ծեռք կբերի թույլտվություններ և հաստատումներ համապատասխան գերատեսչություններից և պատճենները կտրամադրի տեխնիկական ոլորտի վերադասին,

vi. կմշտադիտարկի շինարարական աշխատանքները և կտրամադրի Ուղղիչ միջոցառումների հաշվետվություններ,

vii. կզեկուցի բնապահպանական ծրագրի մասին, ինչպես նախատեսվում է ՇՄՆՈՒ-ում/ԲԿՊ-ում:

42. ԱԶԲ-ն մոնիթորինգի կենթարկի իրականացումը և կարող է իրականացնել պարբերական վերանայումներ և ստուգումներ՝ ԱՄՔՓ 2009 -ում ամրագրված սկզբունքներին և պահանջներին համապատասխան: ԱԶԲ-ն կաջակցի ՀՏԶՀ-ին սոցիալական և բնապահպանական ազդեցություններն ու ռիսկերը կառավարելու հարցում: ԱԶԲ-ն նաև կիրապարակի Ծրագրի տեղեկատվությունը ՇՄՆՈւ-ի և ԲԿՊ-ի անգլերեն տարբերակները, ինչպես նաև Բնապահպանական մոնիթորինգի տարեկան հաշվետվությունները իր կայքում տեղադրելու միջոցով: Ստորև ներկայացված են ԱԶԲ-ի պարտականությունները Ծրագրի տարբեր փուլերում.

<u>Նախաշինարարական փուլ.</u>

i. Վերանայել ծրագրի սքրինինգի արդյունքները և հաստատել ծրագրի դասակարգումը,

ii. Վերանայել և հաստատել ՇՄՆՈՒ-ն առանց որևէ առարկության,

iii. Հրապարակել ՇՄՆՈՒ-ի հաշվետվությունը հանրության համար՝ այն ԱԶԲ-ի կայքում տեղադրելու միջոցով:

<u>Շինարարության փուլ.</u>

iv. Վերանայել տարեկան հաշվետվությունները և տրամադրել անհրաժեշտ խորհրդատվությունը ՀՏԶՀ-ին,

v. Իրականացնել տարեկան բնապահպանական վերանայում ծրագրի համար:

<u>Հետշինարարական փուլ.</u>

vi. Վերանայել հետշինարարական աուդիտի հաշվետվությունը և տարեկան հաշվետվությունները մինչև ծրագրի ավարտի հաշվետվության թողարկումը:

## III. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

### Ընդհանուր նախապատմություն

43. Ծրագիրը ֆինանսավորում է Արմավիրի մարզի Ոսկեհատի միջնակարգ դպրոցի նախագծումը և վերակառուցումը. Ոսկեհատը գտնվում է Արմավիր քաղաքից (մարզի վարչական կենտրոն) 28 կմ և Երևանից մոտ 20 կմ հեռավորության վրա: Դպրոցն ունի 1-3 հարկանի 5 մասնաշենք: Դպրոցի շենքերը գտնվում են անգործածելի ֆիզիկական վիճակում և ընդգրկված են ԴԱՎԾ-ում: Դպրոցը կարող է տեղավորել 355 աշակերտի: 2023 թվականին դպրոցում սովորել է 7-ից 18 տարեկան 290 աշակերտ: Ոսկեհատի դպրոցի աշխատակիցների թիվը 39 է, որից կանայք կազմում են 84,7%-ը, իսկ տղամարդիկ՝ 15,3%-ը:

44. Հիմք ընդունելով նախնական տեսողական դիտարկումները՝ շենքը կամրակայվի: Դպրոցը կլինի պիլոտային՝ i) սեյսմիկ անվտանգության մասով նորարարական ճարտարագիտական լուծումներով, ii) կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության միջոցառումներով, iii) հաշմանդամություն ունեցող անձանց համար ներառականությամբ, iv) 21-րդ դարի կրթությանը և մանկավարժական չափանիշներին հարիր նախագծով, v) դպրոցական ժամերից հետո համայնքային գործունեության համար վերափոխվող հարմարություններով/տարածքներով: Ավարտին հասցված շենքի համար

կմշակվի և կգործարկվի շենքերի պահպանման համապատասխան ուղեցույց, որը կկրկնօրինակվի այլ դպրոցներում:

### Ծրագրի տեղադիրքը

45. Ոսկեհատը Հայաստանի Արմավիրի մարզում գտնվող գյուղերից է: Գյուղը հիմնադրվել է 1930-ականների սկզբին: Գյուղը գտնվում է Արմավիրի մարզի արևելյան մասում, Մ3 մայրուղուց արևելք, մարզի վարչական կենտրոն Արմավիրից 28 կմ հեռավորության վրա: Ծովի մակարդակից բացարձակ բարձրությունը կազմում է 850 մետր[7]:

46. Տարածքը գտնվում է տաք կլիմայական գոտում և ունի խիստ մայրցամաքային կլիմա՝ տաք ամառներով և ցուրտ, առանց քամիների ձմեռներով: Ամառը երկար է, մայիսից մինչև հոկտեմբեր, օդի միջին ամսական ջերմաստիճանը հասնում է 24°C-ից մինչև 26°C-ի, իսկ առավելագույնը՝ 42°C-ի: Տարվա ամենատաք ամիսը օգոստոսն է, որի միջին ջերմաստիճանը 25.4°C է: Ձմեռները սկսվում են դեկտեմբեր ամսվա կեսերին: Հունվարը ամենացուրտ ամիսն է, որի միջին ջերմաստիճանը կազմում է -1.8°C: Ձմռանը նվազագույն ջերմաստիճանը 5°C է: Ոսկեհատում միջին ջերմաստիճանը 11.8°C է: Այստեղ տեղումները կազմում են տարեկան մոտ 377 մմ: Ոսկեհատում տարվա ընթացքում հաշվվում է շուրջ 3624.43 արևային ժամ: Միջին հաշվով ամսական կտրվածքով լինում է 119.04 ժամ արևային լույս[8]:

47. Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, այգեգործությամբ, բանջարաբուծությամբ և անասնապահությամբ:

48. 2011 թվականի մարդահամարի տվյալներով՝ գյուղի բնակչությունը կազմում է 3491 մարդ (2001 թվականի մարդահամարի 2369-ի համեմատ), որից 1672-ը տղամարդիկ են, իսկ 1819-ը՝ կանայք:

**Գծապատկեր1. Google-ի պատկեր՝ Ոսկեհատի միջնակարգ դպրոցի տեղադիրքով**




---

[7] Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան. «Գեոդեզիայի և Քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ. Երևան, 2008 թվական. 162-րդ էջ: https://web.archive.org/web/20140912150541/http://www.cadastre.am/storage/files/pages/pg_907871769_HH_bnak._bar..pdf

[8] https://en.climate-data.org/asia/armenia/armavir/voskehat-640488/

## Առկա կառույցների նկարագրություն

49. Նախատեսվող շինարարական աշխատանքները կմեծացնեն դպրոցի շենքերի սեյսմակայունությունը: Միջամտության տեսակը (վերակառուցում կամ ամրակայում) կորոշվի դպրոցի շենքերի մանրամասն գնահատումից հետո, և այդ որոշման հիման վրա կպատրաստվի մանրամասն նախագիծը: Դպրոցի հիմնական մասնաշենքը բաղկացած է երեք բաժիններից/շենքերից՝ մեկ հարկանի շենք կրտսեր դասարանների համար, եռահարկ շենք միջին և ավագ դասարանների համար և երկու մասնաշենքերն իրար միացնող միջանցք, որն ունի վարչական և տեխնիկական սենյակներ: Դպրոցի տարածքը բավականին մեծ է, մինչդեռ հիմնական մասնաշենքը զբաղեցնում է տարածքի ընդամենը 51%-ը: Պահեստը, կաթսայատունը, դպրոցի չգործող սանհանգույցը, հրաձգարանը և լողավազանը դպրոցի սեփականությունն են, որոնք նույնպես գտնվում են դպրոցի տարածքում՝ զբաղեցնելով ընդհանուր տարածքի 15%-ը:

50. Ծրագրի շրջանակներում ազդեցության ենթակա հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 3.1169 հա: Դպրոցի հողամասը հանդիսանում է պետական սեփականություն: Դպրոցի տարածքը պարսպապատված է: Հողամասի ձախ կողմից՝ 10 մ հեռավորության վրա գտնվում է գերեզմանոցը: Տարածքի հետնամասում համայնքային ճանապարհը (5 մետր լայնությամբ) դպրոցի տարածքը բաժանում է առանձնատներից և մասնավոր ջերմոցից: Աջ կողմում դպրոցի սահմաններից մոտ 50 մ հեռավորության վրա գտնվում են մշակովի հողատարածքներ և առանձնատներ: Առկա իրավիճակի լուսանկարները ներկայացված են «Հավելված 9. Լուսանկարներ» բաժնում:

51. Դպրոցի ներկայիս շենքերը պատմամշակութային արժեք չեն ներկայացնում և ընդգրկված չեն պատմամշակութային հուշարձանների ցանկում: Դպրոցի շինարարական տարածքը ներառված չէ հատուկ պահպանության ենթակա գոտիների ցանկում և չի հանդիսանում հատուկ կարգավորման օբյեկտ: Կառուցապատման տարածքում չկա բիզնես գործունեություն, հողատարածքն ամբողջությամբ օգտագործվում է Ոսկեհատի դպրոցի կողմից:

52. Միջնակարգ դպրոցի էներգիայի (էլեկտրաէներգիայի) մատակարարումը կազմակերպվում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության հետ մատակարարման պայմանագրով:

53. Բնական գազի մատակարարումն իրականացնվում է «Գազպրոմ Արմենիա»-ի կողմից:

54. Միջնակարգ դպրոցի ջրամատակարարումը կազմակերպվում է «Վեոլիա Ջուր» ընկերության հետ կնքված մատակարարման պայմանագրով: Կոյուղաջրերը թափվում են գործող կոյուղու համակարգ, որը պատկանում է Ոսկեհատ համայնքին և սպասարկվում նրա կողմից: Համայնքի կոյուղու համակարգը գտնվում է վատ վիճակում, մաքրման կայանը վնասվել է և մի քանի տարի է, որ չի գործում, ինչի արդյունքում չմաքրված կոյուղաջրերը լցվում են մոտակա ջրահեռացման համակարգ:

55. Դպրոցի տարածքում կա արտեզյան ջրհոր, որը էլեկտրական պոմպի միջոցով դուրս է մղում ստորերկրյա ջրերը մոտակա գյուղական տնային տնտեսությունների ոռոգման կարիքների համար: Հորը սպասարկվում է տեղական ջրօգտագործողների կազմակերպության կողմից: Թեև ջրհորը գտնվում է դպրոցի տարածքում, սակայն ոռոգման համակարգի բացակայության պատճառով դպրոցի կանաչ տարածքները չեն ոռոգվում:

**Գծապատկեր 2.Դպրոցի տարածքի Google պատկերը**




## Աշխատանքների նկարագրություն

56. Հայեցակարգային նախագիծը և մանրամասն նախագիծը կպատրաստվեն ազգային ճարտարագիտական նախագծային ընկերության կողմից, որը կհավաքագրվի մրցակցային ընտրության միջոցով: Ընկերությունը կառաջնորդվի միջազգային փորձառու ճարտարագետ-նախագծողի և ճարտարապետի կողմից, ովքեր կունենան շենքերի ժամանակակից և ծախսարդյունավետ սեյսմիկ նախագծման տեխնոլոգիաների մասով լավ գիտելիքներ և փորձ: Մանրամասն նախագծի վրա հիմնվելով՝ ԾՄՆՈւ-ն կթարմացվի ՀՏԶՀ-ի կողմից և կներառվի մրցութային փաստաթղթերի գնառաջարկի փաստաթղթերում:

57. Ոսկեհատի միջնակարգ դպրոցի վերակառուցումը կնախագծվի այնպես, որպեսզի տեղավորի ընդհանուր առմամբ 290 աշակերտի: Նախագիծը կներառի հետևյալ բաղադրիչները. (i) հիմնական դպրոցի շենքը, (ii) արևային էներգիայի կայանը (արևային ֆոտովոլտային վահանակներ և արևային ջրատաքացուցիչ), (iii) կաթսայատունը, (iv) սպորտային տարածքը, (v) պահեստը և (vi) ) դպրոցի տարածքը: Կստեղծվի կաթիլային ոռոգման համակարգ՝ պայմանով, որ ծախսերի մանրամասն գնահատման և իրագործելիության գնահատման վերջնարդյունքը լինի դրական:

58. Դպրոցը կամրացվի՝ ՄՍԿ երկրաշարժերի ուժգնության սանդղակի 9 (IX) բալ ուժգնությամբ երկրաշարժի անվտանգության չափանիշներին համապատասխանելու նպատակով: Դպրոցը կահավորված կլինի վերելակով, հաշմանդամության անվասայլակի համար հասանելիությամբ, առանձին սեռերի համար նախատեսված զուգարաններով և հատուկ զուգարաններով շարժունակության խաթարում/հաշմանդամություն ունեցող աշակերտների համար: Դպրոցի բոլոր մասնաշենքերը կապահովվեն հրդեհաշիջման սարքավորումներով և հիդրանտներով, ինչպես նաև՝ տարհանման ելքերով: Բոլոր հարկերում սանդուղքները և

տարհանման ելքերը նախագծված կլինեն գործող նորմերին համապատասխան և կհամապատասխանեն սեյսմիկ ու հակահրդեհային պաշտպանության պահանջներին: Դպրոցը կլինի ջերմամեկուսացված՝ համաձայն գործող նորմերերի: Դպրոցը ջեռուցվելու է դպրոցի տարածքում կառուցված անհատական գազի ջեռուցման համակարգի միջոցով: Նախատեսվում է բարելավել դպրոցի ողջ տարածքը, որը կներառի բացօթյա մարզահրապարակ, հանգստի գոտիները և կանաչապատում: Նորակառույց շենքի տանիքին կտեղադրվեն արևային վահանակներ, և արտադրված էներգիան կօգտագործվի դպրոցի էլեկտրամատակարարման համար, իսկ ավելորդ էներգիան կվաճառվի էլեկտրացանցին: Տաք ջրի մատակարարման համար կտեղադրվեն նաև ջերմամեկուսացված արևային կոլեկտորներ: Նախատեսվում է տեսահսկման համակարգ, որի օգնությամբ կիրականացվի դպրոցի ներքին և արտաքին վերահսկողությունը: Դպրոցը ներկայումս գործում է և ապահովված է էլեկտրականությամբ, գազով, ջրամատակարարմամբ և այլ ենթակառուցվածքներով: Այս համակարգերում չի նախատեսվում որևէ փոփոխություն: Դրանց ապահովումը շինարարության և շահագործման փուլերում կիրականացվի գործող պայմանագրերի համաձայն:

Շինարարության կազմակերպում

59. Նախքան շինարարական աշխատանքները սկսելը կապալառուն պետք է ունենա լավ ծրագրված շինարարական լոգիստիկա և բոլոր անհրաժեշտ համաձայնությունները առկա կոմունիկացիաների, էլեկտրահաղորդման գծերի և գազատարների հատման, շինարարական թափոնների տեղափոխման, առկա ճանապարհների տարածքում շինարարական աշխատանքների (եթե այդպիսիք կան) և այլնի վերաբերյալ: Պատշաճ նախապատրաստական աշխատանքները կնախորդեն շինարարական աշխատանքների մեկնարկին և կներառեն. (i) շինարարական տեղամասի արտաքին տարածքի սահմանազատում ժամանակավոր ցանկապատով, լուսավորության և արգելափակման նշանների տեղադրում, (ii) մաքրում և յուրացում, և (iii) ժամանակավոր շենքերի տեղադրում շինարարական տեղամասի սահմաններում՝ բաց տարածքի վրա: Առաջարկվում է տրամադրել հատուկ կոնտեյներային տիպի շենքեր, ինչպիսիք են՝ ճարտարագետների համար գրասենյակը, շարժական տնակը հանգստի համար, գործիքների պահեստը, մեխանիկական արտադրամասը, չոր պահարանը, կիսափակ մթերանոցը, հանդերձարանը: Ժամանակավոր տնտեսական շինությունների և օբյեկտների վերջնական ցանկը կորոշվի շինարարության ընթացքում: Շինարարական աշխատանքներում ներգրավված աշխատուժը պետք է հիմնականում լինի բարձր որակավորում ունեցող մասնագետների թիմ: Ոչ հմուտ աշխատուժի օգտագործումը պետք է հասցվի նվազագույնի: Շինարարության ընդհանուր ղեկավարումն իրականացնելու են շինարարական տեղամասի ղեկավարը և աշխղեկը: Շինարարության ընթացքում պահանջվող աշխատողների առավելագույն թիվը հաշվարկվել է մոտ 60 մարդու չափով: Շինարարական աշխատանքները կիրականացվեն շինարարության անվտանգության ազգային կարգավորումների և ԱԶԲ-ի պահանջների խստիվ պահպանմամբ: Քանդման ժամանակ տանիքի և պատերի փլուզումը կանխելու համար կօգտագործվեն ժամանակավոր հենարաններ և պատվարներ, իսկ անվտանգության գծով ճարտարագետի առկայությունը կլինի պարտադիր: Կօգտագործվեն անվտանգության ցանցեր և կձեռնարկվեն այլ միջոցներ՝ շենքն ապամոնտաժելու ժամանակ աշխատողներին վայր ընկնելուց կամ առարկաների անկումից պաշտպանելու համար: Շինարարությունը կիրականացվի ավանդական եղանակներով՝ շինարարական ընկերության սեփական շինարարական մեքենաների ու մեխանիզմների օգտագործմամբ, իսկ դրանց բացակայության դեպքում՝ այլ կազմակերպություններից վարձակալության միջոցով: Շինարարական տեղամասը, ներառյալ՝ շինանյութերի ժամանակավոր պահեստարանը, թափոնների պահեստավորման տարածքները և այլնը, պետք է կազմակերպվեն բացառապես դպրոցի վարչական տարածքի սահմաններում: Շինաղբը շինարարական տեղամասից կանոնավոր կերպով կտեղափոխվի տեղական իշխանությունների կողմից նշանակված վայր՝ ծածկված բեռնատարներով:

## IV. ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

60. Ինչպես ԱԶԲ-ի ԱՄՔՓ-ով (2009 թվական), այնպես էլ՝ Հայաստանի օրենսդրությամբ պահանջում է Ծրագրի իրագործելի այլընտրանքների դիտարկում՝ ծրագրի տեղադիրքի և նախագծի առումով, ինչը թույլ կտա առաջարկել միջոցներ հնարավոր բնապահպանական ազդեցություններից խուսափելու կամ դրանք կանխելու նպատակով: Ոսկեհատի միջնակարգ դպրոցի վերակառուցման համար դիտարկվել է երկու տարբերակ. (i) «ոչ մի ծրագիր» (բիզնեսն՝ իր սովորական ընթացքով) տարբերակը (ii) «դպրոցի վերակառուցում» տարբերակը:

61. **«Զրոյական» կամ «ոչ մի գործողություն» տարբերակը** ներկա իրավիճակը թողնում է ինչպես որ կա: Այդ տարբերակում ակնկալվում է, որ դպրոցի գոյություն ունեցող օժանդակ կառույցները, որոնք արդեն իսկ վնասված են, ժամանակի ընթացքում կենթարկվեն հետագա վատթարացման՝ հավանականորեն վտանգելով դպրոցի սեյսմակայունությունը: Չնայած համայնքի բնակչության հնարավոր աճին, ավելի շատ աշակերտներ ընդունելու կարողությունը չի կարող ընդլայնվել: Այս իրավիճակը կարող է դժվարին կացության մեջ դնել համայնքի ղեկավարությանն ու ծնողներին. նրանք կա՛մ պետք է կազմակերպեն կրթական գործընթացը հարևան գյուղերում, կա՛մ դիտարկեն համայնքում նոր դպրոցի կառուցումը: Բացի այդ, հաշմանդամություն ունեցող աշակերտները կշարունակեն բախվել դասերին հաճախելու դժվարություններին: Սրան հակառակ, այս մոտեցման ընտրությունը կառաջարկի շինարարության ողջ ընթացքում բնական և սոցիալական միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները մեղմելու առավելությունը: Սա ներառում է այնպիսի խնդիրներից խուսափում, ինչպիսիք են հողային աշխատանքների արդյունքում առաջացած փոշին, գործարկվող մեքենաների և սարքավորումների արտանետումները, աղմուկի բարձր մակարդակը, համայնքային ճանապարհներին երթևեկության աճը, վերակառուցվող դպրոցից հարևան դպրոցներ աշակերտներին փոխադրելու անհրաժեշտությունը և այնտեղ նրանց կրթության կազմակերպումը շինարարության ողջ ժամանակահատվածում:

62. **«Դպրոցի վերակառուցման» տարբերակը** խոստումնալից է նվազագույնը 290 աշակերտի համար ապահով կրթական միջավայր ստեղծելու համար: Այս ծրագիրը ներառում է դպրոցի կառույցների վերակառուցում՝ միաժամանակ հաշվի առնելով տվյալ տարածաշրջանին հատուկ սեյսմիկ և այլ աղետային խոցելիությունները: Արդիականացված դպրոցը կհամապատասխանեցվի կառավարության էներգաարդյունավետության չափանիշներին և կունենա անվասայլակների համար հասանելի ուղիներ և տարբեր սեռերի համար առանձնացված զուգարաններ, որոնք թույլ կտան, որպեսզի երկրաշարժերից հետո շենքերը ծառայեն նաև որպես ապաստարան վնասված կամ հաշմանդամ անձանց համար: Էներգաարդյունավետ միջոցառումների, զորօրինակ՝ նոր շենքի տանիքին արևային մարտկոցների տեղադրման, տաք ջրամատակարարման համար ջերմամեկուսացված արևային կոլեկտորների և էներգաարդյունավետ լուսադիոդային լուսավորության ներառումը, կնպաստեն էներգիայի պահպանմանը և ածխածնի արտանետումների (CHS արտանետումների) կրճատմանը: Նախագծային լուծումները, ըստ էության, կապված են էկոլոգիական առավելությունների հետ՝ ներառելով ռեսուրսների խնայողության սկզբունքները, այդ թվում՝ ջուրը, նյութերը և էներգաարդյունավետությունը: Կանաչապատման նախաձեռնությունները ոչ միայն բարձրացնում են էկոլոգիական արժեքը, այլև օգնում են ջրհոսքերի ներթափանցմանը, կայունացնում են հողի կառուցվածքը, բարելավում տարածքի տեսողական գեղագիտական պատկերը և նպաստում աղմուկի նվազեցմանը: Համայնքային մակարդակում ակնկալվում են սոցիալ-տնտեսական ազդեցություններ շինարարության փուլում ՝ պայմանավորված տեղի բնակիչների համար ստեղծվող զբաղվածության հնարավորություններով: Հաշվարկվել է, որ շինարարության վրա միաժամանակ կաշխատի մոտ 60 աշխատող: Ակնկալվում է, որ ստացված աշխատավարձերը հիմնականում կվերաներդրվեն մարզում, ինչը կարող է դրականորեն ազդել աղքատության հաղթահարման գործընթացի վրա:

63. Հաշվի առնելով վերոնշյալ գործոնները և ընդունելով, որ անբարենպաստ ազդեցությունների մեծ մասը, ամենայն հավանականությամբ, կլինի անցողիկ և հիմնականում կսահմանափակվի շինարարության փուլով, հիմնավոր ճարտարագիտության և տեղամասի մանրակրկիտ կառավարման միջոցով հասանելի արդյունավետ մեղման միջոցով՝ գործողության նախընտրելի ուղղությունը կլինի «դպրոցի վերակառուցում» տարբերակը: Այս մոտեցումը երաշխավորում է մի քանի հիմնական առավելություններ, որոնք ներառում են՝ (i) դպրոցի կառույցում սեյսմակայունության և դրա ընդհանուր անվտանգության ստեղծում, (ii) աղետներին պատրաստվածության բարձր մակարդակ ինչպես աշակերտների, այնպես էլ՝ ուսուցիչների համար, (iii) հաշմանդամություն ունեցող աշակերտների համար հասանելիության մեծացում, (iv) հիգիենիկ և սանիտարական հարմարությունների ապահովում, (v) 21-րդ դարի կրթական պահանջներին հարիր օպտիմալ ուսումնական միջավայրի ստեղծում և (vi) կլիմայի համար անվտանգ էներգիայի արտադրության դյուրացում արևային վահանակների միջոցով:

## V. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

### Ընդհանուր շրջանակ

64. Ազդեցության գնահատումը և ՇՄՆՈւ-ի հաշվետվության պատրաստումը, ներառյալ՝ Բնապահպանական կառավարման պլանը (ԲԿՊ), կիրականացվեն մանրամասն նախագծի հիման վրա՝ Ծրագրի տարածքի ֆիզիկական, կենսաբանական, հնագիտա-մշակութային և սոցիալ-տնտեսական միջավայրի վերաբերյալ տեղեկատվության և տվյալների հավաքագրման, վերլուծության և հետագա թարմացման միջոցով: Միայն ելնելով արդյունավետության նպատակից՝ ազդեցության գնահատման համար անհրաժեշտ և օգտակար տվյալները հավաքագրվում են արժանահավատ գնահատման համար անհրաժեշտ մակարդակով: Ելակետային տվյալների և այլ տեղեկատվության հավաքագրումը սկսվում է հեշտ հասանելի առկա տվյալների գրասենյակային ուսումնասիրությունից: Այդ տվյալները, ներառյալ՝ կլիմայի, տեղագրության, երկրաբանության և հողերի, բնական ռեսուրսների, բուսական և կենդանական աշխարհի և սոցիալ-տնտեսական տվյալները ստացվում են հրապարակված և չհրապարակված աղբյուրներից: Տվյալներին առաջադրվող պահանջներն ուղղվում են շրջակա միջավայրի այն ասպեկտների վրա, որոնց վրա կարող են ազդել ծրագրի գործողությունները: Այդ նպատակով մշակվում է Տվյալների հավաքագրման պլան:

**Աղյուսակ 1. Տվյալների հավաքագրման պլան**

| | **Բնապահպանական պարամետրեր** | **Տվյալների աղբյուր** | **Դրսից եկած մասնագիտացված փորձագետ** |
|---|---|---|---|
| Օդի որակ | Կլիմա | CNRA II-7.01-2011 Շինարարության կլիմատալոգիա | Չկա, գրասենյակային ուսումնասիրություն |
| | Փոշի<br>Ծծմբի երկօքսիդ ($SO_2$)<br>Ազոտի երկօքսիդ ($NO_2$) | ՇՄՆ-ի ներքո գործող Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոնից ստացված տվյալներ | Չկա, գրասենյակային ուսումնասիրություն |

| | | | |
|---|---|---|---|
| Էկոլոգիական ռեսուրսներ | Բուսական աշխարհ, ներառյալ՝ ծրագրի ազդեցության գոտում գտնվող ծառերը | Կենսամիջավայրի տեսակների և Կարմիր գրքում գտնվող, վտանգված և/կամ էնդեմիկ տեսակների առկայության գրասենյակային ուսումնասիրություն:<br><br>Ծրագրի տեղամասով շրջելը և շինարարության գործընթացին խոչընդոտող՝ ծրագրի տարածքում եղած ծառերը հաշվելը | Չկա, գրասենյակային ուսումնասիրություն |
| Հող | Հողի վերին շերտ | Երկրաբանական հետազոտության զեկույց | Չկա, գրասենյակային ուսումնասիրություն |
| | Աղտոտված հող | Չկա | Չկա |
| Սոցիալական համակարգեր Բնակելի տներ Բիզնեսներ | Սոցիալ-տնտեսական տվյալներ | Լրացվել է հրապարակված կամ չհրապարակված տեղեկատվական աղբյուրների միջոցով<br><br>Ծրագրի տեղամասով քայլելը | Չկա |
| | Հողի օտարման և տարհանման ընթացակարգի ներքո գտնվող գույք (եթե այդպիսին կա) | Կադաստրային փաստաթղթեր | Չկա |
| | Հաղորդակցության մալուխների, ջրի, կոյուղու և գազի խողովակների, էլեկտրաէներգիայի սյուների և գծերի, ջրահեռացման համակարգերի առկայություն | Կոմունալ ծառայություն-ների հետազոտություն քննարկումներ ծառայություններ մատուցողների հետ, հանդիպումներ տեղամասում | Չկա |
| Նյութական ռեսուրսներ | Հետլիցքի նյութը ձեռք կբերվի գրանցված քարհանքերից | Նոր քարհանքեր/գրունտային փոսի տեղամասեր չեն բացվի | Չկա |
| Հնագիտական և մշակութային ժառանգություն | Հնագիտական տեղամասեր Մշակութային ռեսուրսներ | Գրասենյակային ուսումնասիրություն Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից ստացված տվյալները Ծրագրի տեղամասով շրջելը և հետազոտություն | Չկա |

### Կլիմա

65. Ծրագրի տարածքը գտնվում է Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրում: Մարզկենտրոնից հեռավորությունը կազմում է 28 կմ: Բնակավայրը գտնվում է Միջին Արաքսյան հարթավայրում, ծովի մակարդակից 850 մ բարձրության վրա[9]: Տարածքը գտնվում է տաք կլիմայական գոտում և ունի խիստ մայրցամաքային կլիմա՝ տաք ամառներով և ցուրտ, առանց քամների ձմեռներով: Ամառը երկար է, մայիսից հոկտեմբեր, օդի միջին ամսական ջերմաստիճանը հասնում է 24°C-ից՝ 26°C-ի, իսկ առավելագույնը՝ 42°C-ի: Տարվա ամենատաք ամիսը օգոստոսն է, որի միջին ջերմաստիճանը կազմում է 25.4°C: Ձմեռները սկսվում են դեկտեմբեր ամսվա կեսերին: Հունվարը ամենացուրտ ամիսն է, որի միջին ջերմաստիճանը 1.8°C է: Ձմռանը նվազագույն ջերմաստիճանը 5°C է: Ոսկեհատում միջին ջերմաստիճանը 11.8°C է: Այստեղ տեղումների քանակը կազմում է տարեկան մոտ 377 մմ: Ոսկեհատում տարվա ընթացքում հաշվվում է շուրջ 3624.43 արևային ժամ: Միջին հաշվով ամսական կտրվածքով լինում է 119.04 ժամ արևային լույս[10]: Բնական լանդշաֆտները կիսաանապատներ են, որոնք ոռոգման ընթացքում վերածվել են մշակելի-ոռոգելի լանդշաֆտի: Ագրոկլիմայական տեսակետից համայնքը գտնվում է բացարձակ ոռոգման գոտում:

66. Գեոմորֆոլոգիական տեսանկյունից՝ ուսումնասիրվող տարածքը գտնվում է Արարատյան միջլեռնային կուտակային դաշտահովտի հյուսիսային, հյուսիս-արևելյան հատվածներում:

### Երկրաբանություն

67. Երկրաբանական կառուցվածքը ներառում է ստորին-վերին չորրորդական բարձրության հրաբխային տուֆեր և խոշորահատիկ հողեր, որոնք ծածկված են ալյուվիալ խոշորահատիկ, կավային, ավազային և տեխնածին հողերով ներկայացված ժամանակակից նստվածքներով: Շինարարության տարածքում չկան արտածին երկրաբանական վտանգավոր երևույթներ, ինչպիսիք են՝ կարստը, փլուզումները, սողանքները, քարաթափումները և այլն: Տեղանքի երկրաբանության մասին ավելի մանրակրկիտ տեղեկատվություն կներկայացվի մանրամասն նախագծում:

### Տարածքի սեյսմիկ բնութագրերը

68. Սեյսմատեկտոնիկ տեսանկյունից՝ դպրոցի տարածքը գտնվում է բարդ սեյսմատեկտոնիկ կառուցվածք ունեցող տարածքում: Երևանի խորքային խզվածքն անցնում է Զվարթնոց օդանավակայանի հարակից տարածքով, որին միացված է Փարաքարի երկրաշարժի հիպոկենտրոնը: Այս տեղանքի հարակից տարածքով են անցնում նաև Գառնու և Արաքսյան ակտիվ խզվածքները, որոնք կապված են Գառնիի, Դվինի և Արարատի՝ մինչև 10 ՄՍԿ սանդղակի ուժգնությամբ ուժեղ երկրաշարժային օջախների հետ: Ծրագրի տարածքում տեղամասի սեյսմոլոգիայի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն կներկայացվի մանրամասն նախագծում:

### Օդի որակը

69. Օդային ավազանների աղտոտվածության մոնիթորինգի աշխատանքներն իրականացվում են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոնի կողմից: Փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և հողային մակարդակի օզոնի դիտարկումներն իրականացվում են Երևան քաղաքում: Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի տեղադիրքը մոտ է մայրաքաղաք Երևանին, որտեղ կան 45 շարժական դիտակետեր և 5 ստացիոնար դիտակայաններ: Ըստ Երևանի մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի տվյալների՝ ազոտի երկօքսիդի և ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցում համապատասխան ՍԹԽ-ին (սահմանային թույլատրելի

---

[9] Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան. «Գեոդեզիայի և Քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ. Երևան, 2008 թվական. 162-րդ էջ:

[10] https://en.climate-data.org/asia/armenia/armavir/voskehat-640488/

խտությունները)[11]: Դիտարկվել են փոշու խտությունններների որոշակի աննշան ավելացումներ, ինչը կարող է պայմանավորված լինել տրանսպորտային միջոցներով, ճանապարհների փոշով, շինարարական, գյուղատնտեսական և այլ աշխատանքներով: Աղմուկի և վիբրացիայի վերաբերյալ տվյալները կտրամադրվեն մանրամասն նախագծում:

## Մակերևութային և ստորգետնյա ջրային մարմիններ

70. Կառուցապատման տարածքում չկան մակերևութային ջրերի ջրամբարներ և ջրհոսքեր: Նախնական ուսումնասիրությունների արդյունքների համաձայն՝ պլանավորված գործունեության շուրջբոլորը ստորերկրյա ջրերը չեն հանդել մինչև 100 մ խորություն ունեցող հորերի միջոցով: Դպրոցի տարածքում գործում է արտեզյան ջրհոր, որը էլեկտրապոմպով դուրս է մղում ստորերկրյա ջրերը մոտակա գյուղական տնտեսությունների ոռոգման կարիքների համար: Թեև ջրհորը գտնվում է դպրոցի տարածքում, սակայն ոռոգման համակարգի բացակայության պատճառով սեփական կանաչ տարածքները չեն ոռոգվում:

## Էկոլոգիական ռեսուրսներ

71. Ծրագրի իրականացման տարածքը ներառված է Երևանի ֆլորիստիկական տարածաշրջանում, որտեղ հիմնականում տարածված են կիսաանապատային բուսածածկույթի քարքարոտ տեղերում աճող տարբերակները՝ օշինդրա-էֆեմերալ և հալոֆիլ, փսամմոֆիլ անապատային բուսատեսակներով: Տարածաշրջանում կենդանական աշխարհը ներկայացված է անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով: Երկկենցաղներից կան լճային գորտը, սիրիական սխտորագորտը, կանաչ դոդոշը, մողեսներից՝ կլորագլուխը, օձագլուխը և երկարոտ մողիթին, իսկ օձերից՝ կույր օձը, ռնգեղջյուր օձը: Թռչուններն ու միջատները բազմազան են: Թիթեռներից բնորոշ են սատիրները և խոշոր թիթեռները: Ոսկեհատի միջնակարգ դպրոցի տարածքում կա կանաչապատ լանդշաֆտ, որը հիմնականում կազմված է հաճարենուց, բարդուց, ակացիայից, դեկորատիվ թուջայից և պտղատու ծառերից (մոտ 70 ծառ և 30 թուփ): Կառուցվող դպրոցի տարածքում չկան Էնդեմիկ կամ Կարմիր գրքում ներառված բույսերի և կենդանիների տեսակներ, իսկ շրջակա տարածքի ուրբանիզացիայով պայմանավորված՝ տարածքով անցնող միգրացիոն ուղիներ չկան:

72. Ծրագրի գործունեության իրական վայրը գտնվում է ակտիվորեն կառուցապատված գոտում: Բոլոր աշխատանքներն իրականացվելու են դպրոցի սահմանազատված տարածքում: Նախատեսվում են կանաչապատման աշխատանքներ իրականացնել դպրոցի տարածքում, որտեղ կստեղծվի տարբեր տեսակի ծառերի համադրությամբ կանաչ գոտի: Կանաչապատման և բարեկարգման մանրակրկիտ պլանը կներկայացվի մանրամասն նախագծում: Շինարարության ընթացքում հողի վերին շերտը կհեռացվի և ժամանակավորապես կպահվի ու կօգտագործվի կանաչապատման համար:

## Սոցիալ-տնտեսական պայմաններ

73. Ոսկեհատը Հայաստանի Արմավիրի մարզի գյուղերից է: Գյուղը հիմնադրվել է 1930-ականների սկզբին: Գյուղի բնակչության մեծ մասը հայրենադարձներ են, ինչպես նաև Հայաստանի տարբեր մարզերից տեղափոխվածներ: Գյուղը գտնվում է Արմավիրի մարզի արևելյան մասում, M3 մայրուղուց արևելք, մարզի վարչական կենտրոն Արմավիր քաղաքից 28 կիլոմետր դեպի արևելք: Ծովի մակարդակից բացարձակ բարձրությունը 850 մետր է:

74. 2011 թվականի մարդահամարի տվյալներով՝ գյուղի բնակչությունը կազմում է 3492 մարդ (2001 թվականի մարդահամարի 2369-ի համեմատ), որից 1673-ը տղամարդիկ են, 1819-ը՝ կանայք[12]: Ըստ տարիքային կառուցվածքի՝ բնակչությունը բաշխված է հետևյալ կերպ՝ մինչև աշխատանքային տարիքի մարդիկ կազմում են բնակչության 25%-ը, աշխատունակ

---

[11] http://armmonitoring.am/page/5

[12] https://armstat.am/file/doc/99486813.pdf

բնակչությունը՝ 64%-ը և աշխատանքային տարիքից բարձրները՝ 11%-ը: Գյուղն ունի 753 գործող տնային տնտեսություն: Այն ունի դպրոց, գրադարան, բժշկական կենտրոն, փոստային բաժանմունք և համայնքային կենտրոն: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, այգեգործությամբ, բանջարաբուծությամբ, անասնապահությամբ: Գյուղատնտեսական հողատարածքներում վարելահողերն ունեն մեծ մասնաբաժին, կան պտղատու այգիներ, խաղողի այգիներ: Պետական հողերը հիմնականում օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր, բազմամյա տնկարկներ: Բնակչությունը զբաղվում է պտղաբուծությամբ, խաղողագործությամբ, դաշտավարությամբ, բանջարաբոստանային մշակաբույսերի մշակությամբ, թռչնաբուծությամբ, անասնապահությամբ: Համայնքը չունի ոռոգման ջուր, բարեկարգման կարիք ունեն մյուս հիմնական ենթակառուցվածքները, ինչպիսիք են՝ խմելու ջրի խողովակները և համայնքային ճանապարհները: Գյուղմթերքի շուկան բավականին զարգացած է:

## VI. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

75. Սույն բաժնում վեր են հանվում ծրագրի հնարավոր դրական ու բացասական ուղղակի և անուղղակի ազդեցությունների շրջանակը՝ ֆիզիկական, կենսաբանական, մշակութային, սոցիալ-տնտեսական (ներառյալ՝ աշխատանքային առողջությունն ու անվտանգությունը, համայնքի առողջությունը և անվտանգությունը, խոցելի խմբերը և գենդերային խնդիրները) ասպեկտների վրա, ինչպես նաև՝ կենսապահովման միջոցների վրա եղած ազդեցությունները: Համաշխարհային և գումարային ազդեցությունները նույնպես գնահատվում են որպես համապատասխան: Բացի այդ, վեր են հանվում կանխատեսումների հետ կապված անորոշությունները, և նշվում են այն թեմաները, որոնք լրացուցիչ ուշադրություն չեն պահանջում:

### Դրական ազդեցություններ

76. Ծրագրի նպատակն է վերակառուցել Ոսկեհատի միջնակարգ դպրոցը՝ առնվազն 290 աշակերտի համար անվտանգ կրթական միջավայր ապահովելու նպատակով: Դպրոցի շենքի կառուցվածքային տարրերը նախագծվելու են՝ հաշվի առնելով այս շրջանի սեյսմիկ և այլ աղետների ռիսկը: Դպրոցը նաև կհամապատասխանի էներգաարդյունավետության վերաբերյալ կառավարության պահանջներին, կունենա հաշմանդամների անվասայլակների համար մատչելի արահետներ և տարբեր սեռի աշակերտների համար առանձնացված զուգարաններ, որոնք հնարավորություն կտան դպրոցի շենքերն ավելի լավ օգտագործել որպես ապաստարան երկրաշարժից հետո վնասված կամ հաշմանդամություն ունեցող անձանց համար:

77. Նորակառույց շենքի տանիքին կտեղադրվեն արևային վահանակներ. արտադրված էներգիան կօգտագործվի դպրոցի էլեկտրամատակարարման համար, իսկ ավելորդ էներգիան կտրվի էլեկտրացանցին: Տաք ջրամատակարարում ապահովելու համար կտեղադրվեն նաև ջերմամեկուսացված արևային կոլեկտորներ: Այս միջոցառումները կնպաստեն էներգիայի խնայողությանը և CHS արտանետումների կրճատմանը:

78. Ոսկեհատի միջնակարգ դպրոցի նախագիծը կայուն է և էկոլոգիապես մաքուր շինանյութերի ընտրության հարցում: Նյութերի և հարդարման հետ կապված տարբեր նկատառումներ ներառում են.

i. Նախագիծն արտացոլում է շրջանային և տեղական ճարտարապետական առանձնահատկությունները:
ii. Ճարտարապետական ոճը համահունչ է ողջ համալիրում:
iii. Մոդուլային կաhույքի օգտագործումն առաջարկվում է ճկունություն ապահովելու և կազմակերպվածության զգացում ու տեսողական կարգուկանոն խթանելու համար:

iv. Բնական լուսավորությունը և օդափոխությունը գործնականում ապահովված են: Էներգաարդյունավետ լուսադիոդային լուսավորությունը պետք է նախատեսել արհեստական լուսավորության անհրաժեշտության դեպքում:
v. Տանիքները կառուցված են ֆոտովոլտային վահանակներ տեղադրելու համար:
vi. Դպրոցն ունի հարմարություններ համայնքին ոչ դպրոցական ժամերին սպասարկելու համար:

79. Բնական ռեսուրսների խնայողության առումով՝ էկոլոգիական օգուտները սերտորեն կապված են նախագծային լուծումների հետ, ինչպիսիք են, օրինակ՝ ջրի, նյութական և էներգախնայողության լուծումները: Կանաչապատման առավելությունները ներառում են էկոլոգիական արժեքի բարձրացումը, ջրհոսքերի ներթափանցման դյուրացումը, հողի կառուցվածքի կայունացումը, տեղանքի տեսողական գեղագիտական պատկերի բարելավումը և աղմուկի որոշակի կրճատման ապահովումը:

80. Շինարարության փուլում սպասվում են համայնքային մակարդակի սոցիալ-տնտեսական որոշ ազդեցություններ՝ պայմանավորված տեղացիների զբաղվածության հնարավորություններով: Այսպիսով, նվազագույնի կհասցվեն ոչ տեղացի աշխատողների կողմից այլ պարագաներում առաջացող սոցիալական խնդիրները: Նախատեսվում է, որ շինարարության վրա միաժամանակ կաշխատեն մոտ 60 աշխատողներ: Ստացված աշխատավարձը հիմնականում ծախսվելու է մարզում, ինչը որոշակի ազդեցություն կունենա աղքատության հաղթահարման գործընթացի վրա:

## Բացասական ազդեցություններ

81. Շինարարության ընթացքում կարող են տեղի ունենալ ժամանակավոր ազդեցություններ շրջակա բնական և սոցիալական միջավայրի վրա ինչպես տեղամասում, այնպես էլ՝ տեղամասից դուրս: Տեղամասում ազդեցությունները Ծրագրի ազդեցության գոտում իրականացվող շինարարական գործողությունների արդյունք են, մինչդեռ տեղամասից դուրս ազդեցությունները պայմանավորված են շինարարական տեղամասից դուրս իրականացվող գործողություններով, ինչպիսիք են՝ շինարարությանն առնչվող երթևեկությունը, ճամբարի ստեղծումը և ծրագրի հետ անմիջականորեն կապված այլ օբյեկտներ: Շինարարական աշխատանքները կարող են առաջացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն, ինչը բնորոշ է փոքր և միջին չափերի շինարարության համար: Գնահատումն իրականացվել է ծրագիրն իրականացնող թիմի հետ սերտ համագործակցությամբ, որը պարտավորվել է մեղմել բացասական ազդեցությունները մանրամասն նախագծման և շինարարության փուլերում: Մեղմման միջոցառումները և մոնիթորինգի պահանջները ներկայացված են ԲԿՊ-ում, որն ընդգրկում է ծրագրի գործողության ողջ ժամկետը, ներառյալ՝ նախագծման, նախաշինարարական, շինարարության, շահագործման և գործարկման փուլերը:

### Արժեքավոր բնապահպանական ընկալիչներ (ԱԲԸ)

82. Ծրագրի գործողությունները կարող են ազդել հասարակության և օրենսդրության կողմից արժևորվող բնական միջավայրի և սոցիալական համակարգերի բաղադրիչների վրա: Ազդեցության տարածքները կանխորոշվում են ծրագրի ազդեցության գոտիով, ինչը հնարավորություն է տալիս բացահայտել, թե ո՞ր ասպեկտները պետք է ներառվեն որպես ԱԲԸ-ներ: Ծրագրի ԱԲԸ-ները վերհանված են, և հնարավոր ռիսկերն ու դրանց նշանակությունը վերջնական տեսքի են բերվել բոլոր շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ համայնքի անդամների, Ծրագրի ազդեցության ենթակա անձանց, ՀԿ-ների և այլ կողմերի հետ քննարկման և հաղորդակցության միջոցով: ԱԲԸ-ի վրա Ծրագրի գործողությունների հետևանքով առաջացող Ազդեցությունների ուժգնությունը վերլուծվում են ստորև ներկայացված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Ազդեցությունների ժամանակավոր շրջանակ

| ԱԲԸ | Ազդեցություն | Նախա-գծման փուլ | Շինարարու-թյան փուլ | Գործարկման փուլ |
|---|---|---|---|---|
| Մթնոլորտային օդի որակ | հողային աշխատանքների արդյունքում առաջացած փոշին, մեքենաների և սարքավորումների շահագործման արդյունքում առաջացած գազի արտանետումները | Չկա | Որոշակի | Չկա |
| Աղմուկ | առաջանում է մեքենաների և սարքավորումների շահագործման և երթևեկության աճի արդյունքում | Չկա | Հավանական | Չկա |
| Վիբրացիա | առաջանում է մեքենաների և սարքավորումների շահագործման և երթևեկության աճի արդյունքում | Չկա | Հավանական | Չկա |
| Ստորգետնյա ջրերի որակ | վառելիքի, քսայուղերի (հիդրավլիկ, փոխանցման տուփ, շարժիչ և այլն), և այլ հեղուկ նյութերի և թափոնների ցողում կամ արտահոսք ոչ պատշաճորեն պահեստավորված նյութերից, լիցքավորման ժամանակ կամ այլ պատճառներով՝ ծանր մեքենաների շահագործման արդյունքում: | Չկա | Անհավանա-կան | Չկա |
| Բուսական աշխարհ և այլ բուսականու-թյուն | Տեսակների կորուստ՝ բուսականության ոչնչացման, ծառերի և թփերի հատման արդյունքում:<br>Աճելավայրի կորուստ կամ ոչնչացում՝ փորման, խտացման և հողի տեղափոխման աշխատանքների արդյունքում: | Չկա | Որոշակի | Չկա |
| Հողեր և հողի վերին շերտ | Հողային աշխատանքների արդյունքում հեռացված հողը և հողի վերին շերտը: Հողի էրոզիա և նստվածքակուտակում:<br>Հողի վարակում և աղտոտում հոսակորուստի միջոցով: | Չկա | Որոշակի | Չկա |
| Նյութական աղբյուրներ (քարհանքեր/ գրունտային | Հետլիցքի համար նյութերի փոխառում շրջակա միջավայրից, զորօրինակ՝ մերձակա գյուղատնտեսական հողերից: | Չկա | Անհավանա-կան | Չկա |

| | | | | |
|---|---|---|---|---|
| փոսի տեղամասեր) | | | | |
| Սոցիալական համակարգեր | Խաթարում և/կամ խանգարում | Չկա | Որոշակի | Չկա |
| | Գույքի վնաս | Չկա | Անհավանական | Չկա |
| Կոմունալ ծառայություններ | Վնասելու ռիսկ հողային աշխատանքների ընթացքում | Չկա | Հավանական | Չկա |
| Երթևեկություն և տրանսպորտ | Շինարարության փուլում երթևեկության աճ՝ շինանյութերի տեղափոխման, բեռնատարների և այլ մեքենաների պատճառով: Գործող ճանապարհների և հետիոտնային անցուղիների արգելափակում: Վտանգված հասարակական անվտանգություն: | Չկա | Որոշակի | Չկա |
| Լանդշաֆտի գեղեցկություն և գեղագիտական պատկեր | Փոփոխվում է հողային աշխատանքների, նյութերի և թափոնների կուտակումների, ծառերի և այլ բուսականության հեռացման, ժամանակավոր օբյեկտների ստեղծման արդյունքում | Չկա | Որոշակի | Հավանական չէ Բարելավված գեղագիտական պատկեր՝ պայմանավորված կանաչապատումով |
| Մշակութային ժառանգություն և հնագիտություն | Պատահական գտածոների վնասում և կորուստ | Չկա | Շատ անհավանական | Չկա |

83. Ազդեցության ուժգնությունը որոշելու համար հաշվի են առնվում հետևյալ չափորոշիչները և կիրառվում է միավորների համակարգ (տե՛ս Աղյուսակ 3):

**Աղյուսակ 3. Ազդեցությունների ուժգնության որոշման չափորոշիչներ**

| Չափորոշիչ | Դասակարգում/միավոր | | | |
|---|---|---|---|---|
| | 4 | 3 | 2 | 1 |
| Զգայունություն (ազդեցության չափը) | Բարձր | Չափավոր | Ցածր | Աննշան |
| Ազդեցության աստիճան | Միջազգային | Ազգային | Շրջանային | Տեղական |
| Ազդեցության տևողություն | Երկարաժամկետ (մշտական) | Միջնաժամկետ | Կարճաժամկետ | Անցումային |
| Ազդեցության հաճախականություն | Շարունական | Հաճախակի | Ոչ հաճախակի | Մեկ անգամ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ազդեցության հավանականություն | Որոշակի | Հավանական | Անհավանական | Շատ անհավանական |
| Ազդեցության հետադարձելիություն | Անհետադարձելի | Մասնակի հետադարձելի | Հիմնականում հետադարձելի | Լիովին հետադարձելի |

Ազդեցության տեսակը

84. Ազդեցությունների ուժգնությունը կախված է նաև ազդեցության տեսակից: Ծրագրի գործողությունները կարող են ազդել ԱԲԸ-ի վրա ուղղակիորեն կամ անուղղակիորեն, և դա ամփոփ ներկայացվում է ստորև՝ Աղյուսակ 4-ում:

**Աղյուսակ 4. Ծրագրի գործողության ուղղակի (Ու) և անուղղակի (Ա) ազդեցությունները ԱԲԸ-ի վրա**

| **Ծրագրի գործողություն** | **Մթնոլորտային օդի որակ** | | | **Հողեր, հողի վերին շերտ** | **Սոցիալական համակարգեր** | | | **Երթևեկություն** | **Բուսական աշխարհ** | **Լանդշաֆտ և գեղագիտական պատկեր** |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **Փոշի** | **Աղմուկ** | **Վիբրացիա** | | **Հասարակական ենթակառուցվածքներ** | **Բնակելի տներ** | **Բիզնեսներ** | | | |
| Գոյություն ունեցող կառույցների քանդում | Ու | Ու | Ու | - | I | I | I | I | I | Ու |
| Փորման հողային աշխատանքներ | Ու | Ու | Ու | Ու | Ա | Ա | Ա | Ա | Ու | Ու |
| Հետլիցք | Ու | Ու | Ու | - | Ա | Ա | Ա | Ա | Ա | Ու |
| Բետոնային աշխատանքներ | Ու | Ու | - | - | Ա | Ա | Ա | Ա | Ա | Ա |
| Կոմունալ ծառայությունների տեղափոխում և արտաուղղում | Ու | Ու | - | Ա | Ա | Ա | Ա | Ա | Ա | Ու |
| Ասֆալտապատում | Ու | Ու | Ու | - | Ա | Ա | Ա | Ա | Ա | Ու |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Դպրոցի շենքի շինա-րարություն | Ու | Ու | - | - | Ա | Ա | Ա | Ա | - | Ու |
| Պատի կառուցում | - | Ու | - | - | Ա | Ա | Ա | Ա | - | Ու |

Ազդեցության նշանակությունը

85. Ինչպես հետևում է Ազդեցությունների ուժգնության վերլուծությունից, կենսաֆիզիկական միջավայրի վրա ծրագրի ակնկալվող ազդեցությունները հիմնականում կլինեն ժամանակավոր և, ամենայն հավանականությամբ, տեղի կունենան միայն շինարարության ընթացքում: Ազդեցության նշանակությունը որոշվում է մեղմման միջոցառումով և առանց դրա, ինչն ամփոփվում և ներկայացվում է Աղյուսակ 5-ում: Ազդեցության ուժգնության նկարագրված ասպեկտների գնահատման մոդելից ստացվում են միավորներ 6-ից 24-ի միջակայքում: Ազդեցության ուժգնության մակարդակի նկարագրության համար օգտագործվում է քառակետ տերմինաբանություն՝ միավորների համախմբմամբ: Ուժգնության մակարդակների և միավորների խմբերի նկարագրիչները ներկայացված են ստորև՝ Աղյուսակ 5.1-ում:

### Աղյուսակ 5. Ազդեցությունների ուժգնություն

| ԱԲԸ | Ազդեցության չափը (զգայունություն փոփոխության նկատմամբ) | Ազդեցության աստիճան | Ազդեցության տևողություն | Ազդեցության հաճախականություն | Ազդեցության հավանականություն | Հետադարձելիություն | Ազդեցության ուժգնություն (միավորների խմբեր) | Նշանակությունը նախքան մեղմումը | Նկարագրություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Մթնոլորտային օդի որակ (փոշի և բանեցված գազեր) | 4 | 2 | 2 | 3 | 4 | 1 | Չափավոր (16) | Չափա-վոր | Ծրագրի իրականացման ընթացքում պարբերաբար տեղի կունենան փոշու և գազի արտանետումներ ծրագրի ազդեցության գոտում և դրա անմիջական շրջակայքում: Պահանջվում են արդյունավետ մեղմման միջոցառումներ: |
| Աղմուկ | 3 | 1 | 2 | 3 | 3 | 1 | Փոքր (13) | Ցածր | Աղմուկի և վիբրացիայի աճ պարբերաբար տեղի կունենա ծրագրի ազդեցության գոտում և անմիջական շրջակայքում ծրագրի գործողության ողջ ընթացքում (շինարարության փուլ): Պահանջվում են արդյունավետ մեղմման միջոցառումներ: |
| Վիբրացիա | 2 | 1 | 2 | 2 | 3 | 1 | Փոքր (11) | Ցածր | |
| Բուսական աշխարհ և բուսականու-թյուն | 4 | 1 | 2 | 2 | 4 | 2 | Փոքր (15) | Ցածր | Մաքրման աշխատանքների ընթացքում տեղի կունենա տեղամասում տեղական և ընդհանուր աճելավայրերի կորուստ: Մաքրված բուսականությունը մասամբ պետք է հետադարձվի նոր ծառերի և թփերի տնկման միջոցով: Պահանջվում են մեղմման միջոցառումներ: |
| Հողեր, ներառյալ՝ հողի վերին շերտը | 3 | 1 | 2 | 4 | 4 | 2 | Փոքր (15) | Ցածր | Հողերը և հողի վերին շերտը կխաթարվեն և/կամ կաղտոտվեն միայն ծրագրի ազդեցության գոտում: Խաթարում տեղի կունենա հողային աշխատանքների ժամանակ, իսկ աղտոտումը՝ առանց մեղմման կլինի մշտական գործընթաց: Ազդեցությունը հիմնականում կհետադարձվի հողի վերին շերտի պահպանման և մակերեսի ասֆալտապատման միջոցով: Պահանջվում են մեղմման միջոցառումներ: |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Նյութական աղբյուրներ (քարհանքեր/գ րունտային փոսի տեղամասեր) | 2 | 2 | 2 | 2 | 1 | 3 | Փոքր (12) | Ցածր | Ազդեցության հավանականու-թյունը շատ ցածր է, քանի որ չի նախատեսվում նոր քարհանքերի բացում, իսկ գրունտային փոսերը կարգելվեն ԲԿՊ-ով: Մրցույթի հաղթող կապալառուն շինանյութը ձեռք է բերում գրանցված աղբյուրներից: |
| Հիդրոերկրա-բանություն (ստորգետնյա ջրերի որակը) | 1 | 1 | 2 | 2 | 1 | 2 | Աննշան (9) | Ոչ զգալի | Համաձայն առկա երկրաբանական տվյալների՝ ծրագրի տարածքում շատ քիչ հավանական է ներթափանցումը դեպի ստորգետնյա ջրեր: Ավելին, դպրոցի տարածքի մակերեսը հիմնականում լինելու ասֆալտապատ է. ուստի ազդեցությունն աննշան է: |
| Սոցիալական համակարգեր | 4 | 2 | 2 | 4 | 4 | 1 | Չափավոր (17) | Չափա-վոր | Սա կներառի տեղի ազդեցության ենթակա մարդկանց առողջության և կյանքի չափանիշները, մասնավոր և համայնքային սեփականությունը, բիզնեսները: ԲԿՊ-ում պետք է նախատեսվեն արդյունավետ մեղմման միջոցառումներ: |
| Ազդեցություն կոմունալ ծառայու-թյունների վրա | 4 | 1 | 2 | 2 | 3 | 2 | Փոքր (14) | Ցածր | Վնասը ծրագրի դպրոցի տարածքում գտնվող կոմունալ ծառայություններին հավանական է, քանի որ չի իրականացվում ստորգետնյա կոմունալ հետազոտություն: Ազդեցությունը կարող է լիովին հետադարձվել վնասված կոմունալ ծառայությունների վերանորոգման կամ փոխարինման միջոցով: |
| Երթևեկու-թյուն և տրանսպորտ | 4 | 1 | 2 | 3 | 4 | 1 | Փոքր (15) | Ցածր | Անպայման տեղի կունենա շինարարական աշխատանքների, հատկապես՝ երթևեկության պատճառով հասարակությանը պատճառվող անհանգստություն: Ազդեցությունը կտարածվի ծրագրի ազդեցության գոտուց դուրս, քանի որ համայնքային ճանապարհներին երթևեկությունը կաճի: Ազդեցությունը պետք է լիովին հետադարձելի լինի, քանի որ շինարարության շրջանից հետո փոխադրումները կդադարեցվեն: |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | ԲԿՊ-ում պետք է նախատեսել արդյունավետ մեղմման միջոցառումներ: |
| Լանդշաֆտ և գեղագիտա-կան պատկեր | 2 | 1 | 4 | 3 | 4 | 2 | Չափա-վոր (16) | Ցածր | Ազդեցության տարածքը կսահմանափակվի ծրագրի ազդեցության գոտիով: Լանդշաֆտի փոփոխություն անպայման տեղի կունենա ծրագրի իրականացման ընթացքում և դրանից հետո: ԲԿՊ-ում պետք է նախատեսվեն արդյունավետ մեղմման միջոցառումներ: |
| Մշակութային ժառանգու-թյուն և հնա-գիտություն | 2 | 3 | 1 | 1 | 1 | 2 | Աննշան (10) | Ոչ նշա-նակալի | Թեև ազդեցությունը հավանական չէ, սակայն առկա է պատահական գտածոյի հայտնաբերման փոքրիկ ռիսկ. ուստի համապատասխան ընթացակարգը ԲԿՊ-ում կնախատեսվի: |

**Աղյուսակ 5.1. Ազդեցության ուժգնություն և միավորների համախմբեր**

| Ուժգնություն | Միավորների համախումբ |
|---|---|
| Մեծ | 21 - 24 |
| Չափավոր | 16 - 20 |
| Փոքր | 11 - 15 |
| Աննշան | 6 - 10 |

86. Շրջակա միջավայրի վրա ազդեցությունների նշանակությունը որոշելու համար կիրառվում են ԱԶԲ ուղեցույցով[13] առաջարկվող՝ ստորև բերված Աղյուսակ 6-ի չափորոշիչները:

**Աղյուսակ 6. Բնապահպանական ազդեցությունների նշանակության որոշումը[14]**

| ԱԲԸ ⇒ ուժգնությունը ⇓ | Միջազգային/ծայրահեղ | Ազգային /Բարձր | Շրջանային / Չափավոր | Տեղական /Ցածր |
|---|---|---|---|---|
| Մեծ | - | - | - | - |
| Չափավոր | - | - | Օդի որակ<br><br>Սոցիալական համակարգեր | Լանդշաֆտ և գեղագիտական պատկեր |

[13] Good Practice Note Impact Assessment Process for Initial Environmental Examination (IEE) /Լավ գործելակերպի ձեռնարկի ազդեցության գնահատման գործընթացը Շրջակա միջավայրի նախնական ուսումնասիրության (ՇՄՆՈՒ) համար/, ԿԱԱԿ, ԱԶԲ, 2019 թվական: (https://www.adb.org/sites/default/files/project-documents/48109/48109-001-tacr-en_0.pdf)

[14]

| | | | |
|---|---|---|---|
| Բարձր (Բ) | Միջին (Մ) | Ցածր (Ց) | Ոչ նշանակալի (ՈՆ) |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Փոքր | - | - | Նյութական աղբյուրներ | Երթևեկություն և տրանսպորտ<br><br>Աղմուկ<br><br>Վիբրացիա<br><br>Բուսական աշխարհ և բուսական ծածկույթ<br><br>Հողեր, ներառյալ՝ հողի վերին շերտը<br><br>Կոմունալ ծառայություններ |
| Աննշան | - | - | - | Պատահականությամբ հայտնաբերված հնագիտական գտածոներ<br><br>Հիդրոերկրաբանություն (ստորերկրյա ջրերի որակ); |

87. Ֆիզիկական, կենսաբանական, սոցիալական և մշակութային միջավայրի վրա ազդեցությունների համապարփակ վերլուծությունից հետո վերհանվում է ինչպես բացասական, այնպես էլ դրական ազդեցությունը ծրագրի տարածքում: Ազդեցությունները կառավարելի են և կարող են մեղմման միջոցառումների ժամանակին և պատշաճ իրականացման միջոցով նվազագույնի հասցվել, եթե ոչ՝ վերացվել. ուստի, հիմք ընդունելով ծրագրի ողջ ցիկլի ընթացքում ազդեցության նշանակությունը և դրա կայացման հանգամանքը՝ առաջարկվում են համապատասխան մեղմման միջոցառումներ, սկսած ճարտարագիտական նախագծումից, նախաշինարարական փուլից, շինարարությունից՝ մինչև պահպանման ժամանակաշրջանը: Մեղմման միջոցառումները ներկայացված են սույն ՇՄՆՈՒ հաշվետվության ԲԿՊ-ում:

88. Առաջարկվող Ծրագրի համար գնահատվել են հետևյալ բնապահպանական ընկալիչները.

Մթնոլորտային օդի որակը (ներառյալ աղմուկը և վիբրացիան)

89. Շինարարության փուլի ընթացքում մթնոլորտային օդի որակի վրա ազդեցությունը հավանական է՝ հողային աշխատանքների և բանած գազերի արտանետումների արդյունքում գոյացող փոշու տեսքով, ինչն առաջանում է շահագործվող մեքենաներից և սարքավորումներից, որոնք կլինեն նաև աղմուկի և վիբրացիայի հիմնական աղբյուրը:

90. Շինարարական աշխատանքների ընթացքում արտանետումների տարածման արդյունքում՝ օդի վրա ազդեցությունը գնահատելու համար կատարվում են արտանետումների և ակնկալվող մերձերկրային խտությունների հաշվարկներ: Շինարարական աշխատանքների ընթացքում վնասակար նյութերի արտանետումները կլինեն փորման, բեռնման աշխատանքների, սալարկման, գծանշումների և սարքավորումների շահագործման արդյունքում:

Աղմուկ և վիբրացիա

91. Շինարարական մեքենաների և սարքավորումների շահագործումը կառաջացնի աղմուկի և վիբրացիայի բարձր մակարդակներ, ինչը կարող է ազդել շինարարության աշխատուժի և մերձակա համայնքի անդամների առողջության վրա՝ տևական ժամանակ դրա ազդեցությանը ենթարկվելու դեպքում: Հնարավոր է նաև կարճաժամկետ ազդեցություն, որը կարող է ավելի հեշտությամբ հետադարձվել: Սա վերահսկելու և թույլատրելի չափանիշների սահմաններում պահելու համար ԲԿՊ-ում պլանավորվում է կանոնավոր մոնիթորինգ:

Ջուր

92. Ինչպես արդեն նշվել է, ծրագրի տարածքում և/կամ դրա անմիջական մերձակայքում չկան ջրային մարմիններ և ջրային հոսքեր (գետեր, լճեր, ջրամբարներ և այլն), որոնք կարող են ազդեցություն կրել ծրագրի գործողությունների արդյունքում: Մյուս կողմից էլ, անձրևաջրերը կանցնեն կենտրոնացված ջրահեռացման համակարգ, իսկ կոյուղաջրերը (հիմնականում կենցաղային կոյուղաջրերը՝ շինարարության փուլում) կհավաքվեն առանձին ցիստեռններում և մասնագիտացված ընկերության կողմից հետագայում կտեղափոխվեն և կթափվեն կոյուղային համակարգ. ուստի ջրի աղտոտվածության և նստվածքակուտակման որոշակի ազդեցություն հնարավոր է: Շինարարական տեղամասից անձրևաջրերի արտահոսքը կարող է լինել աղտոտման և նստվածքակուտակման աղբյուր: Ազդեցությունները հավանական են շինարարության փուլում: Հնարավոր են հողային աշխատանքների արդյունքում առաջացող ջրերի նստվածքակուտակում, ինչպես նաև՝ աղտոտում շինարարությանն առնչվող արտանետումներից, ինչպիսիք են՝ բետոնի լվացման ջուրը, հեղուկ և պինդ թափոնները և այլն: Կա վառելիքի, քսայուղերի (հիդրավլիկ, փոխանցման տուփ, շարժիչ և այլն) և այլ հեղուկ նյութերի ու թափոնների ցողման կամ արտահոսքի հնարավորություն անպատշաճ ձևով պահեստավորված նյութերից, լիցքավորման ժամանակ կամ շինարարության ընթացքում շահագործվող սարքավորումներով ու մեքենաներով պայմանավորված այլ պատճառներով: Սակայն դրանք չեն հանգեցնի դրանց ներթափանցմանը և ստորգետնյա ջրերի աղտոտմանը: Թեև ազդեցության հավանականությունը փոքր է, սակայն ԲԿՊ-ում նախատեսվում են որոշ համապատասխան մեղմման ընթացակարգեր՝ շինարարության ընթացքում ջրային ռեսուրսները հնարավոր աղտոտումից և նստվածքակուտակումից պաշտպանելու, ինչպես նաև՝ արտահոսքերը և թափումները նվազագույնի հասցնելու համար:

Բուսական աշխարհ և բուսական ծածկույթ

93. Նախագծման փուլում իրականացվել է բուսաբանական (ֆլորա) ուսումնասիրություն: Ուսումնասիրությունը հաստատել է, որ ուսումնասիրվող տարածքը փոփոխված տարածք է, որտեղ լանդշաֆտային կանաչ գոտիները պահպանվում են դպրոցի անձնակազմի կողմից. ուստի սա չի կարող իրենից ներկայացնել զգալի էկոլոգիական մտահոգության տարածք: Ավելին, իրականացված բուսական աշխարհի ուսումնասիրության արդյունքում չեն դիտվել Հայաստանի հազվագյուտ էկոհամակարգեր, էնդեմիկ բույսեր, Հայաստանի բուսական աշխարհի Կարմիր գրքում, Բնության պահպանության միջազգային միության (ԲՊՄՄ) Կարմիր գրքում և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում գրանցված տեսակներ, ինչպես նաև տարածքում առկա ուտելի, բուժիչ, համեմունքային, անասնակերային և այլ օգտակար բույսեր, որոնք կարող են հետաքրքրել բնակչությանը:

94. Ոսկեհատի միջնակարգ դպրոցի առաջարկվող տարածք կատարված այցելության ընթացքում նախնական հաշվարկվել է ընդամենը 70 ծառ և 30 թուփ: Դպրոցի շինարարական տեղամասի նախապատրաստման համար հատման ենթակա ծառերի և թփերի մանրամասն հաշվարկը կկատարվի Մանրամասն նախագծումից հետո: Հատման ենթակա ծառերի և թփերի քանակն ու տեսակը կներկայացվեն թարմացված ՇՄՆՈՒ-ում: Շինարարության ընթացքում հատուկ պահպանություն պահանջող ծառերի համար փոխհատուցման և մեղմման միջոցառումները կներկայացվեն ԲԿՊ-ում: Կապալառուն պատասխանատու է ծառերի

առավելագույն պահպանության համար, իսկ համապատասխան միջոցառումները նախատեսվում են Ծառերի կառավարման պլանում:

Հողեր և հողի վերին շերտ

95. Ծրագրի ազդեցության գոտին սահմանափակվում է ներկայումս գործող միջնակարգ դպրոցի տարածքով: Ծրագրի ազդեցության գոտում նոր հողատարածքների որևէ ներածում տեղի չի ունենա. հետևաբար, հողի վերին շերտի լուրջ ծավալներ չեն ներկայացվում: Առկա ողջ վերին շերտը սահմանափակվում է Ոսկեհատի միջնակարգ դպրոցի լանդշաֆտային կանաչ տարածքներով: Ընդհանուր քանակը կգնահատվի Մանրամասն նախագծման փուլում: Չնայած հողի վերին շերտի փոքր քանակությանը, բարձրացվում է հողի վերին շերտը, այն է՝ հողի հումուսով հարուստ վերին շերտը պահպանելու նպատակով հանելու և կուտակելու հարցը: Ամբողջ հողի վերին շերտը պետք է պահպանվի ծրագրի հատկացված ազդեցության գոտու սահմաններում՝ կանաչապատման համար հետագա օգտագործման նպատակով:

96. Հողային աշխատանքների ընդհանուր ծավալը կգնահատվի Մանրամասն նախագծման փուլի ընթացքում: Հիմք ընդունելով հողային աշխատանքների գնահատված քանակը՝ Կապալառուն պետք է գլխավոր ճարտարագետի հաստատմանը ներկայացնի տարբեր տեսակի հողային աշխատանքների մասով շինարարության մանրամասն մեթոդաբանությունը, և հատուկ ուշադրություն է դարձվում ուղղահայաց պլանավորման լուծումներին, որոնք ապահովում են պատշաճ անվտանգություն ու ջրահեռացում՝ շինարարության ընթացքում հնարավոր էրոզիայի և նստվածքակուտակման խնդիրներից խուսափելու նպատակով:

97. Շինարարության փուլում առկա է վառելիքի, քսայուղերի (հիդրավլիկ, փոխանցման տուփ, շարժիչ և այլն) և այլ հեղուկ նյութերի ու թափոնների միջոցով հողի աղտոտման որոշակի վտանգ: Սակայն ազդեցության մասշտաբն ու ուժգնությունը մեծ չեն լինի: Փոքր և միջին մասշտաբի շինարարական նախագծերի համար բնորոշ ԲԿՊ-ի կանոնավոր մեղմման միջոցառումները բավարար են, որտեղ հատուկ ուշադրություն է դարձվում վառելիքի, նավթի, քսանյութերի և այլ հեղուկ նյութերի ու թափոնների փոխադրման, պահպանման և մշակման տեխնիկական մասնագրերին, ինչպես նաև՝ աղտոտված հողի անվտանգ մշակման համար նախատեսվող մեղմման միջոցառումներին:

Բնական և նյութական աղբյուրներ (ջուր - էներգիա - մատակարարում, քարհանքերի/գրունտային փոսերի տեղամասեր)

98. Հետլիցքի համար անհրաժեշտ քարերը, խիճը, ավազը և այլ նյութեր, ինչպես նաև ասֆալտը և բետոնը  ձեռք են բերվում գրանցված քարհանքերից և գործարաններից:

99. Նախատեսված չէ շրջակա միջավայրից հետլիցքի համար նյութի ցանկացած փոխառում. այնուամենայնիվ, նման գործողությունների ռիսկն առկա է, և ԲԿՊ-ում մեղմման միջոցառումներ նախատեսվում են:

100. Ինչպես միջնակարգ դպրոցի կառուցման, այնպես էլ՝ շահագործման ընթացքում տեխնոլոգիական նպատակներով ջրամատակարարումը կկազմակերպվի համապատասխան սուբյեկտի (Վեոլիա Ջուր ՓԲԸ կամ համապատասխան Ջրօգտագործողների Ասոցիացիա) հետ մատակարարման պայմանագրով: Գործող կոմունալ ծառայությունների հետ կապվելու հնարավորությունները կուսումնասիրվեն մանրամասն նախագծման փուլում, իսկ նախնական հաստատումը ստացվել է:

101. Միջնակարգ դպրոցի շինարարության և շահագործման ընթացքում տեխնոլոգիական նպատակներով էներգիայի (էլեկտրաէներգիայի) մատակարարումը կկազմակերպվի համապատասխան սուբյեկտի՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՍՊԸ-ի հետ մատակարարման պայմանագրով:

102. Դպրոցի գործառնական նպատակների համար բնական գազի մատակարարումը կկազմակերպվի համապատասխան սուբյեկտի՝ «Գազպրոմ Արմենիա» ՍՊԸ-ի հետ մատակարարման պայմանագրով:

Թափոնների առաջացում

103. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններից մեկը թափոնների առաջացումն է, որը պատշաճորեն չկառավարելու դեպքում դառնում է աղտոտման, վարակի և վատթարացած ու էսթետիկ լանդշաֆտի աղբյուր: Շինարարական աշխատանքներից առաջացող թափոնները դասակարգվում են ըստ երկու հիմնական կատեգորիաների՝ հետևյալ կերպ.

Ոչ վտանգավոր թափոններ

- ✓ Շենքերի, կառույցների քանդման աշխատանքների ընթացքում առաջացող թափոններ և շինարարությանն առնչվող այլ թափոններ:
- ✓ Հողային աշխատանքների արդյունքում փորված անպիտանի հող, ավազ, ապարներ և քարեր:
- ✓ Շինարարությանն առնչվող պինդ թափոններ, ինչպիսիք են՝ մետաղական, փայտե, պլաստմասե մասերը, դատարկ պարկերը, տարաները, աղբը (կեղտ) և այլն:

Վտանգալից և վտանգավոր թափոններ

- ✓ Վտանգավոր հեղուկ նյութեր և դրանց թափոնները, ներառյալ՝ վառելիքի, բանեցված յուղի, ներկերի, քսանյութերի մնացորդները և բետոնի լվացման ջուրը:

Չդասակարգված վտանգավոր թափոններ

- ✓ Շինարարության փուլի ընթացքում վնասված արևային վահանակների ցանկացած մոդուլ կտեղափոխվի արևային վահանակների համակարգը տեղադրող կապալառուի տարածք: Այս մոդուլները կպահեստավորվեն, կենթարկվեն հետագա մշակման, վերամշակման կամ հնարավոր վերաօգտագործման:
- ✓ Այսպիսի վնասված մոդուլներից առաջացող թափոնների պահումը ծրագրի տարածքում կամ դրանց հեռացումը համայնքային աղբավայրեր աներկբայորեն արգելված է:
- ✓ Շահագործման փուլում տեղադրված արևային վահանակի մոդուլների շահագործման ժամկետը լրանալուց հետո կամ դրա վնասվելու դեպքում՝ կիետևի ապամոնտաժման գործընթացը:

104. Հարկ է հատուկ նշել, որ այս մոդուլներից առաջացող թափոններն ընդգրկված չեն ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 26.10.2006 թվականի որոշման շրջանակում, ինչպես նշվում է թիվ 342 հրամանով վավերացված ցանկում (N167 լրացումով՝ առ 27.05.2022 թվականը): Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում չկան արևային մոդուլներից թափոնների վերամշակման համար հատուկ նախատեսված լիցենզավորված կազմակերպություններ: ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից վերահսկվող վտանգավոր թափոնների քաղաքականության շարունակական զարգացումների լույսի ներքո և երկրի ողջ տարածքում արևային կայանքների լայնածավալ տեղակայման հաշվառմամբ՝ ենթադրվում է, որ մոտ ապագայում կստեղծվեն դրանց օգտահանման ուղիներ: Ավելին, այդ արևային մոդուլների հետագա օգտագործումը, կիրառումը կամ հեռացումը կղեկավարվի Հայաստանի Հանրապետության այն գործող օրենսդրական նորմերով, որոնք ուժի մեջ կլինեն դրանց շահագործման ժամկետի ավարտին: Նյութերի և թափոնների տեսակները, ինչպես նաև դրանց հետ վարվեցողությունը և առաջարկվող մեղմման միջոցառումները մանրամասնորեն ներկայացված են ԲԿՊ-ում:

Սոցիալական համակարգեր

105. Սոցիալական համակարգերի վրա ազդեցությունը ծրագրի ամենազգայուն բաղադրիչներից մեկն է: Դրանք ներառում են վերակառուցվող դպրոցի շինարարական աշխատանքների հետևանքով առաջացող ցանկացած անբարենպաստ խաթարում և/կամ անհանգստություն: Այս միջամտության անմիջական ազդեցությունը առաջին հերթին կկրեն Ոսկեհատի միջնակարգ դպրոցի անձնակազմը, ուսուցիչները, աշակերտները, ինչպես նաև Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի բնակչությունը: Մոտակայքում կան մի քանի բնակելի տներ, գյուղատնտեսական նշանակության հողատարածքներ և գերեզմանոցը: Ամենամոտ բնակելի տարածքը գտնվում է դպրոցի գլխավոր շենքից մոտ 50 մ հեռավորության վրա. ուստի հնարավոր է որոշակի ժամանակավոր անուղղակի ազդեցություն տեղի բնակչության վրա: Ծրագրի ազդեցության տարածքում շինարարության արդյունքում ուղղակի և անուղղակի ազդեցության ենթակա սոցիալական համակարգերի առկայության մասին նախնական տեղեկատվությունը հավաքվել է տեղամաս կատարված շրջայցերի ընթացքում: Հնարավոր ազդեցության վերլուծությունը գնահատվել և ներկայացվել է Պատշաճ ուսումնասիրության առանձին զեկույցում, որտեղ նշվում է, որ չկա որևէ ազդեցություն մասնավոր սեփականության վրա: Հողերի ձեռքբերումն ու օտարումը որևէ կապ չունեն այս ծրագրի հետ:

106. Շրջակայքի հանրության անդամների վրա ազդեցությունները և նրանց կյանքի չափանիշները պատշաճորեն գնահատելու համար ծրագրի տարածքում և շրջակայքում նույնականացվում են արժեքավոր զգայուն ընկալիչները: ԲԿՊ-ում ներկայացվում են տեղական բնակչության վրա բացասական ազդեցությունից խուսափելու, դրանք կանխելու և (կամ) մեղմելու միջոցառումները՝ շինարարական աշխատանքների ընթացքում պատասխանատու մարմինների հստակ նշումով:

107. Արտակարգ իրավիճակները, այդ թվում՝ վարակիչ հիվանդությունների (օրինակ՝ Քովիդ-19-ը) հսկողությունը, կառավարելի են: Ծրագրի բոլոր կողմերը (ԾԻԳ, գլխավոր ճարտարագետ և կապալառու) գտնվում են ռիսկի ներքո և ունեն կարևորագույն դեր վարակիչ հիվանդությունների բռնկումների ժամանակ՝ ապահովելով Առողջապահական համակարգի արդիականացման ծրագրի (ԱՀԱԾ/HSMP), մասնավորապես՝ վարակիչ հիվանդությունների կանխարգելման, վերահսկման և մեղմման միջոցառումների արդյունավետ իրականացումը:

Ազդեցություն կոմունալ ծառայությունների վրա

108. Կոմունալ ծառայությունների, այն է՝ գազատար խողովակների, էլեկտրահաղորդման գծերի, հեռահաղորդակցության գծերի վրա ազդեցությունը գնահատվում է առկա օբյեկտների վնասի և դրանց հզորության վրա եղած գերծանրաբեռնվածության տեսանկյունից: Վնասի ոչ էական ռիսկը վերաբերելի է միայն շինարարության ժամանակաշրջանին՝ դպրոցի տարածքին մոտ գտնվող վերգետնյա կոմունալ ծառայությունների մասով: Մերձակայքի տեղի բնակչությունը պետք է նախքան աշխատանքների մեկնարկը ծանուցվի այն դեպքերում, երբ տեղի են ունենում ծառայությունների կարճաժամկետ խափանումներ: Նախքան աշխատանքների մեկնարկը շինարարական աշխատանքների կապալառուից պետք է պահանջվի իրականացնել կոմունալ ծառայությունների սեփական հետազոտությունը և կառավարել կոմունալ ծառայության տեղափոխումը՝ հետևելով Կոմունալ ծառայությունների տեղափոխման ենթածրագրով նախատեսված մեղմման միջոցառումներին: Անմիջականորեն ծրագրի ազդեցության գոտում գտնվող կոմունալ ծառայությունների վնասի հետևանքով առաջացող ազդեցությունը ամբողջությամբ կհետադարձվի վնասված կոմունալ ծառայությունների արտաուղղման, վերանորոգման կամ փոխարինման միջոցով:

Երթևեկություն և տրանսպորտ

109. Ոսկեհատի միջնակարգ դպրոցի վերակառուցումը կմեծացնի երթևեկությունը հարակից տեղական ճանապարհներին՝ դեպի շինարարության տարածք և այդտեղից բեռնատար

մեքենաների, տեխնիկայի և շինանյութերի տեղափոխման ժամանակ: Գործող ճանապարհների և հետիոտնային անցուղիների որևէ երկարաժամկետ զբաղեցում և/կամ արգելափակում չի նախատեսվում: Այնուամենայնիվ, կան անվտանգության որոշ ռիսկեր հասարակության և անցորդների համար: Հասարակական անվտանգությունը կարող է վտանգվել, իսկ բնակելի տների և ձեռնարկությունների մուտքի ճանապարհները կարող են արգելափակվել կամ բարդանալ: Շինարարության ընթացքում հասարակության անվտանգությանը, գերբեռնվածությունը նվազագույնին հասցնելուն և երթևեկության այլ խանգարումներին ուղղված ընթացիկ մեղման միջոցառումները նկարագրվում են ԲԿՊ-ում:

Լանդշաֆտի գեղեցկություն և այլ գեղագիտական պատկերներ

110. Տարածքի մաքրումը ծառերից, շինարարության ժամանակավոր ցանկապատումը, ճամբարների և շարժական տների ստեղծումը, շինարարական տեխնիկայի կայանումը և շինանյութի ու թափոնների կուտակումը կհանգեցնեն լանդշաֆտի փոփոխությանը: Սակայն այդ ազդեցությունը կլինի ժամանակավոր և կտևի մինչև շինարարական աշխատանքների ավարտը: Շինարարության փուլում ազդեցության մեղմումը պետք է ապահովվի Թափոնների և նյութերի կառավարման պլանով, Շրջակա միջավայրի պահպանության պլանով և Տեղամասի կառավարման պլաններով՝ ծրագրի ազդեցության գոտուց դուրս գտնվող տարածքն օգտագործելու համար: Շինարարական աշխատանքների ավարտից հետո պետք է իրականացվի տեղամասի ռեստավրացիա և գեղագիտական պատկերի վերականգնում:

Հնագիտություն և մշակութային ժառանգություն/Ֆիզիկական մշակութային ռեսուրսներ

111. Թեև առաջարկվող ծրագրի տարածքը չի ներառում Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում ներկայացված հնագիտական վայրեր, սակայն ԲԿՊ-ի Մշակութային ժառանգության կառավարման ենթապլանով նախատեսված մեղման միջոցառումները կնպատակաուղղվեն պատահական գտածոների հայտնաբերման ընթացակարգերի մասով Հայաստանի օրենսդրական պահանջների կատարմանը:

### Գումարային ազդեցության գնահատում

112. Ղեկավարվելով ԱԶԲ ԱՄՔՓ-ի (2009 թվական) և Հայաստանի օրենսդրական պահանջներով՝ Ծրագրի կողմից պատճառվող հնարավոր ազդեցություններն ու ներգործություններն առանձին դիտարկելուց և վերլուծելուց հետո, իրականացվում են շրջակա միջավայրի վրա ազդեցության ամբողջական գնահատում և համապատասխան մեղման միջոցառումների պլանավորում: Ուսումնասիրվում են ինչպես միջծրագրային, այնպես էլ՝ ներծրագրային ազդեցությունները:

113. Համապատասխան փաստաթղթերի, այդ թվում՝ Համայնքների զարգացման ծրագրի ուսումնասիրությունները, ինչպես նաև՝ Ոսկեհատի իշխանությունների հետ հաղորդակցությունը, ցույց են տվել, որ ծրագրի ազդեցության տարածքում չի նախատեսվում որևէ ծրագրի/գործողության միաժամանակյա իրականացում, որը կարող է հանգեցնել գումարային բացասական բնապահպանական ազդեցությունների:

114. Ներծրագրային գումարային ազդեցությունների շրջանակը և դրանց ուժգնությունը կարող են մեծանալ, եթե որպես հիմք ընդունենք հետագա ուսումնասիրությունները, տեղական ինքնակառավարման մարմինների, ազդեցության ենթակա մարդկանց և այլ շահագրգիռ կողմերի հետ քննարկումները: Շինարարության ընթացքում պետք է վերհանվեն ապագայի ցանկացած պլան կամ ծրագիր, որը նույն ժամկետներում կարող է լինել շինարարության կամ շահագործման փուլում: Նման ազդեցությունների նշանակության մակարդակի նվազեցմանն ուղղված լրացուցիչ մեղման միջոցառումները պետք է նախատեսվեն թարմացված ԲԿՊ-ում, և բացի այդ, ծրագրերի միջև պետք է հնարավորության սահմաններում հաստատվեն կապեր՝ գումարային ազդեցությունները նվազեցնելու նպատակով:

## VII. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ, ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

115. Հանրային հաղորդակցությունը, քննարկումները և ներգրավումն իրականացվել են Հայաստանի օրենսդրությանը և ԱԶԲ ԱՄՔՓ-ին (2009 թվական) համապատասխան: Հանրային քննարկումների և հաղորդակցության պլանը (ՀՔՀՊ) մշակվել է ՇՄՆՈՒ/ԲԿՊ-ի շրջանակներում՝ որպես Բնապահպանական կառավարման պլանի հաստատուն մաս: ՀՔՀՊ-ն պետք է իրականացվի ծրագրի բոլոր փուլերում, սկսած նախագծման փուլից՝ մինչև շինարարության և շահագործման փուլերը, բոլոր շահագրգիռ կողմերի, ազդեցության ենթակա մարդկանց, ՀԿ-ների և այլ շահագրգիռ հանրության բովանդակալից և արդյունավետ մասնակցությունն ապահովելու նպատակով: ՀՔՀՊ-ն ներառում է.

i. Ծրագրին առնչվող տեղեկատվության հրապարակում հանրությանը՝ Ծրագրի մասին իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով:
ii. Հանրային քննարկումներ՝ նախագծման և ՇՄՆՈւ/ԲԿՊ-ի մշակման փուլում հասարակության և ԱԵԱ-ների մասնակցությունն ապահովելու նպատակով: Ավելին, Կապալառուն պետք է իրականացնի նախաշինարարական փուլի հանրային լսումներ՝ նախքան շինարարական աշխատանքները սկսելը, իսկ այնուհետև՝ դրանք պետք է լինեն շարունակական նման պահանջի դեպքում (օրինակ՝ այն դեպքերում, երբ նախագիծը փոխվում է և/կամ տեղի է ունենում որևէ նշանակալի չնախատեսված ազդեցություն): Կարող են պահանջվել հետագա հանրային լսումներ, և դրանք պետք է իրականացվեն կապալառուի կողմից՝ ճարտարագետի և ՀՏԶՀ-ի աջակցությամբ և մասնակցությամբ:
iii. Բողոքների լուծման մեխանիզմ, որի նպատակն է ապահովել ամենօրյա մշտական շփում ազդեցության ենթակա մարդկանց և շահագրգիռ կողմերի հետ՝ բողոքների և առաջարկությունների արագ արձագանքման և լուծման նպատակով:

### Տեղեկատվության հրապարակում

116. Ծրագրի վերաբերյալ տեղեկատվության հրապարակման գործընթացը սկսվել է հնարավորինս շուտ՝ դեռ նախագծման փուլում: Ծրագրին առնչվող տեղեկատվությունը, ներառյալ՝ մանրամասն նախագիծը և ԲԿՊ-ը ներառող վերջնական ՇՄՆՈւ-ն, հասանելի են դարձել հանրությանը, համապատասխան մարմիններին և այլ շահագրգիռ կողմերին: Ծրագրի մասին տեղեկատվությունը հրապարակվել է.

i. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի, Ոսկեհատի միջնակարգ դպրոցի ղեկավարության և այլ պաշտոնական մարմինների հետ հերթական հանդիպումների շարքի միջոցով,
ii. հանրային քննարկման միջոցառումների միջոցով,
iii. ՇՄՆՈւ հաշվետվության առաջին տարբերակը (անգլերեն և հայերեն լեզուներով) ՀՏԶՀ-ի կայքում տեղադրելու միջոցով:

117. Հետևյալ փաստաթղթերը պետք է տեղադրվեն ԱԶԲ-ի և ՀՏԶՀ-ի կայքերում և պարբերաբար թարմացվեն անհրաժեշտության դեպքում.

- ✓ ՇՄՆՈւ հաշվետվությունը (վերջնական), որը տեղադրվել է ԱԶԲ-ի (անգլերեն տարբերակը) և ՀՏԶՀ կայքերում (անգլերեն և հայերեն տարբերակները):
- ✓ Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ (ԲԳՈւՇ)[15]:

[15] ԲԳՈւՇ-ն արդեն հրապարակվել է ԱԶԲ-ի և ՀՏԶՀ-ի կայքերում:

- ✓ Վարկառուի կողմից կազմվող տարեկան հաշվետվությունները ծրագրի առաջընթացի և ԲԿՊ-ի իրականացման վերաբերյալ:

118. Հանրային քննարկումների ներածական և հերթական հանդիպումների շրջանակը որոշելու համար սահմանվում է ծրագրի հիմնական շահագրգիռ կողմերի ցանկը, որը կարող է նախատեսվել և ընդլայնվել ազդեցության գնահատման գործընթացում և ՇՄՆ-ի կողմից, ինչը սահմանվում է ՀՀ կառավարության «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 1325-Ն որոշումով (19.11.2014 թվական):

### Քննարկում և մասնակցություն

119. 2023 թվականի մայիսի 12-ին, Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի ղեկավարի հետ անցկացվել է ներածական հանդիպում գյուղի տարածքում Ծրագիրն իրականացնելու մտադրության վերաբերյալ, որտեղ ծրագրի հակիրճ նկարագրությունն ուղարկվել է ազդեցությունը կրող համայնքի վարչակազմին (Տե՛ս Հավելված 3-ը):

120. Ներածական հանդիպման ընթացքում շահագրգիռ կողմերը տեղեկացվեցին առաջարկվող Ծրագրի մանրամասների և Շրջակա միջավայրի նախնական ուսումնասիրության գործընթացի և մեղմման միջոցառումների պլանավորման ընթացքի մասին: Ազդեցության ենթարկվող համայնքի ղեկավարը տեղեկացվեց, որ Ծրագրի նախաձեռնողները գտնվում են Հայաստանի օրենսդրությանը և ԱԶԲ-ի անվտանգության մեխանիզմների քաղաքականությանը համապատասխան՝ հանրային քննարկումների կազմակերպան գործընթացում, և նրան դիմեցին այդ հարցում աջակցելու, ինչպես նաև հանրության մասնակցության ապահովմանը և քննարկումն արդյունավետ ու բովանդակալից դարձնելու գործում իր նպաստը բերելու խնդրանքով: Հանրային քննարկումը պետք է իրականացվի Հանրային քննարկման և տեղեկատվության հրապարակման վերաբերյալ ԱԶԲ ԱՄՔՓ-ի պահանջները և ՀՀ օրենսդրության, մասնավորապես «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ N 1325-Ն որոշման պահանջները բավարարելու նպատակով: ԱԶԲ-ի քաղաքականության պահանջներին լիովին համապատասխանելու և Հայաստանի օրենսդրության պահանջները բավարարելու նպատակով՝ ազդեցություն կրող Ոսկեհատ բնակավայրում պետք է կազմակերպել հանրային քննարկում:

121. Նախքան հանրային քննարկումների միջոցառման կազմակերպումը՝ ՀՏԶՀ-ն ապահովել է, որպեսզի բոլոր համապատասխան և պատշաճ տեղեկությունները լինեն ժամանակին հրապարակված և հասկանալի ու հասանելի ազդեցության ենթակա մարդկանց համար, և որպեսզի այն լինի կանանց, անապահով և խոցելի խմբերի կարիքներին արձագանքող: Հանրային քննարկման մասին ծանուցումը տեղադրվել է Վաղարշապատ համայնքի պաշտոնական կայքում և սոցիալական ցանցի էջերում, ինչպես նաև՝ փակցվել ազդեցության ենթակա համայնքի՝ հանրայնորեն տեսանելի տեղերում:

122. Հանրային քննարկումը կազմակերպվել և անցկացվել է 2023 թվականի մայիսի 18-ին Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրում: Այն ղեկավարում էր բնակավայրի վարչական ղեկավար պարոն Արմեն Խուդաբաշյանը: Հրավիրված էին ազդեցություն կրող համայնքի, ինչպես նաև՝ ազդեցության ենթարկված բնակչության, ՀՏԶՀ-ի և ԱԶԲ-ի ներկայացուցիչները: Հանրային քննարկումն անցկացվել է շահագրգիռ կողմերին և հանրությանը ծրագրի մտադրության ու ընդհանուր հայեցակարգի մասին իրազեկելու և նրանց՝ սեփական մտահոգությունները հնարավորինս շուտ բարձրաձայնելու հնարավորություն տալու, ինչպես նաև՝ Ծրագրի մանրամասն նախագծում, մեղմման և մոնիթորինգի պլանում բոլոր ողջամիտ առաջարկությունները ներառելու նպատակով: Մասնավորապես, հանրային քննարկման մասնակիցները Ծրագրի թիմից խնդրեցին դպրոցի նախագծում ներառել ոռոգման համակարգը՝ եղած ծառերը ոռոգելու համար, ինչպես նաև՝ վերականգնել կիսավեր հրաձգարանը և կառուցել քարե պարիսպ՝ դպրոցը և գերեզմանատունը սահմանազատելու

նպատակով: Գիտակցելով այս առաջարկությունների կարևորությունը՝ պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ այդ հարցերը հետագայում կքննարկվեն և հնարավոր է, որ ներառվեն Մանրամասն նախագծման փուլում: Հանրային քննարկման հայտարարությունը, օրակարգը, ներկաների ցանկը և արձանագրությունները, որոնք պարունակում են ամբողջական տեղեկատվություն մասնակիցների կողմից բարձրացված խնդիրների և մտահոգությունների, ձեռք բերված պայմանավորվածությունների ու լուծումների վերաբերյալ, պատշաճորեն փաստաթղթավորվում և կցվում են սույն հաշվետվությանը՝ որպես «Հանրային հաղորդակցության և քննարկման մասին հաշվետվություն» վերտառությամբ հավելված 3:

123. Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների՝ ՀՏԶՀ-ի կողմից կկազմակերպվեն երկու լրացուցիչ քննարկումներ՝ տեղական ՇՄԱԳ-ի և փորձաքննության փուլի նախապատրաստման շրջանակներում:

## VIII. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

124. Բնապահպանական կառավարման պլանը ներառում է հետևյալը.

- ✓ Ներածություն, ԲԿՊ-ի նպատակները և ԲԿՊ-ի կառուցվածքը:
- ✓ Իրականացման մեխանիզմներ, որոնք նախանշում են ԲԿՊ-ի և մոնիթորինգի իրականացման գործում դերերը և պարտականությունները, ինչպես նաև՝ կազմակերպչական պայմանավորվածությունները:
- ✓ Ազդեցությունների կառավարում և մոնիթորինգ, ներառյալ՝ չակնկալվող և նախագծային փոփոխությունները:
- ✓ Վերապատրաստման և կողմնորոշման ծրագիր՝ ծրագրի բնապահպանական կառավարման կարողությունները և բյուջեն ուժեղացնելու նպատակով:
- ✓ Հանրային քննարկումների և հաղորդակցության պլան՝ ծրագրի իրականացման փուլի և ԲԼՄ-ի համար:
- ✓ Գրառումների վարման և հաշվետվության պահանջներ:
- ✓ Ազդեցությունների ամփոփում:
- ✓ ԲԿՊ-ի իրականացման ծախսերի նախահաշիվներ:

### Ներածություն

125. Պատրաստվել է ԲԿՊ՝ ԱԶԲ-ի բնապահպանական երաշխիքների պահանջներին և շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ ՀՀ բոլոր գործող օրենքներին, կանոնակարգերին և չափանիշներին համապատասխանությունը ապահովելու նպատակով: Այն սահմանում է ծրագրի բոլոր հանձնառությունները՝ ուղղված շրջակա միջավայրի և սոցիալական պաշտպանությանը: ԲԿՊ-ն պարունակում է միջոցառումներ, որոնք նախատեսված են ցանկացած այնպիսի անցանկալի ազդեցությունից խուսափելու համար, որոնք կարող են առաջանալ Ծրագրի իրականացման ընթացքում, իսկ այն դեպքերում, երբ հնարավոր չէ դրանից խուսափել, ապա բացասական ազդեցությունները հասցնել նվազագույնի, մեղմել և/կամ փոխհատուցել, և մեծացնել դրական ազդեցությունները բնապահպանական պլանավորման և կառավարման միջոցով:

### Իրականացման մեխանիզմներ

126. ԲԿՊ-ն պատրաստվում է որպես աշխատանքային գործիք կապալառուի և ճարտարագետի համար, որպեսզի ԲԿՊ-ի վերջնական օգտագործողների համար պարզ լինի, թե ի՞նչ է նրանցից պահանջվում ներառել իրենց աշխատանքային մեթոդներում և

գործողություններում՝ շինարարական աշխատանքների իրականացման հետ կապված բնապահպանական ազդեցությունների կանխարգելման և մեղման նպատակով, ինչպես նաև այն պետք է ծառայի որպես ուղեցույց ՀՏԶՀ-ի և այլ համապատասխան մարմինների համար:

127. ԲԿՊ-ն, որպես ՇՄՆՈւ-ի անբաժանելի մաս, կներառվի մրցութային և պայմանագրային փաստաթղթերում, և կդիտարկվի որպես Կապալառուի պայմանագրային պարտավորությունների հաստատուն մաս:

128. Իրականացման մեխանիզմները, որտեղ հստակորեն նշվում են Ծրագրի իրականացման գործում ներգրավված յուրաքանչյուր կողմի դերը և պատասխանատվությունը, ԲԿՊ-ի մոնիթորինգը և վերահսկողությունը, ինչպես նաև իրականացման ժամանակացույցը և բյուջեն, բերված են ԲԿՊ-ի մատրիցայում և ներկայացված՝ Հավելված 6-(ա)-ում և 6(բ)-ում: ՇՄՆՈւ/ԲԿՊ-ի իրականացման ժամանակացույցը և պատասխանատու մարմինները ներկայացված են նաև Հավելված 5-ում:

## Ազդեցությունների կառավարում

129. ԲԿՊ-ն բաղկացած է երկու հիմնական բաժիններից՝ տեքստային և աղյուսակային ձևեր: Տեքստային ձևը ներկայացված է ստորև, իսկ աղյուսակային մասը մշակվել և կցվել է որպես ՇՄՆՈւ-ի հաշվետվության Հավելված 6: Երկու մասերն էլ, իրենց հերթին, բաղկացած են 2 մասերից՝ Ա. Մեղմում և Բ. Մոնիթորինգ. (i) Բնապահպանական մեղման միջոցառումների աղյուսակ և (ii) Մոնիթորինգի աղյուսակ:

## Մեղմում

130. Սույն բաժինը պատրաստվել է աղյուսակային ձևաչափով, որը պարունակում է հետևյալը.

- ✓ Ծրագրի գործողություններ:
- ✓ Դրանց հնարավոր բնապահպանական ազդեցությունները:
- ✓ Առաջարկվող մեղման միջոցառումներ Ծրագրի ողջ ցիկլի ընթացքում՝ սկսած ճարտարագիտական նախագծման, նախաշինարարական և շինարարության փուլերից մինչև շահագործման ժամանակահատվածը, ներառյալ՝ կարողությունների զարգացման և վերապատրաստման միջոցառումները:
- ✓ Իրականացման և հաշվետվության պահանջների, հարակից ինստիտուցիոնալ կամ կազմակերպչական պայմանավորվածությունների համար պատասխանատու անձինք:
- ✓ Առաջարկվող մեղման միջոցառման ինդիկատիվ ծախսային նախահաշիվները:

131. Սույն բաժինը ներկայացնում է ընդհանուր սկզբունքները և սովորական մեղման միջոցառումները՝ խմբավորված հետևյալ ենթապլաններում.

**I. Շինարարության փուլ**

1. Բնապահպանական և անվտանգության կողմնորոշման պլան
2. Աշխատանքային առողջության և անվտանգության պլան
3. Հանրային քննարկումների և հաղորդակցության պլան
4. Բուսական և կենդանական աշխարհի պահպանության և բուսականությունից մաքրման պլան
5. Շրջակա միջավայրի պաշտպանության պլան
6. Մակերևութային և ստորգետնյա ջրերի պահպանության պլան
7. Կոմունալ ծառայությունների պաշտպանության և տեղափոխման պլան
8. Շինաշխատանքային ճամբարների պլան
9. Տեղամասի կառավարման պլան (քարհանք և գրունտային փոս, լցակույտավայրեր, բետոնի խմբաքանակի և ասֆալտի գործարաններ)
10. Երթևեկության և հասանելիության կառավարման պլան
11. Արտակարգ իրավիճակներին արձագանքման պլան

12. Թափոնների և նյութերի կառավարման պլան
13. Մշակութային ժառանգության կառավարման պլան
14. Տեղամասի վերականգնման, կանաչապատման և բուսական ծածկույթի վերականգնման պլան

**II. Հետշինարարական փուլ**

15. Թերությունների վերացման ժամկետ
16. Շահագործման փուլ

## Բնապահպանական և առողջության ու անվտանգության կողմնորոշման պլան

132. Ծրագրի բոլոր փուլերի ընթացքում կմշակվի ու կիրականացվի բնապահպանական և անվտանգության ուսուցման/վերապատրաստման կողմնորոշման ծրագիրը: Վերապատրաստման ծրագիրը ներառում է.

I. ՀՏՃՀ-ի և կապալառուի՝ ճարտարագիտական և բնապահպանական, առողջապահական ու անվտանգության ոլորտների անձնակազմի համար ԱՃԲ-ի անվտանգության մեխանիզմների և ազգային օրենսդրական պահանջների վերաբերյալ ճարտարագետի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացները՝ նախքան շինարարական աշխատանքները սկսելը. մեկնարկից հետո մեկ շաբաթվա ընթացքում, կապալառուին տրվում են դասընթացներ հետևյալ թեմաներով.
   a. Բնապահպանական կառավարում
   b. Առողջապահության և անվտանգության կառավարում
   c. Սոցիալական երաշխիքներ

II. Շրջակա միջավայրի և առողջության ու անվտանգության հարցերի վերաբերյալ վերապատրաստում, որը կազմակերպվում է Կապալառուի շրջակա միջավայրի և առողջապահության ու անվտանգության ոլորտի մասնագետների կողմից կապալառուների և ենթակապալառուների բոլոր աշխատողների համար՝ համաձայն ԲԿՊ-ում մշակված Անվտանգության կողմնորոշման պլանի: Ճարտարագիտության ոլորտի անձնակազմից և աշխատողներից կպահանջվի հաճախել կողմնորոշման/անվտանգության ներածական դասընթացին տեղամասում նրանց գտնվելու առաջին շաբաթվա ընթացքում և նոր հավաքագրված աշխատողների համար պարբերաբար անցկացվող վերապատրաստման դասընթացներին: Կապալառուի կողմից կազմակերպվող վերապատրաստման դասընթացները ներառում են.
   a. Բնապահպանական կողմնորոշման/անվտանգության ներածական դասընթաց տեղամասում գտնվելու առաջին շաբաթվա ընթացքում, իսկ հետո՝ պարբերական դասընթացներ նոր հավաքագրված աշխատողների, այդ թվում՝ ենթակապալառուների համար, հետևյալ թեմաներով. (i) ՇՄՆՈՒ/ԲԿՊ-ում սահմանված ընդհանուր բնապահպանական և անվտանգության կանոնները և կարգավորումները, որոնց պետք է հետևել աշխատանքային տեղամասում և ճամբարներում, (ii) Մշակութային ժառանգություն. վերապատրաստել ողջ անձնակազմին հնագիտական պատահական գտածոյի հայտնաբերման ընթացակարգի մասով և (iii) Աշխատանքային առողջության և անվտանգության պլանում, Բուսական և կենդանական աշխարհի պահպանության պլանում և այլնում թվարկված այլ թեմաներ:
   b. Վերը նշված թեմաներով՝ շրջակա միջավայրի/առողջության և անվտանգության կանոնավոր կողմնորոշման դասընթացներ բոլոր աշխատողների, այդ թվում՝ ենթակապալառուների համար, առնվազն տարին երկու անգամ:
   c. Աշխատանքին ներհատուկ՝ շրջակա միջավայրի/առողջության և անվտանգության մասին կանոնավոր թիրախային վերապատրաստման դասընթացներ տեղերում

աշխատողների տարբեր խմբերի հետ (բարձրության վրա աշխատողներ, հողային աշխատանքներ կատարողներ, էլեկտրական գործիքներով աշխատողներ, վարորդներ և այլն)՝ նախքան նոր տիպի աշխատանք սկսելը:

d. Հավելյալ միջանկյալ դասընթացներ գլխավոր ճարտարագետի պահանջով:

Աշխատանքային առողջության և անվտանգության պլան

133. Սույն Ենթապլանի նպատակն է փաստաթղթավորել ԱԶԲ-ի և Հայաստանի օրենսդրությամբ կապալառուին և ենթակապալառուներին առաջադրվող պահանջները՝ Ծրագրի իրականացման ընթացքում աշխատանքի անվտանգության և առողջության պաշտպանությունն ապահովելու նպատակով: Սույն Ենթապլանը պետք է ներառի տվյալ տեղամասում գտնվելու իրավունք ունեցող բոլոր անձանց առողջության, անվտանգության և բարեկեցության երաշխավորման պահանջները, այդ թվում՝ համապատասխան կողմնորոշման ծրագիրը: Կապալառուից պետք է պահանջվի պատրաստել և ճարտարագետի հաստատմանը ներկայացնել աշխատանքների մեթոդական փաստաթուղթը, որը պետք է պարունակի աշխատանքի անվտանգության պլան յուրաքանչյուր տիպի աշխատանքի համար: Պլանը պետք է ներառի աշխատանքին հատուկ անվտանգության միջոցառումներ՝ ապահովելու, որպեսզի բոլոր աշխատանքները կատարվեն անվտանգ և արդյունավետ եղանակով: Աշխատանքային առողջության և անվտանգության պլանը բաղկացած է հետևյալ մասերից.

**Առողջապահության և անվտանգության կողմնորոշման ծրագիր**

134. Կապալառուն կազմակերպում և իրականացնում է վերապատրաստման դասընթացները հետևյալ թեմաներով.

- ✓ Ընդհանուր անվտանգության կանոններ ու կարգավորումներ, որոնց պետք է հետևել շինարարության տեղամասում և ճամբարներում:
- ✓ Աշխատանքին ներհատուկ կանոններ և կարգավորումներ, այդ թվում՝ բարձրության վրա աշխատելու, էլեկտրական գործիքների հետ աշխատելու, փորված փոսերի և այլնի մասով:
- ✓ Առողջության և անվտանգության ընդհանուր իրազեկման ծրագիր՝ շինարարության աշխատողներին սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ կրթելու նպատակով:
- ✓ Որպես կապալառուի Աշխատանքային անվտանգության պլանի հատուկ անբաժանելի մաս՝ Առողջապահության և անվտանգության իրազեկման հատուկ ծրագիր, շինարարության աշխատողներին վարակիչ հիվանդությունների (օրինակ՝ ՔՈՎԻԴ-19) ռիսկերի, դրանց կանխարգելման ու վերահսկման մասով կրթելու համար:
- ✓ Ապօրինի թրաֆիքինգ. աշխատողները պետք է իրազեկվեն, որ ճանապարհային միջանցքով մարդկանց, վայրի բնության, վտանգված տեսակների և ապօրինի նյութերի թրաֆիքինգը չի հանդուրժվելու, և պետք է տեղեկացվեն տույժերի աստիճանաբար խստացվող սխեմայի մասին՝ ընդհուպ մինչև աշխատանքից ազատելը:
- ✓ Այլ կոնկրետ թեմաներ՝ ըստ գլխավոր ճարտարագետի պահանջի:

**Անհատական պաշտպանական միջոցներ (ԱՊՄ)**

135. Կապալառուն իր աշխատողներին տրամադրում է տվյալ սեզոնին համապատասխան աշխատանքային արտահագուստ և աշխատանքին ներհատուկ ԱՊՄ, և երաշխավորում, որպեսզի իր և ենթակապալառուի աշխատողները, ներառյալ՝ բանվորները, ճարտարագետները, աշխղեկները, ղեկավար անձնակազմը և շինարարական տեղամասի այցելուները կրեն և օգտագործեն դրանք: Աշխատանքային արտահագուստը ներառում է բարձր տեսանելիություն ունեցող ժիլետներ, բաճկոններ, շալվարներ կամ կոմբինեզոններ, կոշիկներ/երկարաճիտ կոշիկներ, սաղավարտներ և ձեռնոցներ: Արտահագուստը պետք է տրամադրել ընկերությունների տարբերանշանով:

136. ԱՊՄ-Ը կարող է ներառել աչքերը պաշտպանող, ականջները պաշտպանող հատուկ հարմարանքներ, դիմակներ կամ ռեսպիրատորներ, դեմքի պաշտպանիչ վահաններ, գոտիներ կամ ամրագոտիներ, աշխատանքին ներհատուկ կոմբինեզոններ, զորօրինակ՝ եռակցող բանվորների համար և այլն, կախված աշխատանքին բնորոշ վտանգներից և ռիսկերից: Կապալառուն պետք է ապահովի խրախուսական միջոցների և տույժերի համապատասխան մեխանիզմ՝ ԱՊՄ-ի օգտագործումը կիրարկելու համար:

**Գործիքներ և օժանդակ հարմարություններ**

137. Կապալառուն տրամադրում է անվտանգության բոլոր համապատասխան գործիքները և ստեղծում օժանդակ միջոցներ (հետնաճաղավանդակներ, սանդուղքներ, մուտքի կամրջակներ, էլեկտրական պաշտպանիչ վահաններ, իրակայուն սարքավորումներ) նախքան աշխատանքները սկսելը՝ ելնելով աշխատանքին բնորոշ վտանգներից և ռիսկերից (բարձրության վրա աշխատանք, խորը խրամուղիներ և փոսեր, ընկնելու վտանգներ, կռունկներ և այլ մեքենաներ և այլն):

138. Կապալառուն ապահովում է, որպեսզի աշխատանքային տարածքի ներսում կապալառուի և ենթակապալառուի աշխատող անձնակազմի համար բացառվի որևէ վտանգավոր անապահով իրավիճակ (չպաշտպանված խրամուղիներ և փոսեր, անզգուշորեն թողած էլեկտրական գործիքներ, ծանր տեխնիկայի չկարգավորված շահագործում և այլն):

**Առողջապահությունն աշխատավայրում**

139. Կապալառուն պետք է ձեռնարկի կապալառուի և ենթակապալառուի անձնակազմի առողջության, անվտանգության և բարեկեցության համար անհրաժեշտ բոլոր միջոցները: Այդ նպատակով այն վարձում է բուժաշխատողի, ով պատասխանատու է ՇՄՆՈւ-ի/ԲԿՊ-ի կատարման համար: Կապալառուն համագործակցում և պայմանավորում է մասնագիտացված բժշկական կազմակերպության հետ վթարների/պատահարների դեպքերի համար:

140. Գլխավոր ճարտարագետի կողմից հաստատված՝ կապալառուի բուժաշխատողը պատրաստում է ուսուցման ծրագիրը և անցկացնում է Առողջության և անվտանգության կողմնորոշման ծրագրում նշված դասընթացները կապալառուի և ենթակապալառուի աշխատողների համար: Նա իրականացնում է աշխատողների և անձնակազմի այլ անդամների առողջական վիճակի պարբերական ստուգում, վարում է գրառումներ, որոնք տրամադրվում են դաշտային գրասենյակ ստուգման նպատակով, և ամսական կտրվածքով տրամադրում է հաշվետվություն:

141. Կապալառուն տրամադրում է միջոցներ ու գործիքներ և երաշխավորում, որպեսզի ճանապարհների բոլոր հատվածներում աշխատանքային տարածքներն ապահովված լինեն դրանցով՝ շտապ առաջին բուժօգնություն ապահովելու նպատակով. նախատեսված միջոցներով ու անձնակազմով ապահովված և հեշտ հասանելի առաջին օգնության հավաքածու, ինչպես նաև տեսանելիորեն փակցված պաստառներ՝ պատասխանատու անձնակազմի առկայության և կոնտակտային տվյալների նշումով: Թունավոր տեսակները ճանաչելու և առաջին օգնության ցուցաբերման ունակության համար՝ Կապալառուն պետք է հրավիրի մասնագետի և ցուցումներ տա անձնակազմին: Առաջարկվում է Հայաստանի թունավոր օձեր ձեռնարկը, որտեղ մանրամասնորեն նկարագրված են օձերի թունավոր տեսակները և օձի խայթոցի դեպքում անհրաժեշտ արտակարգ գործողությունները:

142. Վարակիչ հիվանդությունների (օրինակ՝ ՔՈՎԻԴ-19-ի) ռիսկերի դեպքում կապալառուն պատրաստում է Վարակիչ հիվանդությունների համար առողջության և անվտանգության պլան՝ հիմնվելով ԱԶԲ-ի ԿԱԱՎ/CWRD-ի առաջարկած «Վարակիչ հիվանդություններից (օրինակ՝

Քովիդ-19) զերծ աշխատանքային անվտանգության վերաբերյալ» գործառնական ընթացակարգի վրա,  և ստանում է գլխավոր ճարտարագետի հավանությունը, ինչպես նաև տրամադրում վարակիչ հիվանդությունների վերահսկման բոլոր միջոցները, գործիքներն ու հարմարությունները, որոնք նախատեսված են ազգային կանոնակարգերով, միջազգային ուղեցույցներով, և Առողջության և անվտանգության ծրագրով:

143. Կապալառուն անձնակազմին տրամադրում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի/Սեռական ճանապարհով փոխանցվող վարակների (ՍՃՓՎ) կանխարգելման և բուժման համապատասխան կանոնավոր միջոցներ և առողջ ապրելակերպի խթանման այլ միջոցներ՝ նվազեցնելու ՄԻԱՎ/ՍՃՓՎ վարակների ռիսկի գործոնները և խոցելիությունը: Այդ գործողությունները պետք է ներառվեն կողմնորոշման դասընթացում և համակարգվեն պետական մարմինների, միջազգային գործակալությունների, հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ների) և այլոց, այդ թվում՝ ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային կենտրոնի և ԱԶԲ-ի՝ պայմանագրային հիմունքներով աշխատող խորհրդատուների հարակից նախաձեռնությունների հետ:

**Հասարակական անվտանգության միջոցառումներ**

144. Կապալառուն ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու տեղի բնակիչների, ԱԵԱ-ների, բիզնեսների և նրանց աշխատակիցների, անցորդների և հասարակության այլ անդամների անվտանգությունը, առողջությունը և բարեկեցությունը: Կապալառուն տեղադրում է ժամանակավոր ցանկապատեր և ձեռնարկում բոլոր միջոցները աշխատանքային տարածքը մեկուսացնելու և չարտոնված մարդկանց մուտքը տեղամաս սահմանափակելու համար: Անհրաժեշտության դեպքում նշանակվում է պահակ, տեղադրվում են ցանկապատեր, արգելապատնեշներ ու ճաղաշարքեր: Կապալառուն տեղադրում է ամուր ցանկապատ (1.5-2մ բարձրությամբ պլաստիկ ցանց կամ բետոնե բլոկեր) գլխավոր ճարտարագետի կողմից նշված հատվածներում: Կապալառուն պատշաճորեն տեղեկացնում է հանրությանը ընթացող շինարարական աշխատանքների մասին. տեղադրվում են համապատասխան ցուցանակներ, վտանգի և աշխատող մեքենաների և/կամ սարքավորումների առկայության մասին նախազգուշացնող վահանակներ, և տեսանելիորեն փակցվում են մուտքն արգելող պաստառները: Հայտարարությունների և պաստառների թավ տառերով տեքստը կլինի մայրենի լեզվով:

**Պատասխանատու անձինք**

145. Գլխավոր ճարտարագետի շրջակա միջավայրի/ԱևԱ մասնագետը պատասխանատու է ՇՄՆՈւ/ԲԿՊ-ի Աշխատանքային առողջության և անվտանգության պլանով սահմանված պահանջներին՝ Ծրագրի գործողությունների համապատասխանությունը վերահսկելու և դրա մոնիթորինգի, ինչպես նաև՝ ՀՏԶՀ հաշվետվություն ներկայացնելու համար:

146. Կապալառուն աշխատանքային առողջության և անվտանգության մասով ողջ կառավարումը և պատասխանատվությունը պետք է դնի իր շրջակա միջավայրի/անվտանգության ոլորտի մասնագետի վրա, ում կհանձնարարվի իրականացնել կողմնորոշման վերապատրաստման ծրագիրը կապալառուի և ենթակապալառուի անձնակազմի համար վերը մանրամասնեցված թեմաներով, ինչպես նաև՝ համակարգել և աշխատանքայի առողջության և անվտանգության մասին հաղորդել գլխավոր ճարտարագետին, այդ թվում՝ անմիջապես զեկուցել բոլոր վթարների/միջադեպերի և չկայացած միջադեպերի մասին՝ համաձայն Հավելված 7-ում կցված ձևաչափի:

Հանրային քննարկումների և հաղորդակցության պլան

147. Սույն ենթապլանի նպատակն է փաստաթղթավորել բոլոր այն միջոցառումները, որոնք Կապալառուն և գլխավոր ճարտարագետը պարտավոր են իրականացնել՝ ծրագրի

տեղեկատվության հրապարակումը և ծրագրի մասին մշտական հաղորդակցությունը շահագրգիռ կողմերի, ծրագրի ազդեցության ենթակա մարդկանց, ՀԿ-ների և այլ շահագրգիռ խմբերի հետ պահպանելու համար՝ ԱԶԲ ԱՄՔՓ 2009-ին և Հայաստանի օրենսդրությանը համապատասխան: Հանրային քննարկումների և հաղորդակցության պլանը (PCCP/ՀՔՀՊ) ստեղծում է կապ ՀՏԶՀ-ի, գլխավոր ճարտարագետի և կապալառուի (և ենթակապալառուների) և ազդեցության ենթակա մարդկանց (տեղի բնակիչներ, բիզնեսներ և այլ հանրություն) միջև նախապես և շինարարական աշխատանքների ու հնարավոր ազդեցությունների ժամանակ խորհրդակցության ու խորհրդատվության ուղի տրամադրելու կապակցությամբ: Այս ենթապլանը նպատակ ունի ապահովել բոլոր շահագրգիռ կողմերի բովանդակալից ներգրավումը և բարձրացնել հանրային իրազեկությունը ծրագրի մասին տեղեկատվության, այդ թվում՝ շինարարական աշխատանքների և հարակից գործողությունների ժամանակացույցի, զբաղվածության հնարավորությունների և ծրագրի օգուտների յուրաժամանակյա տարածման միջոցով:

148. Այս ենթապլանը պետք է պարունակի բոլոր շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ տեղական բնակչության մտահոգությունների և շահերի բավարարման ընդհանուր պահանջները, և կապալառուից՝ արդյունավետ ԲԼՄ-ի ստեղծման պահանջը:

149. Ելնելով այս նպատակից՝ ՀՔՀՊ-ը ներառում է.

a. Նախաշինարարական փուլի և հետագա պարբերական հանդիպումներ՝ ծրագրի վերաբերյալ հանրությանը տեղեկատվության և խորհրդատվության հնարավորություններ տալու նպատակով, ինչը ներառում է հանրությանը ԲԼՄ-ի և հարակից ընթացակարգերի մասին իրազեկում:
b. Կապալառուի կողմից իրականացվող ԲԼՄ:
c. Տեղեկատվության հրապարակում:

**Հանդիպում նախքան շինարարությունը**

150. Կապալառուի կողմից կկազմակերպվի և կանցկացվի հանրային հանդիպում նախքան շինարարությունը՝ մոբիլիզացիայի ժամանակահատվածում, տարածք մուտք գործելու և ՀՏԶՀ-ի կողմից շինարարական աշխատանքների մեկնարկի թույլտվությունը տրամադրվելուց անմիջապես հետո, քաղաքացիական աշխատանքների մեկնարկից առնվազն 10 օր առաջ:

151. Կապալառուն տեսանելի հանրային վայրերում պետք է փակցնի ցուցապաստառներ, որոնցում կհայտարարվի շինարարությանը նախորդող հանդիպման ամսաթվի, վայրի և նպատակի մասին, և այդ հայտարարությունները պետք է բաժանի ազդեցության ենթակա մարդկանց շրջանում: Ծանուցումներում պետք է տրվեն նաև կոնտակտային տվյալները:

152. Կանցկացվեն խորհրդատվական հանդիպումներ նախքան շինարարությունը՝ տեղական համայնքի համար ծրագիրը, շինարարական աշխատանքների ծրագիրը, ՇՄՆՈւ-Ն/ԲԿՊ-Ն, շրջակա միջավայրի պահպանության և առողջության ու անվտանգության վերաբերյալ իրազեկման ծրագիրը, սպասվող բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, զորօրինակ՝ փոշու ավելացումը, աղմուկը, ճանապարհների ժամանակավոր փակումները և երթևեկության արտաուղղումները, ինչպես նաև՝ ԲԼՄ-ը ներկայացնելու և քննարկելու նպատակով:

153. Կապալառուն պետք է բարձրացվող հարցերն ուղղի գլխավոր ճարտարագետին, եթե ազդեցության ենթակա անձանց մեկնաբանությունները/խնդիրները դուրս են նրա պատասխանատվության շրջանակից: Կապալառուն պետք է զեկուցի խնդիրների կարգավիճակի (լուծված/չլուծված) մասին ամսական առաջընթացի մասին առաջին

հաշվետվությունում: Կապալառուն պետք է թափանցիկության համար ապահովի աշխատող հետադարձ կապի մեխանիզմ շահագրգիռ կողմերի համար, արժեքավոր զգայուն ընկալիչներ և ծրագրի կողմից ազդեցության ենթակա և շահագրգիռ հանրության մասնակցությունը: Հանդիպման մասնակիցների մասով մանրամասները և նրանց մեկնաբանությունները պետք է արձանագրվեն Կապալառուի կողմից և ներառվեն ԲԿՊ-ում:

**Բողոքների լուծման մեխանիզմ**

154. Մշակվել է Բողոքների լուծման մեխանիզմը՝ ազդեցության ենթակա մարդկանց հետ հաղորդակցվելու համար, ինչի նպատակն է ծրագրի կատարողականի վերաբերյալ նրանց մտահոգությունները, գանգատները, բողոքներն ու առաջարկությունները ստանալը և դրանց լուծումը հեշտացնելը. այս մեխանիզմը պետք է պահպանվի Ծրագրի ողջ ընթացքում: Մշտական հաղորդակցությունը տեղական համայնքների անդամների, շահագրգիռ կողմերի և լայն հասարակության հետ կպահպանվի կապալառուի կողմից ստեղծված ԲԼՄ-ի միջոցով՝ համաձայն ՇՄՆ-ի/ԲԿՊ-ի (մանրամասների համար տե՛ս Հավելված 4-ը): Ցուցատախտակների և պաստառների տեսքով մշտական կապի միջոցները նախապես կներկայացվեն ազդեցությունը կրող բնակչության ուշադրությանը՝ ցանկացած անհարմարությունների, այդ թվում՝ երթևեկության մուտքի և պայմանների, կամ տեղական ջրամատակարարման, էլեկտրականության ընդհատումների և այլնի մասին նրանց ժամանակին տեղեկացնելու նպատակով:

155. ԲԼՄ-ը նախատեսելու է աջակցել տուժած անձանց իրենց բողոքները ներկայացնելու հարցում և նկարագրել բողոքները ժամանակին ու արդյունավետ կերպով լուծելու համար նախատեսված մեխանիզմը: Հնարավոր ներգրավված կողմերն են ազդեցության ենթակա անձինք, այլ շահագրգիռ կողմերը, կապալառուն, գլխավոր ճարտարագետը, ՀՏԶՀ-ը, ՏԿԵՆ-ը և դատարանը: Հասարակությունը ԲԼՄ-ի մասին կտեղեկացվի նախաշինարարական փուլի հանրային քննարկման ժամանակ: Բացի այդ, ԲԼՄ-ի առկայության մասին տեղեկատվությունը և ԱԵԱ-ների կողմից առաջարկությունների կամ բողոքների ներկայացման համար ձեռնարկվելիք քայլերը հրապարակված են ՀՏԶՀ-ի կայքում, ինչպես նաև՝ կապալառուի կողմից շինարարական տեղամասերում տեղադրված ծրագրի տեղեկատվական ցուցատախտակում:

156. ԲԼՄ-ը ներառելու է.

- ✓ Շինարարական տեղամասի մուտքի մոտ տեղադրվող՝ հանրության համար համապատասխան տեղեկատվություն պարունակող պաստառներ կամ ծրագրի տեղեկատվական ցուցատախտակներ. դաշտային գրասենյակի գտնվելու վայրը, աշխատանքային ժամերը, պատասխանատու կոնտակտային անձանց անունները, «թեժ գծի» հեռախոսահամարները, փոստային և էլեկտրոնային փոստի հասցեները և այլն:
- ✓ Բողոքների հաշվառման գրանցամատյանը, որը պետք է առկա լինի դաշտային գրասենյակում կամ ազդեցության ենթակա մարդկանց համար որևէ այլ հեշտ հասանելի վայրում:
- ✓ Կապալառուի ներկայացուցիչը (շինարարության աշխղեկը, ճարտարագետը, սոցիալական կամ բնապահպանական հարցերով պատասխանատու անձը) տեղամասում պատասխանատվություն է կրում ազդեցության ենթարկվող անձանց կողմից բարձրացված բողոքների/առաջարկությունների հասցեագրման և դաշտային գրասենյակում Կապալառուի կողմից պահվող բողոքների գրանցամատյանում առաջարկի/բողոքի գրանցումը թույլ տալու համար: Կապալառուի ներկայացուցիչը գրառումներ է կատարում բողոքի/առաջարկի վերաբերյալ. սկզբնական տվյալները (ԱԵԱ-ների անունը, բողոքի ներկայացման ամսաթիվը, խնդրի նկարագրությունը, հետագա գործողությունները և լուծման կարգավիճակը):

157. Կապալառուն գրանցամատյանում գրանցում է բոլոր բողոքները (բանավոր և գրավոր), ինչպես նաև՝ կիրառվելիք կարգավիճակը, լուծումը և մեղմման միջոցառումը: Եթե խնդիրը

դուրս է կապալառուի պարտականություններից, ապա բողոքը կուղղվի ճարտարագետին: Եթե ճարտարագետը չի կարողանում լուծել բողոքը, ապա այն կուղղվի ՀՏԶՀ:

158. Ծրագրի Բողոքների լուծման մեխանիզմի ընթացակարգային քայլերը.

- ✓ Վարել բողոքների գրանցամատյան (անունը, խնդրի նկարագրությունը, մուտքի ամսաթիվը, պատասխանի ամսաթիվը, հետագա հերթական գործողությունները և լուծման կարգավիճակը):
- ✓ Համոզվեք, որ ճարտարագետին բողոքների և առաջարկությունների արագ փոխանցման մեխանիզմը գործում է:

## Բուսական աշխարհի պահպանության և բուսականությունից մաքրման պլան

159. Այս ենթապլանի նպատակն է փաստաթղթավորել կապալառուի և գլխավոր ճարտարագետի մոտեցումը բուսական և կենդանական աշխարհի վրա ազդեցությունները նվազագույնի հասցնելու հարցում: Պլանը մշակվել է շրջակա միջավայրի նախարարության քաղաքականությանը և «Բուսական աշխարհի մասին» (23.11.2009 թ.) և “«Կենդանական աշխարհի մասին» օրենքներին (03.05.2000 թ.), ինչպես նաև՝ բուսականությունից մաքրման աշխատանքների համար քիմիական նյութերի օգտագործմանը վերաբերող օրենսդրական կարգավորումներին համապատասխանելու նպատակով:

160. Թեև ծրագրի տարածքում բուսական և կենդանական աշխարհի վրա ազդեցության նշանակությունը գնահատվում է որպես ցածր (տե՛ս Աղյուսակ 5-ը), այնուամենայնիվ, նախատեսվում են տեղայնացված և ոչ լայնածավալ հավանական բնապահպանական անբարենպաստ ազդեցությունները մեղմելու միջոցառումներ: Այստեղ ընդհանուր սկզբունքն է՝ սահմանափակել անհարկի ծառահատումները, առավելագույնս խուսափել տարածքի հետագա աղտոտումից և հնարավորինս պահպանել բնությունը:

161. Շինարարական աշխատանքների արդյունքում կենդանական աշխարհի պաշտպանության միջոցառումները նպատակ ունեն կանխել կենդանիների բնադրավայրերի ցանկացած անհարկի ոչնչացում, բարձրացնել աշխատողների իրազեկվածությունը շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ՝ խուսափելու կենդանիների բնադրավայրերը, բներն ու որջերը ոչնչացնելուց, ինչպես նաև կենդանիների սպանությունից: Կապալառուն պարտավոր է պատասխանատվություն կրել ԲԿՊ-ի մատրիցայում թվարկված մեղմման միջոցառումների իրականացման համար:

162. Ծառերի և թփերի պատշաճ կառավարումն ապահովելու նպատակով՝ կապալառուն պետք է ձեռնարկի իր սեփական հետազոտությունը և հաստատի, որ ծրագրի ազդեցության գոտում ընկած և շինարարության գործընթացին խոչընդոտող բոլոր ծառերն ու թփերը նույնականացվել են՝ ծառերի անհարկի հատումից խուսափելու համար: Պետք է նաև նույնականացվեն շինարարության տեղամասին մոտ գտնվող ծառերն ու թփերը, որոնք կարող են վնասվել աշխատանքների արդյունքում, որպեսզի ապահովվի դրանց պաշտպանությունը: Կապալառուն պետք է պատրաստի Ծառերի կառավարման պլան Բուսական աշխարհի պաշտպանության և բուսականությունից մաքրման պլանի շրջանակներում, և մոբիլիզացիայի ընթացքում ներկայացնի գլխավոր ճարտարագետի հաստատմանը՝ համաձայն հետևյալ ուրվապատկերի.

A. Ներածություն (փաստաթղթի նպատակը):
B. Թույտվություններ և հաստատումներ:
C. Ազդեցության գնահատում:
  a) Շինարարության ընթացքին խոչընդոտող այն ծառերի (թփերի) ստուգումը, որոնք պետք է հատվեն:

b) Աշխատանքային տարածքին մոտ գտնվող՝ պաշտպանության կարիք ունեցող ծառերի (թփերի) նույնականացում:
D. Մեղմման միջոցառումներ:
c) Ծառերի տնկման (վերատնկման) տեղը և ժամանակացույցը՝ համաձայն կանաչապատման նախագծի և Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի հետ համաձայնությունների.
d) Ծառերի հատման ընթացակարգ և փայտի թափոնների կառավարում:
e) Այն ծառերի պաշտպանությունը, որոնք կարող են վնասվել աշխատանքներից:
f) Նոր տնկված ծառերի (թփերի) պահպանությունը:
E. Թույլտվություններ/համաձայնություններ, քարտեզներ, աղյուսակներ, նկարներ և այլն պարունակող հավելվածներ:

163. Կապալառուն պետք է թարմացնի Ծառերի կառավարման պլանը, ծանուցի գլխավոր ճարտարագետին և ստանա հաստատում նախքան ծառերի և թփերի հատման գործընթացը սկսելը: Այն տարածքները, որոնք պետք է մաքրվեն կամ այլ կերպ խաթարվեն, պետք է հասցվեն նվազագույնի և սահմանազատվեն:

164. Բուսականությունից մաքրման նպատակներից ելնելով՝ թունաքիմիկատներ չպետք է օգտագործել: Անհրաժեշտության դեպքում պետք է օգտագործել միայն այն թունաքիմիկատները, որոնք թվարկված չեն Կառավարության 2005 թվականի մարտի 17-ի թիվ 293 որոշման մեջ և պետք է բացառել ԿՕԱ պարունակող քիմիական նյութերի օգտագործումը:

165. Կապալառուն պետք է հատված ծառերի/թփերի փոխարեն տնկի նորերը: Ընդհանուր կանոնը կլինի 1:10 հարաբերակցությունը (10 ծառ/թուփ՝ մեկ կտրված ծառի/թփի փոխարեն): Ծառերը/թփերը պետք է տնկվեն ՀՏԶՀ-ի կողմից հաստատված կանաչապատման պլանում նշված վայրերում և Ոսկեհատ համայնքի հետ համաձայնեցված տարածքներում՝ Ծառերի կառավարման պլանին համապատասխան, հիմնվելով տեղական բնակչության հետ քննարկումների վրա:

166. Աշխատանքների արդյունքում խաթարված ժամանակավոր օգտագործվող հողամասերի (առկայության դեպքում) վերականգնմանն ուղղված միջոցառումները կիրականացվեն այնպիսի բույսերով, որոնք համարվում են բնորոշ տվյալ տարածքի համար: Խստիվ կարգելվեն բույսերի աճելավայրերի/աճող տարածքների ցանկացած անօրինական տեղափոխումը և այդ տարածքում այլ տեսակների ակլիմատիզացիան, ինչպես նաև՝ օտար/ինվազիվ տեսակների ներմուծումը: Կապալառուն պետք է տրամադրի օգտագործված տարածքներում բուսականության վերականգնման մեթոդական փաստաթուղթը:

Շրջակա միջավայրի պաշտպանության պլան

167. Սույն պլանի նպատակն է փաստաթղթավորել կապալառուի և գլխավոր ճարտարագետի մոտեցումը շինարարական աշխատանքների արդյունքում հողը, օդը և ջրային մարմինները էրոզիայից և նստվածքակուտակումից, փոշուց և այլ արտանետումներից, ինչպես նաև աղմուկից ու վիբրացիայից պաշտպանելու միջոցառումների իրականացման հարցում: Պլանը պարունակում է ազդեցությունների ռիսկը՝ ընդհուպ մինչև օրենսդրորեն ընդունելի մակարդակ նվազեցնելու մեղմման միջոցառումներ բոլոր օգտագործվող տարածքների համար. շինարարության տեղամասեր, ճամբարներ, մերձատար ճանապարհներ, քարհանքեր, գրունտային փոսեր, լցակույտավայրեր և այլն: Մասնավորապես պետք է հասցեագրել հետևյալ ասպեկտները. (i) օդի աղտոտվածության և փոշու վերահսկողություն, (ii) աղմուկի և վիբրացիայի վերահսկողություն, (iii) հողի էրոզիայի և նստվածքների վերահսկողություն և (iv) ջրի որակի և նստվածքների վերահսկողություն:

**Օդի աղտոտվածության և փոշու վերահսկողություն**

168. Մշակվում են կառավարման միջոցառումներ՝ քանդման և շինարարական աշխատանքների արդյունքում առաջացող փոշու ու գազի արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով, այդպիսով՝ վերահսկելով օդի աղտոտվածությունը և հարևանությամբ բնակվող հանրության վրա առողջության ու անհանգստության հնարավոր ազդեցությունը: Կապալառուից պահանջվում է իրականացնել օդի որակի վերահսկողություն՝ աշխատանքների ժամանակացույցի պատշաճ պլանավորման և կազմակերպման միջոցով: Հիմնական սկզբունքը հին շենքերի քանդման համար պատշաճ տեխնոլոգիաների ներդրումն ու կիրառումն է, հողի մակերևույթների վրա ազդեցության տևողությունը նվազագույնին հասցնելը, փորված ենթահողի և մնացորդային շինանյութի զանգվածի ժամանակին հեռացումը:

169. Կապալառուից պահանջվում է հնարավորության դեպքում ձեռքի գործիքների համար (կամ գործնականում) օգտագործել էլեկտրաէներգիա կամ մարտկոցի էներգիա, այլ ոչ՝ դիզելային վառելիք, և խուսափել դիզելային վառելիքով կամ բենզինով աշխատող գեներատորների օգտագործումից: Կապալառուն պետք է խուսափի չափից շատ գազերի արտանետումներ առաջացնող հնացած մեքենաների ու սարքավորումների օգտագործումից և շահագործումից, ինչպես նաև պետք է իրականացնի տեխնիկական վիճակի պարբերական կրկնակի ստուգումներ և յուրաժամանակյա վերանորոգում: Շինարարության հետ կապված հետագա միջոցառումները մանրամասնորեն ներկայացված են ԲԿՊ-ի մատրիցանում, պարբերություն 5. «Շրջակա միջավայրի պաշտպանության պլան»:

**Աղմուկի և վիբրացիայի վերահսկողություն**

170. Աղմուկի և վիբրացիայի վերահսկողության նպատակն է նվազագույնի հասցնել և կառավարել աղմուկի և վիբրացիայի բարձր մակարդակի հնարավոր ազդեցությունները, որոնք առաջացնում են առողջության և գույքի համար այնպիսի վտանգներ, ինչպիսիք են՝ անհանգստությունները և լսողական խանգարումները թե՛ շինարարության աշխատողների և թե՛ մոտակայքում բնակվող հանրության համար: Վերահսկողության առավել նշանակալի միջոցառումները ծրագրի շինարարության փուլում ժամանակավորապես աճող աղմուկի և վիբրացիայի մեղմումն է: Այս միջոցառումները ներառված են ՇՄՆՈւ-ում և պետք է մշտադիտարկվեն տեսողական եղանակով և/կամ գործիքային չափումների միջոցով: Կապալառուից պահանջվում է պահպանել աղմուկին և վիբրացիային վերաբերող Հայաստանի օրենսդրական կարգավորումները (Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, 2002թ. մարտի 6, Հրաման N138, քաղաքաշինություն):

171. Շինարարական գործողությունների ազդեցությունը շրջակայքում գտնվող գույքի (տներ, շենքեր, կառույցներ) վրա վերահսկելու նպատակով գլխավոր ճարտարագետին կտրվի փորման և խտացման աշխատանքների (եթե այդպիսիք կան) դեպքում վիբրացիայի ենթարկվող շենքերի շրջանակի համար՝ վիբրացիայի պարբերական գործառնական գործիքային չափումների իրականացման պատասխանատվությունը: Վիբրացիայի գործառնական չափումները կիրականացվեն մասնագիտացված կառույցի կողմից: Ծրագրի կամ օրենսդրության շեմերը գերազանցելու դեպքում աշխատանքային գործընթացը ժամանակավորապես կդադարեցվի, և շինարարության իրականացման եղանակը կվերանայվի:

**Հողի էրոզիայի և նստվածքների վերահսկողություն**

172. Սույն ենթապլանն ընդգրկում է հողի և հողի վերին շերտերի կառավարմանն առնչվող խնդիրները: Կմշակվեն Շրջակա միջավայրի և հողի վերին շերտի պաշտպանության տեխնիկական մասնագրեր նախագծի շրջանակներում: Կապալառուից պահանջվում է ղեկավարվել Հայաստանի համապատասխան օրենսդրությամբ սահմանված՝ հողի վերին շերտի պահպանման կարգավորումներով:

173. Հողի էրոզիայի և նստվածքների վերահսկողության ենթապլանը ներառում է տեղամասում աշխատանքների համապատասխան կազմակերպման միջոցառումներ՝ հողի

վերին շերտի կորուստները նվազագույնի հասցնելու և հողի էրոզիայից խուսափելու նպատակով: Կապալառուն պետք է իրականացնի էրոզիայի վերահսկողություն համաձայն Տեխնիկական մասնագրերի՝ Էրոզիայի կառավարման, ինչպես նաև պետք է կատարի հողի վերին շերտի հանում և կուտակում՝ համաձայն Հայաստանի օրենսդրության և Տեխնիկական մասնագրերի՝ Հողի վերին շերտը:

Ստորգետնյա ջրերի պաշտպանության պլան

174. Թեև ստորգետնյա ջրերի վրա ազդեցությունը հավանական չէ, այնուամենայնիվ, առաջարկվում են մի շարք միջոցառումներ, որոնք ներառված են նախագծում: Շինարարության ընթացքում աղտոտվածությունը նվազագույնի հասցնելու մեղման ընթացակարգը նախատեսվում է ԲԿՊ-ում. խոսքը մասնավորապես վերաբերում է վառելիքի պահեստավորման, վերալիցքավորման կայանների և մեքենաների սպասարկման կետերի համար սահմանափակ տարածքների տրամադրման, ցանկացած թափման/արտահոսքի մաքրման, և մասշտաբային թափումների ու արտահոսքերի դեպքում ՇՄՆ-ին զեկուցելու համար նախատեսված միջոցառումներին:

Կոմունալ ծառայությունների պաշտպանության պլան

175. Սույն ենթապլանի նպատակն է փաստաթղթավորել կապալառուի մոտեցումը կոմունալ ծառայությունների նախագծման համաձայն՝ կոմունալ ծառայությունների էկոլոգիապես մաքուր և սոցիալամետ անվտանգ տեղադրումը կազմակերպելու, տեղափոխման ոչ ենթակա նույնականացված կոմունալ ծառայությունները պաշտպանելու, և շինարարական աշխատանքների ընթացքում պատահող կոմունալ ծառայությունները պաշտպանելու կամ տեղափոխելու հարցում:

176. Կոմունալ ծառայությունների նախագծերը հաստատվում են կոմունալ ծառայությունների սեփականատիրոջ կողմից: Կոմունալ ծառայությունների պաշտպանության և տեղափոխման պլանը կիրականացվի Տեխնիկական մասնագրերի «Կոմունալ ծառայությունների տեղափոխում» անվանումով հատուկ բաժնին համապատասխան: Կոմունալ ծառայությունների տեղափոխման գործընթացի պատշաճ կառավարման համար մեղման միջոցառումները փոխկապակցված են Հանրային քննարկումների ու հաղորդակցության պլանի հետ և ներկայացված են ԲԿՊ մատրիցայում:

Շինաշխատանքային ճամբարների պլան

177. Սույն ենթապլանի նպատակն է փաստաթղթավորել կապալառուի և գլխավոր ճարտարագետի մոտեցումը շինաշխատանքային ճամբարների կառավարման միջոցառումների իրականացման հարցում՝ հաշվի առնելով, որ ծրագրի տարածքը գրեթե ամբողջությամբ գտնվում է գյուղական հանրային տարածքում:

178. Ենթապլանը պարունակում է կապալառուին առաջադրվող ընդհանուր պահանջներ՝ կապված գլխավոր գրասենյակի և շինարարական դաշտային ճամբարների պլանավորման ու ստեղծման, մեքենաների կայանատեղիների կազմակերպման, նյութերի ու սարքավորումների պահեստավորման, ինչպես նաև՝ աշխատող անձնակազմի համար սննդի և հանգստի օբյեկտների սանիտարական պայմանների հետ: Միջոցառումները, որոնք ներառված են ԲԿՊ-ում, պետք է իրականացվեն կապալառուի կողմից՝ բնակիչների անհանգստությունը նվազագույնի հասցնելու, բնակչության և տեղական իշխանությունների հետ ցանկացած կոնֆլիկտային իրավիճակից խուսափելու, ինչպես նաև՝ հողի և ջրի աղտոտումը նվազագույնի հասցնելու նպատակով:

179. Կապալառուի և ենթակապալառուների գրասենյակների, աշխատողների համար բնակարանների, սարքավորումների և տրանսպորտային միջոցների պահեստավորման, կայանատեղիների և մեքենաների ավտոտեխսպասարկման կետերի ու նյութերի

ժամանակավոր պահեստավորման տարածքի մասով հիմնական չափորոշիչները/սկզբունքը՝ ծրագրի ազդեցության գոտում դրանց տեղադիրքի պահանջն է, որը գտնվում է գործող միջնակարգ դպրոցի տարածքում: Կբացառվի ծրագրի համար հատկացված տարածքից դուրս որևէ տարածքի ցանկացած տիպի օգտագործում:

180. Ճանապարհի ուղեգծից դուրս շինարարական ճամբարի տեղադիրքը, ինչը կարող է անհրաժեշտ լինել ծրագրի իրականացման ընթացքում և օգտագործվել կապալառուի կամ այլ ենթակապալառուների կողմից, կընտրվի կապալառուի կողմից՝ գլխավոր ճարտարագետի հետ խորհրդակցելու և նրա հավանությունը ստանալու միջոցով: Կապալառուն պետք է գրավոր թույլտվություն ստանա հողամասի սեփականատիրոջից՝ նախքան որևէ օբյեկտի ստեղծումը: Ճամբարի տեղանքի ընտրությունը, կապալառուի գրասենյակների համար կառույցների տեղակայումը, սարքավորումների պահեստավորումը և տրանսպորտային միջոցների կայանատեղին, հատկապես՝ դպրոցի տարածքից դուրս և բնակելի ու գյուղատնտեսական տարածքին մոտ գտնվելու դեպքում, կկազմակերպվեն ելնելով հողի սեղմումը և աղտոտումը, ինչպես նաև մերձակայքում բնակվող հանրության անհանգստությունը նվազագույնի հասցնելու սկզբունքից:

181. Դաշտային ճամբարները պետք է ստեղծվեն կապալառուի մոբիլիզացիայի պլանի համաձայն, իսկ տեղադիրքի սխեման պետք է կապալառուի կողմից տրամադրվի գլխավոր ճարտարագետին: Կանխարգելիչ/մեղմման միջոցառումները մանրամասնորեն ներկայացված են ԲԿՊ-ի մատրիցայում:

**Ջրամատակարարում**

182. Շինարարության ընթացքում տեխնիկական նպատակներով ջրամատակարարումը կկազմակերպվի համապատասխան սուբյեկտի հետ մատակարարման պայմանագրով: Մանրամասն նախագծման փուլում կուսումնասիրվի ամենամոտ գործող ջրային համակարգերին միանալու հնարավորությունը՝ ջրի մատակարարման պայմանագիր կնքելու հեռանկարով: Հաստատումը/պայմանագիրը կապալառուի կողմից կտրամադրվի գլխավոր ճարտարագետին մինչև աշխատանքների մեկնարկը:

183. Խմելու ջուրը պետք է առկա լինի շինարարության բոլոր աշխատանքային հատվածներում: Կապալառուն պետք է մատակարարի բավարար քանակությամբ շշալցված խմելու ջուր (օրական առնվազն երկու լիտր շշալցված խմելու ջուր մեկ անձի հաշվով) ինչպես ղեկավար, այնպես էլ բանվորական անձնակազմի համար:

**Էլեկտրամատակարարում**

184. Շինարարական ճամբարի տեղամասին էլեկտրաէներգիա կտրամադրվի համապատասխան սուբյեկտի հետ մատակարարման պայմանագրի կամ կոմպակտ գեներատորների տեղադրման միջոցով: Էլեկտրաէներգիա կպահանջվի ինչպես շինարարական աշխատանքների, այնպես էլ գիշերային ժամերին շինարարական տարածքի և ճամբարի լուսավորության համար՝ անվտանգության նկատառումներից ելնելով: Կապալառուն պետք է ապահովի բավարար լուսավորություն՝ կապալառուի աշխատողների համար ապահով աշխատանքային պայմանների ստեղծումը երաշխավորելու համար բոլոր այն վայրերում, որտեղ աշխատանքներն ընթացքի մեջ են:

**Սանիտարական հարմարություններ**

185. Կապալառուն ճամբարում տրամադրում է ժամանակավոր սանիտարական հարմարություններ կապալառուի բոլոր աշխատողների համար: Սանիտարական հարմարությունները (զուգարաններ և լվացման, ճաշի, սուրճի ընդմիջման, հանգստի, ծմռանը տաքացման հարմարություններ) պետք է լինեն համապատասխան հզորությամբ, պատշաճ կերպով պահպանվեն շինարարության ողջ ընթացքում և գործնականում առավելագույնս

քողարկված լինեն հանրության տեսադաշտից: Կապալառուն տեղամասում կապահովի նման սանիտարական հարմարությունների հասանելիությունը բոլոր աշխատողների համար: Ժամանակավորապես ստեղծված կառույցները պետք է աշխատանքներն ավարտվելուն պես ժամանակին հանվեն:

**Մեքենաների կայանատեղի և պահեստային տարածքներ**

186. Կապալառուն ճամբարի սահմաններում կկազմակերպի նյութերի ժամանակավոր պահեստավորման, մեքենաների կայանման և վերանորոգման արտադրամասերի տարածքներ: Կապալառուն կապահովի այդ օբյեկտների անվտանգությունն ու մաքրությունը, որոնք տեղակայվելու են այնպես, որ չխանգարեն համայնքի անդամներին:

187. Նյութերի ժամանակավոր պահեստավորման վայրերը պետք է պատշաճորեն պահպանվեն. կանոնավոր կույտերով հավաքված, իսկ սորուն նյութերի դեպքում՝ ծածկված նյութերը, պարկերն ու տարաները պետք է ապահովված լինեն տվյալ նյութի անվանման և վնասակարության /այն է՝ վտանգավոր/ոչ վտանգավոր/ մասին նշում ունեցող պիտակով:

188. Կայանման և վերալիցքավորման տարածքը պետք է կազմակերպել անթափանցելի մակերևույթի վրա: Կապալառուն պետք է խուսափի կայանատեղին մերկ հողի վրա և խոտով ու այլ բուսականությամբ ծածկված տարածքի վրա տեղակայելուց:

Տեղամասի կառավարման պլան (քարհանք և գրունտային փոս, լցակույտավայրեր, բետոնի խմբաքանակի և ասֆալտի գործարաններ)

189. Սույն ենթապլանի նպատակն է փաստաթղթավորել կապալառուի և գլխավոր ճարտարագետի մոտեցումը՝ ծրագրի ազդեցության գոտուց դուրս գտնվող տարածքներում քարհանքերի, գրունտային փոսերի, լցակույտավայրերի, քարաջարդ արտադրամասերի, բետոնի խմբաքանակի և ասֆալտի գործարանների, մերձատար ճանապարհների համար օգտագործվող շինարարական գործողությունների ազդեցությունների կառավարման միջոցառումների իրականացման հարցում, ինչը կարող է պահանջվել աշխատանքների համար:

190. Ծրագիրը չի նախատեսում նոր քարհանքերի և/կամ տեղամասերի բացում շինանյութերի փոխառման համար: Չի նախատեսվում է նաև բետոնի խմբաքանակի կամ ասֆալտ արտադրող գործարանի ստեղծում: Ենթադրվում է, որ մրցույթում հաղթող կապալառուն նյութը կգնի գործող քարհանքերից և/կամ ասֆալտի գործարաններից: Հետևաբար, կապալառուն պարտավոր է գլխավոր ճարտարագետին և ՀՏԶՀ-ին տրամադրել շինանյութի գնման վերաբերյալ պայմանագրերի պատճենները:

191. Չի նախատեսվում նաև նոր լցակույտավայրերի բացում թափոնների տևական հեռացման համար: Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի հետ համաձայնության հիման վրա ողջ թափոնները կհեռացվեն գործող աղբավայրեր: Համապատասխան թույլտվությունը կապալառուի կողմից կտրամադրվի գլխավոր ճարտարագետին:

192. Եթե կապալառուն, այնուամենայնիվ, բացի շինանյութի փոխառման համար նոր քարհանքերը և/կամ տեղամասեր, լցակույտավայրեր, կամ հիմնի բետոնի խմբաքանակի կամ ասֆալտ արտադրող գործարան, ապա ընդհանուր պահանջը կլինի Հայաստանի համապատասխան օրենսդրությանը խստորեն հետևելու և ծրագրի ազդեցության գոտուց դուրս գտնվող՝ ժամանակավորապես օգտագործվող յուրաքանչյուր տարածքի համար Տեղանքին հատուկ բնապահպանական կառավարման պլանի (ՏՀԲԿՊ/SSEMP) պատրաստման և ներկայացման պատասխանատվությունը կապալառուի վրա դնելը:

193. Այն դեպքում, երբ պահանջվում են նոր քարհանքեր, բետոնի խմբաքանակի և ասֆալտի գործարաններ, կապալառուն պետք է տրամադրի համապատասխան մարմինների կողմից

տրված պատշաճ համաձայնագիր/լիցենզիա և պետք է ստանա ՇՄՆ-ի կողմից շրջակա միջավայրի փորձաքննության հաստատումը քարհանքի և գրունտային փոսի, լցակույտավայրի շահագործման մասով, ինչպես նաև գազի արտանետումների թույլտվությունները՝ բետոնի խմբաքանակի կամ ասֆալտ արտադրող գործարանների համար:

## Երթևեկության և հասանելիության կառավարման պլան

194. Սույն Պլանի նպատակն է փաստաթղթավորել կապալառուի և գլխավոր ճարտարագետի ինչպես նաև՝ նրանց աշխատողների մոտեցումը շինարարական աշխատանքների ընթացքում հասարակական երթևեկությունը կառավարելու և շինարարական մեքենաների մուտքը շինարարության տեղամաս իրականացնելու հարցում: Երթևեկության կառավարման և մուտքի պլանը կմշակվի կապալառուի կողմից և կհամաձայնեցվի ՀՏԶՀ-ի ու Ճանապարհային ոստիկանության հետ մոբիլիզացիայի ժամանակահատվածում, և այն կթարմացվի ամեն անգամ, երբ լինի դրա անհրաժեշտությունը: Այս պլանավորման հիմնական սկզբունքը պետք է լինի երթևեկության գերբեռնվածությունից խուսափելը և հանրային երթևեկության ու հետիոտների համար անվտանգ տեղաշարժի պայմանների ապահովումը: Պլանը պետք է պարունակի տրանսպորտային միջոցների կառավարման կարգավորումներ տեղամասում և դրանից դուրս, ինչպես օրինակ՝ կայանման կազմակերպումը, վերանորոգումը, տեխնիկական սպասարկումը և կրկնակի ստուգումը, վերալիցքավորումը և այլն: Կապալառուից պահանջվում է իրականացնել ճանապարհի և գույքի վիճակի հետազոտություն նախքան շինարարությունը՝ տեղական ճանապարհային ցանցի և ճամփեզրի՝ ազդեցության ենթակա գույքի վիճակի փաստագրման նպատակով, և փոխհատուցել ու վերականգնել ցանկացած պատճառված վնաս: Երթևեկության և հասանելիության կառավարման պլանով նախատեսված միջոցառումները թվարկված են ԲԿՊ-ի մատրիցայում:

## Արտակարգ իրավիճակներին արձագանքման և պատրաստվածության պլան

195. Սույն պլանի նպատակն է փաստաթղթավորել կապալառուի և գլխավոր ճարտարագետի մոտեցումը շինարարական աշխատանքների ընթացքում արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու միջոցառումների իրականացման հարցում: Կապալառուի կողմից պետք է պատրաստվի Արտակարգ իրավիճակներին արձագանքման և պատրաստվածության պլանը՝ վթարների/պատահարների, հրդեհի և այլնի դեպքում աշխատանքային առողջությանը և անվտանգությանը, ինչպես նաև՝ համայնքի առողջությանը և անվտանգությանը հասցվող ռիսկերը հասցեագրելու նպատակով:

## Թափոնների և նյութերի հեռացման պլան

196. Սույն պլանի նպատակն է փաստաթղթավորել կապալառուի և գլխավոր ճարտարագետի մոտեցումը շինանյութի պահպանման, ինչպես նաև՝ շինարարության ընթացքում առաջացած թափոնների ու թափուկների հեռացման միջոցառումների իրականացման և շինարարական աշխատանքների ընթացքում ենթադրաբար աղտոտված հողերի կառավարման հարցում:

197. Սույն պլանի՝ թափոնների կառավարման հիմնական փիլիսոփայությունը հիմնված է թափոնների կառավարման մոտեցումների հետևյալ հիերարխիայի վրա (ամենաբարձրից մինչև ամենացածր առաջնահերթությունը).

i. հնարավորության դեպքում խուսափել թափոնների առաջացումից,
ii. նվազագույնի հասցնել թափոնների, այդ թվում՝ աղտոտված հողի առաջացումը,
iii. վերաօգտագործել թափոններն այնքանով, ինչքանով դա գործնականում հնարավոր է,
iv. վերամշակել թափոնները այնքանով, ինչքանով դա գործնականում հնարավոր է, և
v. ցանկացած մնացած թափոնները և տեղահանված աղտոտված հողը շրջակա միջավայրի համար հարմար եղանակով հեռացնել դեպի քաղաքային իշխանությունների կողմից հատկացված վայրեր:

198. Նյութերի կառավարման հիմնական սկզբունքն այն է, որ կապալառուն պետք է պատշաճորեն կազմակերպի բոլոր շինանյութերի մատակարարումը և պահպանումը:

Շինանյութերը պետք է մատակարարվեն ամենօրյա սպառման քանակություններով՝ շինարարության տարածքում դրանց երկար ժամանակ մնալուց, տեղամասերում տարածվելուց և աղբի, փոշու ու ցեխի աղբյուր դառնալուց խուսափելու նպատակով: Այն նյութերը, որոնք չեն մատակարարվում ամենօրյա սպառման քանակություններով, պետք է պահվեն կապալառուի մոբիլիզացիայի պլանում նշված հատուկ հատկացված պահեստային տարածքում և ապահովված լինեն անվտանգության և աղտոտման վերահսկողության կանոններն ապահովող անհրաժեշտ հարմարանքներով, այն է՝ տարաներով, պատսպարված պահեստով, մնացորդների հավաքման տարաներով և այլնով:

199. Չափից ավելի ենթահողային նյութեր կարող են առաջանալ փորման և համահարթեցման աշխատանքների արդյունքում: Այդ դեպքում դուրս բերված նյութերը կդասակարգվեն, կտեղափոխվեն և կհեռացվեն Հայաստանի օրենսդրական պահանջներին համապատասխան: Կապալառուն պետք է դիմի համապատասխան մարմիններին և ստանա բոլոր անհրաժեշտ օրենսդրական թույլտվությունները և լիցենզիաները թափոնների, այդ թվում՝ վտանգավոր թափոնների դասակարգման, փոխադրման, վերամշակման և հեռացման համար:

200. Վերը նշված պատշաճ հավաքման, առանձնացման, պահեստավորման, հեռացման և ուսուցման/վերապատրաստման մեթոդների սկզբունքների համաձայն՝ թափոնների, թափուկների և աղտոտված հողի կառավարումը կապահովի թափոնների առաջացման և աղտոտված հողի մանիպուլյացիայի հետ կապված ռիսկի ցածր մակարդակ: Լուծիչներն ու ցնդող նյութերը պետք է գործարկվեն ՇՄՆ-ի կողմից ամրագրված ընթացակարգերի, Հայաստանի օրենսդրության և լավագույն միջազգային գործելակերպերի համաձայն:

201. Թափոնների կառավարման ընդհանուր սկզբունքները և առաջարկվող մեղմման միջոցառումները, այդ թվում՝ թափոնների հաշվառման պահանջները, թվարկված են ԲԿՊ-ի մատրիցայում: Կապալառուից պահանջվում է տրամադրել թափոնների կառավարման և թափոնները նվազագույնի հասցնելու ավելի մանրամասն ծրագիր, որը կներառի հետագա վերաօգտագործման նպատակով՝ բետոնից մաքրվող կեղտաջրերի և նավթի/վառելիքի/քսանյութերի մնացորդների հավաքման եղանակները: Կապալառուն պետք է ղեկավարությանը ներկայացնի շինարարական աշխատանքների ընթացքում առաջացած բոլոր տեսակի նյութերի և թափոնների վերաբերյալ սեփական մոտեցման մանրամասները:

**Ոչ վտանգավոր թափոններ**

202. Քանդման աշխատանքների ընթացքում առաջացող թափոնները և շինարարությանն առնչվող այլ թափոնները, ինչպիսիք են՝ ապամոնտաժված կառույցները, բետոնե բլոկերը և ոչ վտանգավոր շինարարական բեկորները, զորօրինակ՝ մետաղական, պլաստմասե, փայտե մասերը և այլն, պետք է հեռացվեն շինարարության տեղամասից: Բոլոր ոչ վտանգավոր թափոնները կառանձնացվեն վերաօգտագործման համար պիտանի նյութի և ոչ պիտանի թափոնների: Պիտանի նյութը կհանձնվի սեփականատիրոջը և կհեռացվի տեղամասից: Ոչ պիտանի մասը կհեռացվի տեղամասից և կտեղակայվի հաստատված տեղամասերում-աղբավայրերում: Կապալառուն պետք է դիմի Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի պատասխանատուին թափոնների հեռացման տեղամասի հարցով և գրավոր թույլտվությունը տրամադրի գլխավոր ճարտարագետին:

203. Կոշտ թափոնները ներառում են մետաղից և փայտանյութից, բետոնից, թղթից, պլաստմասսայից, ստվարաթղթից, բանկաներից, շշերից, արտադրամասի թափոններից և օրգանական սննդի թափոններից (աղբ ու կեղտ) առաջացող թափոնների կտորտանքները: Կապալառուն պատասխանատվություն է կրում աշխատանքային տարածքի և շինարարության տեղամասի շրջակա տարածքի մաքրության համար: Չի թույլատրվի, որպեսզի որևէ թափոն արտահոսի դեպի շրջակա տարածք: Ցանկացած թափոն, որ դուրս է թռել տարաներից, կվերցվի

կապալառուի/ենթակապալառուի կողմից: Ամբողջ աղբը կապալառուի կողմից կտեղափոխվի Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի կողմից նախատեսված աղբավայր:

**Հեղուկ և վտանգավոր թափոններ**

204. Հեղուկ վտանգավոր նյութերը և դրանց թափոնները դյուրավառ և/կամ թունավոր նյութեր են կենսական ձևերի համար: Վտանգավոր նյութերը և դրանց թափոնները ներառում են հետևյալներից որևէ մեկը և պահանջում պահեստավորման, դրանց հետ վարվեցողության և հեռացման հատուկ ընթացակարգեր. վառելանյութ, ներառյալ՝ բենզինը և դիզելը, թափոնային յուղը, թափոնային բենզինը, դիզելը և բիտումը, և ցեմենտի լվացման ջուր:

**Թափոնները նվազագույնի հասցնելը**

205. Կապալառուն պետք է վերաօգտագործի առաջացած թափոնների, զորօրինակ՝ փորված հողի, ապարների և քարերի, քանդված ասֆալտի, բետոնի մասերի, թափոնային յուղի և բետոնի կեղտաջրերի այն մասը, որ գործնականում կլինի հնարավոր: Այսպիսով, կապալառուն կնվազեցնի թափոնների քանակը և կհամապատասխանի աղտոտման վերահսկողության պահանջներին:

Մշակութային ժառանգության կառավարման պլան

206. Չնայած մշակութային և հնագիտական ժառանգության վրա ազդեցությունը գնահատվում է որպես «ոչ նշանակալի» և աննշան, այնուամենայնիվ, Մշակութային ժառանգության կառավարման ենթապլանը ներառված է ԲԿՊ-ում: Այս ենթապլանի նպատակն է փաստաթղթավորել կապալառուի և գլխավոր ճարտարագետի մոտեցումը հնագիտական պատահական գտածոների հայտնաբերման ընթացակարգի և ծրագրի ազդեցության գոտում հավանաբար հայտնաբերվող արժեքների պահպանման և զգույշ տեղափոխման միջոցառումների հարցում:

14. Տեղամասի վերականգնման, կանաչապատման և բուսական ծածկույթի վերականգնման պլան

207. Սույն պլանի նպատակն է փաստաթղթավորել կապալառուի և գլխավոր ճարտարագետի մոտեցումը Ոսկեհատի միջնակարգ դպրոցի տարածքի մաքրումը և վերականգնումն իրականացնելու հարցում, որը ներառում է վերականգնման, կանաչապատման և բուսական ծածկույթի վերականգնման միջոցառումները՝ որպես շինարարական աշխատանքների մաս: Ծրագրի ավարտին կամ տեղամասում աշխատանքներն ավարտվելուն պես տեղամասը պետք է մաքրվի բոլոր նյութերի և բեկորների մնացորդներից: Տեղամասը պետք է հնարավորինս վերականգնվի՝ այն հասցնելով իր սկզբնական վիճակին: Այս պլանը տարածվում է բոլոր աշխատանքային տեղամասերի և բոլոր այն տարածքների վրա, որտեղ կապալառուն ստեղծել է հարմարություններ (շարժական տներ, պահեստային տարածքներ, ավտոկայանատեղի և այլն):

208. Լանդշաֆտային նախագծում պետք է ներկայացվեն բուսական ծածկույթի վերականգնման աշխատանքներին առաջադրվող մանրամասն պահանջները՝ հղում կատարելով Տեխնիկական մասնագրերի համապատասխան բաժիններին. Հողի վերին շերտը, Ծառեր և թփեր և Ճիմապատում: Տեսակները պետք է լինեն համեմատաբար հեշտ բազմացվող և պահպանվող:

### Թերությունների վերացման ժամկետ (ԹՎԺ)

209. ԹՎԺ-ի ընթացքում կապալառուն պատասխանատու է լինելու ԱԶԲ ԱՄՔՓ-ին և Հայաստանի օրենսդրությանը՝ բնապահպանական երաշխիքների համապատասխանության համար: ԹՎԺ-ի շրջանակում կապալառուի պարտավորությունները լրացվում են այս ժամանակահատվածի համար սահմանված պահանջներով, և դրանք մանրամասնորեն ներկայացված են ԲԿՊ-ի մատրիցայում:

## Մոնիթորինգ

210. ԲԿՊ-ի շրջանակներում մոնիթորինգը պետք է ներկայացնի ծրագրի մոնիթորինգային համակարգը՝ Հայաստանի օրենսդրությանը և ԱԶԲ-ի ստանդարտներին ու կարգավորումներին ծրագրի գործողությունների համապատասխանությունը ստուգելու նպատակով: «Մոնիթորինգ» բաժինը սահմանում է բնապահպանական մոնիթորինգի պահանջները՝ տեղամաս կատարվող պարբերական տեսչական այցելությունների միջոցով (տեսողական մոնիթորինգ) ԲԿՊ-ով սահմանված մեղմման միջոցառումներին շինարարական գործողությունների համապատասխանությունը ստուգելու նպատակով:

211. ԲԿՊ-ի այս բաժինը ներկայացված է նաև աղյուսակային ձևաչափով (տես Հավելված 6 (բ)-ն՝ Բնապահպանական կառավարման պլան. Մոնիթորինգ), և ներառում է հետևյալ տվյալները.

- ✓ ծրագրի մոնիթորինգի ենթակա գործողություն՝ քանդում, հողային աշխատանքներ, հետլիցք, ասֆալտապատում և այլն,
- ✓ մոնիթորինգի ենթակա պարամետրեր՝ արժեքավոր բնապահպանական ընկալիչներ (հող, աղմուկ, օդի որակ և այլն),
- ✓ մոնիթորինգի ենթակա տեղադիրք (շինարարության տեղամաս, ճամբարային տարածք, լցակույտավայրեր և այլն),
- ✓ գործիքներ և մեթոդներ (համապատասխան փաստաթղթերի վերանայում, տեսողական տեսչական այցելություններ տեղամաս, գործիքային չափումներ և այլն),
- ✓ բնապահպանական կատարողականի ցուցանիշ,
- ✓ պատասխանատու անձինք (տրոհված՝ ըստ բոլոր կողմերի - ՀՏԶՀ, գլխավոր ճարտարագետ, կապալառու),
- ✓ մոնիթորինգի հաճախականություն (վերաբերում է ծախսարդյունավետության սկզբունքի վրա հիմնված հանձնարարական առաջադրանքներին):

212. Շրջակա միջավայրի տեսողական մոնիթորինգը պետք է իրականացվի տեղամասային տեսչական այցերի միջոցով ծրագրի բացասական ազդեցությունների կանխարգելման և վերահսկողության մասով մեղմման միջոցառումների արդյունավետությունը որոշելու համար, ինչի նպատակը հնարավորինս շուտ համապատասխան ուղղիչ գործողությունների անհրաժեշտության որոշումն է: Կապալառուի կողմից զբաղեցված և ստեղծված բոլոր տեղամասերը պետք է մշտադիտարկվեն. դրանք են՝ աշխատանքային տարածքները, շինարարական ճամբարները, պահեստները, կայանատեղիները, հողի վերին շերտի պահպանման վայրերը, թափոնների հեռացման վայրերը, քարաջարդ արտադրամասերը, բետոնի և ասֆալտի գործարանները (եթե այդպիսիք կան):

213. Տեղամասային տեսչական այցելությունները պետք է իրականացվեն ԲԿՊ-ով նախատեսված մոնիթորինգի պաշտոնական ժամանակացույցի համաձայն. Կապալառու՝ ամեն օր, գլխավոր ճարտարագետ՝ ամեն օր, ՀՏԶՀ՝ ամեն ամիս: Մոնիթորինգային տեսչական այցերից ստացված տվյալները կապալառուի կողմից պետք է զեկուցվեն Ուղղիչ գործողությունների հաշվետվությունների միջոցով, իսկ ճարտարագետի կողմից՝ Մեղմման միջոցառումների համապատասխանության և տեսչական մոնիթորինգի ստուգացուցակների լրացման միջոցով (ձևաչափը ներկայացվում է Հավելված 8-ում):

## Հաշվետվություն

214. Ծրագրի բնապահպանական երաշխիքների համապատասխանության մասին պետք է պարբերաբար հաշվետու լինել ծրագրի իրականացման բոլոր մակարդակներում. կապալառու, գլխավոր ճարտարագետ, ՀՏԶՀ, ՏԿԵՆ և ԱԶԲ:

215. Հետևյալ բնապահպանական հաշվետվությունները պետք է կապալառուի կողմից ներկայացվեն ճարտարագետին.

i. Ուղղիչ գործողությունների շաբաթական հաշվետվություններ (ՇԳՀ): Ուղղիչ գործողությունները և դրանց կարգավիճակը կփաստագրվեն գլխավոր ճարտարագետի կողմից հատուկ մշակված և ՀՏԶՀ-ի կողմից հաստատված ձևանմուշով: Ուղղիչ գործողությունների շաբաթական հաշվետվությունը պետք է ներառի բնապահպանական կատարողականի ցուցանիշը և մեղմման միջոցառումների արդյունավետության գնահատումը:
ii. Բնապահպանական համապատասխանության ամսական հաշվետվություն: Ամփոփ բնապահպանական հաշվետվությունը պետք է ներկայացվի որպես կապալառուի առաջընթացի մասին ամսական հաշվետվության մաս: Ամսական հաշվետվությունները պետք է լինեն վերլուծական և տրամադրեն պարզաբանումներ անոմալիաների, անհամապատասխանությունների և հանդիպող խնդիրների մասով:
iii. ՀՏԶՀ-ի կողմից պատրաստված և ԱԶԲ-ին ներկայացվող առաջընթացի մասին հաշվետվությունները կներառեն բնապահպանական երաշխիքների և մեղմման միջոցառումների իրականացման մասին բաժին:
iv. Բնապահպանական մոնիթորինգի տարեկան հաշվետվությունները (ԲՄՏՀ) պետք է պատրաստվեն ՀՏԶՀ-ի կողմից և տրամադրվեն ԱԶԲ-ին: ԲՄՏՀ-ն ամփոփում է բնապահպանական երաշխիքների բոլոր գործողությունները տարեկան ժամանակաշրջանի ընթացքում: Բոլոր ԲՄՏՀ-ները կներկայացվեն հաշվառման համակարգում, որը պատրաստ կլինի ԱԶԲ-ի աուդիտի համար և կհրապարակվի ԱԶԲ-ի կայքում: ԲՄՏՀ-ները և ՇՄՆՈւ-ն պետք է նաև թարգմանվեն հայերեն և հրապարակվեն ՀՏԶՀ-ի կայքում:

216. ԲՄՏՀ-ի ընդհանուր ուրվապատկերը պարունակում է հետևյալ պարամետրերը, և այն թարմացվելու ու համաձայնեցվելու է գլխավոր ճարտարագետի և ՀՏԶՀ-ի հետ.

I. Ներածություն
II. Կառավարում
   1. Բնապահպանական երաշխիքների ծրագիր
   2. Իրազեկվածության բարձրացման և շրջակա միջավայրի վերաբերյալ վերապատրաստման դասընթաց
   3. Անվտանգության և վթարների մասին հաշվետվություն
   4. Ստացված բողոքներ (ԲԼՄ համակարգ)
   5. Հաղորդակցություն կապալառուների և ԱԵԱ-ների հետ
III. Մոնիթորինգ
   1. Մոնիթորինգային այցելություններից ստացված տվյալներ
   2. Ուղղիչ գործողությունների պլան
   3. Անհամապատասխանությունները տրվել և հասցեագրվել են
IV. Եզրակացություն և առաջարկություններ հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար

217. Հաշվետվությունները պետք է համակողմանիորեն ներառեն դրանցում ներառված ժամանակահատվածում ձեռնարկվող՝ ԲԿՊ-ի մեղմման միջոցառումների իրականացման բոլոր համապատասխան ասպեկտները (օրինակ՝ մեղմման ի՞նչ տեսակ, նպատակ և օբյեկտ(ներ), տեղամաս/տեղանք, նյութեր և ներգրավված գործողություններ, այլք. նշիր), համապատասխանությունը բնապահպանական ցանկացած կարգավորումներին և պահանջներին, ինչպիսիք են՝ վերապատրաստումը/կողմնորոշումը, թույլտվությունները, լիցենզիան և այլն:

218. Վթարների դեպքում (աշխատողների մահ և/կամ վնասվածք, հրդեհ, պայթյուն, նավթի թափում և բիտումի արտահոսք և այլն) կապալառուն պարտավոր է անհապաղ տեղեկացնել գլխավոր ճարտարագետին: Նախնական ծանուցումը կարող է լինել բանավոր, և դրան պետք է հաջորդի Վթարի/պատահարի մասին նախնական գրավոր զեկույցը պատահարը կամ վթարը

տեղի ունենալուց հետո 24 ժամվա ընթացքում: Վթարի/պատահարի մասին վերջնական զեկույցը պետք է ներկայացվի գլխավոր ճարտարագետին դեպքի հետաքննության ավարտից հետո 2 շաբաթվա ընթացքում, և այն պարունակելու է նախնական զեկույցով նախատեսված միջոցառումների ձեռնարկման մասին հաշվետվությունը: (Վթարի/պատահարի մասին զեկույցների ձևը ներկայացված է Հավելված 7-ում):

### Ծախսերի նախահաշիվ և հաշվարկված բյուջե

219. ԲԿՊ-ի իրականացման հաշվարկված արժեքը կկազմի 75,000 ԱՄՆ դոլար: Ծախսերի նախահաշիվները և գնահատված բյուջեն կթարմացվեն Մանրամասն նախագծի հիման վրա:

**Աղյուսակ 7. Կապալառուի բնապահպանական կառավարման և մոնիթորինգի ծախսերի ինդիկատիվ նախահաշիվ**

| Հոդվածի նկարագրություն | Միավոր | Ներառված է ստորև ներկայացվածի բյուջեում | Ընդհանուր գումարը՝ արտահայտված դոլարով | Ընդհանուր գումարը՝ արտահայտված ՀՀ դրամով[16] |
|---|---|---|---|---|
| Բնապահպանական/ԱԱԱ և սոցիալական երաշխիքների համար պատասխանատու անձնակազմի աշխատակիցների նշանակում | 24 ամսվա համար վարձատրությունը հաշվարկվել է 36,000 դոլարի չափով | Գլխավոր ճարտարագետ | 36 000 | 13 860 000 |
| | Շինարարության 24 ամիսների ժամանաշրջանի ընթացքում լրիվ դրույքով 1 ԱԱԲ մասնագետի ծախսը հաշվարկվել է 24,000 դոլարի չափով | Կապալառու | 24 000 | 9 240 000 |
| Աշխատանքային առողջություն և անվտանգության պլան | Թվով 60 բանվորների համար ԱՊՄ-ի ծախսը, մեկ բանվորի համար 250 դոլարի հաշվարկով, կազմում է 15,000 դոլար | Կապալառու | 15 000 | 5 775 000 |
| | | | 75 000 | 28 875 000 |

220. Ստորև ներկայացված պլանների իրականացման նախահաշիվները կներառվեն կապալառուի բյուջեում՝ հիմնվելով Մանրամասն նախագծի և շինարարության հաշվարկված ընդհանուր ծախսերի վրա.

- ✓ Բնապահպանական և առողջության ու անվտանգության կողմնորոշման պլան
- ✓ Աշխատանքային առողջության և անվտանգության պլանի մնացած մասը

[16] 1 դոլար = 385 դրամ

- ✓ Բուսական և կենդանական աշխարհի պահպանության և բուսականությունից մաքրման պլան
- ✓ Շրջակա միջավայրի պաշտպանության պլան
- ✓ Մակերևութային և ստորգետնյա ջրերի պահպանության պլան
- ✓ Կոմունալ ծառայությունների պաշտպանության և տեղափոխման պլան
- ✓ Շինաշխատանքային ճամբարների պլան
- ✓ Տեղամասի կառավարման պլան (ծրագրի ազդեցության գոտուց դուրս օգտագործվող տարածքների համար)
- ✓ Երթևեկության և հասանելիության կառավարման պլան
- ✓ Արտակարգ իրավիճակներին արձագանքման պլան
- ✓ Թափոնների և նյութերի կառավարման պլան
- ✓ Մշակութային ժառանգության կառավարման պլան (պատահական գտածոների հայտնաբերման ընթացակարգ)[17]
- ✓ Տեղամասի վերականգնման, կանաչապատման և բուսական ծածկույթի վերականգնման պլան[18]

221. Իրականացման մեխանիզմները, որտեղ հսկտակորեն նշված են ԲԿՊ-ի իրականացման, մոնիթորինգի և ղեկավարման գործում՝ ծրագրում ներգրավված յուրաքանչյուր կողմի դերը և պատասխանատվությունը, ինչպես նաև յուրաքանչյուր միջոցառման իրականացման ժամանակացույցը և բյուջեն, ներկայացված են Հավելված 6ա-ի՝ ԲԿՊ-ի համար նախատեսված մատրիցայում:

## IX. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Եզրակացություններ

222. Արմավիրի մարզի Ոսկեհատի միջնակարգ դպրոցի վերակառուցման աշխատանքների շրջանակը ներառում է դպրոցի սեյսմիկ անվտանգության համար նորարարական ճարտարագիտական և շինարարական լուծումներ, հաշմանդամություն ունեցող անձանց ներառականության ապահովում, 21-րդ դարի կրթությանը և մանկավարժության չափանիշներին հարիր դպրոցական շենքերի նախագծում և կառուցում, վերափոխվող հարմարությունների/տարածքների ապահովում՝ դպրոցի դասերի ժամերից հետո համայնքային գործունեության համար, ինչպես նաև՝ կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության միջոցառումների իրականացում:

223. Շինարարության փուլում անբարենպաստ ազդեցությունների մեծ մասը լինելու է տեղամասի համար բնորոշ՝ սահմանափակվելով ՃԻ-ով, և դրանք կարող են հեշտությամբ մեղմվել ճարտարագիտական և կենցաղավարման լավ գործելակերպերով՝ ԲԿՊ-ում նախատեսված հատուկ միջոցառումների օգտագործմամբ:

---

[17] Եթե հայտնաբերվում են հնագիտական պատահական գտածոների ռեսուրսներ, ապա դրանք ներառվում են շինարարության ընդհանուր արժեքի մեջ, որը գնահատվում է շինարարության ընդհանուր արժեքի առավելագույնը 2%-ի չափով:

[18] Մանրամասն նախագծում գնահատված ծառերի և թփերի մասով գոյություն ունեցող համայնքային ծառերի պահպանության արժեքը կհաշվարկվի թարմացված ՇՄՆՈւ-ում՝ հիմնվելով ծառերի և թփերի հաշվարկված քանակի և տեսակի վրա:

224. Ծրագրի շրջանակում հարկադիր տարաբնակեցում կամ բնիկ ժողովուրդների վրա որևէ ազդեցություն չի նախատեսվում, քանի որ դպրոցի շենքի վերակառուցումը/ամրակայումը տեղի կունենա գոյություն ունեցող վայրում, իսկ Հայաստանը միատարր է իր էթնիկ կազմով: Սոցիալական երաշխիքների պատշաճ ուսումնասիրությունը հաստատել է հողերի օտարման ու տարաբնակեցման ազդեցության բացակայությունը, և առաջարկել մեղմման միջոցառումներ ցանկացած հնարավոր խնդրի համար, որ կարող է առաջանալ շինարարության փուլում:

225. ՍԱԲԾ-ի անվտանգության մեխանիզմների դասակարգումը կատեգորիա B է շրջակա միջավայրի, կատեգորիա C՝ հարկադիր տարաբնակեցման և կատեգորիա C՝ բնիկ ժողովուրդների համար: Անվտանգության մեխանիզմների դասակարգումը կշարունակվի սույն դրամաշնորհային ծրագրի համար: Միևնույն ժամանակ, Հայաստանի ՇՄԱԳ-ի օրենսդրության համաձայն՝ այս ծրագրի համար պահանջվում է ՇՄԱԳ և փորձաքննություն:

226. Ծրագիրը նշված դպրոցի վերակառուցումով, անշուշտ, կունենա էական դրական ազդեցություններ սոցիալ-տնտեսական միջավայրի վրա. առնվազն 355 աշակերտ կսովորի սեյսմիկ անվտանգության չափանիշներին համապատասխանող դպրոցի շենքերում:

227. Ոսկեհատի միջնակարգ դպրոցի նախագիծը կայուն է և էկոլոգիապես մաքուր շինանյութերի ընտրության հարցում: Էկոլոգիական օգուտները սերտորեն փոխկապակցված են նախագծային լուծումների հետ՝ բնական ռեսուրսների խնայողության առումով:

228. Հնարավոր բացասական ազդեցությունները, ինչպիսիք են՝ փոշու, աղմուկի, երթևեկության և հասանելիության փոփոխություններից առաջացող անհանգստությունները, որոնք հավանաբար կզգան մոտակա բնակելի թաղամասերը, բուսական աշխարհի և «Բացասական ազդեցություններ» գլխում նշված այլ բաների վրա եղած ազդեցությունները կլինեն ժամանակավոր և կարող են նվազագույնի հասցվել ԲԿՊ-ով նախատեսված մեղմման միջոցառումներով, ինչպես նաև՝ մշտական մոնիթորինգի միջոցով, որն ապահովում է համապատասխան վերահսկողություն և երաշխավորում նախանշված մեղմման միջոցառումների ժամանակին իրականացումը:

### Առաջարկություններ

229. Կապալառուն կդիտարկի ներկա ՇՄՆՈւ-ն (ծառերի նույնականացում և հաշվում, բնապահպանական ելակետային տվյալներ, կոմունալ ծառայություններ) և ԲԿՊ-ն որպես պայմանագրի մաս:

230. Շինարարական աշխատանքների համապատասխանությունը ԱԶԲ-ի անվտանգության մեխանիզմների պահանջներին և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը պետք է ստուգվի կապալառուի, գլխավոր ճարտարագետի և ՀՏԶՀ-ի կողմից պարբերական մոնիթորինգի միջոցով:

231. Գլխավոր ճարտարագետը պետք է մոնիթորինգի ենթարկի և վերահսկի կապալառուի կողմից ԲԿՊ-ում նշված մեղմման միջոցառումների իրականացումը և տա անհամապատասխանության մասին ծանուցում դրանք ժամանակին պատշաճորեն չիրականացվելու դեպքում: Անհամապատասխանությունները դասակարգվելու են ըստ Բնապահպանական երաշխիքների տեղեկատվական փաթեթում նշված անհամապատասխանության մակարդակների չափորոշիչների: Կապալառուի նկատմամբ կարող է կիրառվել տույժերի համակարգ ՇՄՆՈւ-ի և ԲԿՊ-ի պահանջներին չհամապատասխանելու համար: Ճարտարագետը կարող է նաև դադարեցնել բոլոր համապատասխան աշխատանքները (կապալառուի հաշվին) մինչև ՇՄՆՈւ-ի և ԲԿՊ-ի պահանջները չկատարվեն և չշտկվեն ի բավարարումն ճարտարագետի: Այդ տույժերը պետք է լինեն Հայաստանի Հանրապետության օրենքներով կիրառվող տույժերից անկախ:

232. Մանրամասն նախագծման փուլում հաշվի կառնվեն ծառերի տեղադրման վայրերը՝ այդ ծառերին հասցվող ցանկացած վնասից խուսափելու և այդպիսի վնաս չհասցնելու համար: Կապալառուի համապատասխան մասնագետը՝ ճարտարագետի հետ միասին կուսումնասիրի այն ծառերի և թփերի տեղադիրքը, որոնք, ամենայն հավանականությամբ, կվնասվեն շինարարական աշխատանքների արդյունքում, և կառաջարկեն դրանց կորուստը կանխարգելելու մեթոդներ: Բոլոր այն ծառերն ու թփերը, որոնք կարող են պահպանվել, բայց գտնվում են աշխատանքային տեղամասերին մոտ, կպաշտպանվեն: Այն ծառերի ու թփերի փոխարեն, որոնք չեն կարող պահպանվել և հեռացվելու են, կտնկվեն նորերը՝ 1:10 հարաբերակցությամբ: Փոխարինման նպատակով այդ ծառերի և թփերի տնկումը կիրականացվի համապատասխան հողային պայմաններ ունեցող վայրերում: Նորատունկ ծառերի տնկիները կապալառուի կողմից կպահպանվեն 1 տարի՝ թերությունների վերացման ժամկետում: Այնուհետև դպրոցի ազդեցության գոտում տնկված բուսածածկույթի պահպանումը կփոխանցվի Ոսկեհատի միջնակարգ դպրոցին, իսկ դպրոցից դուրս գտնվող բուսածածկույթի խնամքը կիրականացվի Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի կողմից:

## X. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

### Հավելված 1. Արագ բնապահպանական գնահատման (ԱԲԳ) ստուգաթերթ

**Հրահանգներ.**

(i) Ծրագրի թիմը լրացնում է այս ստուգաթերթը՝ ծրագրի բնապահպանական դասակարգմանն աջակցելու նպատակով: Այն պետք է կցվի բնապահպանական դասակարգման ձևաթղթին և ներկայացվի Երաշխիքների բաժին (ԵԲ/SDSS)՝ ԵԲ-ի Տնօրենի կողմից մակագրման և համապատասխանության գծով գլխավոր պատասխանատուի կողմից հաստատման նպատակով:

(ii) Այս ստուգաթերթում ուշադրություն է դարձվում բնապահպանական խնդիրներին և մտահոգություններին: Որպեսզի ապահովվի սոցիալական չափույթները պատշաճորեն հաշվի առնելու հանգամանքը՝ հղում կատարեք նաև ԱԶԲ-ի հետևյալ նյութերին. (ա) ստուգաթերթեր հարկադիր տարաբնակեցման և բնիկ ժողովուրդների վերաբերյալ. (բ) աղքատության հաղթահարման ձեռնարկ. գ) քննարկման և մասնակցության վերաբերյալ անձնակազմի ուղեցույց և (դ) ստուգաթերթեր գենդերային հարցերի վերաբերյալ:

(iii) Հարցերին պատասխանեք՝ ենթադրելով «առանց մեղմման» դեպքը: Նպատակը հնարավոր ազդեցությունները վերհանելն է: Օգտագործեք «դիտողություններ» բաժինը՝ ակնկալվող մեղմման միջոցառումները քննարկելու համար:

**Երկիր/Ծրագրի անվանում** ՀԱՅ. Սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագիր. Ոսկեհատի միջնակարգ դպրոցի վերակառուցում

**Ոլորտային բաժին.** **CWUW** /Կենտրոնական և Արևմտյան Ասիայի քաղաքաշինության և ջրային ռեսուրսների բաժին/ **և ARRM** /ԱԶԲ հայաստանյան մշտական առաքելություն/

| Սքրինինգի հարցեր | Այո | Ոչ | Դիտողություններ |
|---|---|---|---|
| **Ա. Ծրագրի տեղակայում**<br>Արդյո՞ք ենթածրագրի վայրը սահմանակից է հետևյալ տարածքներից որևէ մեկին կամ գտնվում է այդ տարածքում: | | | Բոլոր ֆիզիկական աշխատանքները կկայանան գործող դպրոցների տարածքներում: |
| ▪ Ստորգետնյա կոմունիկացիաներ | | X | |
| • Մշակութային ժառանգության վայր | | X | |
| • Պահպանվող տարածք | | X | |
| • Խոնավ տարածք | | X | |
| • Մանգրովներ | | X | |
| • Էստուարներ | | X | |
| • Պահպանվող տարածքի բուֆերային գոտի | | X | |
| • Կենսաբազմազանության պահպանության հատուկ տարածք | | X | |
| • Ծովածոց | | X | |

| Սքրինինգի հարցեր | Այո | Ոչ | Դիտողություններ |
|---|---|---|---|
| **Բ. Հնարավոր բնապահպանական ազդեցություններ**<br><br>Արդյո՞ք ծրագիրը կդառնա պատճառ հետևյալի համար… | | | |
| ▪ Ոտնձգություն պատմական/մշակութային տարածքների նկատմամբ: | | X | |
| ▪ Ոտնձգություն թանկարժեք էկոլոգիայի (օրինակ՝ զգայուն կամ պահպանվող տարածքների) նկատմամբ: | | X | |
| ▪ Ազդեցություններ հարակից սանիտարական և կոշտ թափոնների հեռացման համակարգերի կայունության վրա: | X | | Սահմանափակ ազդեցություն |
| ▪ Մարդկանց տեղահանում կամ հարկադիր տարաբնակեցում: | | X | |
| ▪ Անհամաչափ ազդեցություններ աղքատների, կանանց և երեխաների, բնիկ ժողովուրդների կամ այլ խոցելի խմբերի վրա: | | X | |
| ▪ Վթարների ռիսկեր, որոնք կապված են տրանսպորտային միջոցների երթևեկության ավելացման հետ, ինչը հանգեցնում է կյանքի կորստի: | X | | Կարող է լինել սահմանափակ, բայց՝ կառավարելի ազդեցություն |
| ▪ Աղմուկի և օդի աղտոտվածության ավելացում՝ երթևեկության ծավալների ավելացման արդյունքում: | X | | Կարող է լինել սահմանափակ, բայց՝ կառավարելի ազդեցություն |
| ▪ Աշխատանքային և համայնքային առողջության և անվտանգության ռիսկեր: | X | | Կարող է լինել սահմանափակ, բայց՝ կառավարելի ազդեցություն |
| ▪ Աշխատանքային առողջությանը և անվտանգությանն առնչվող ռիսկեր և խոցելիություն՝ պայմանավորված ծրագրի շինարարության և շահագործման ընթացքում ֆիզիկական, քիմիական, կենսաբանական և ճառագայթային վտանգներով: | | X | |
| ▪ Շինարարության ընթացքում փոշու առաջացում զգայուն վայրերում: | X | | Կարող է լինել սահմանափակ, բայց՝ կառավարելի ազդեցություն |
| ▪ Լիցքի, փորման և/կամ թափուկների հեռացման պահանջներ: | | X | |
| ▪ Աղմուկ և վիբրացիա՝ պայթեցման և այլ շինարարական աշխատանքների արդյունքում: | X | | Կարող է լինել սահմանափակ, բայց՝ կառավարելի ազդեցություն |
| ▪ Երկարաժամկետ ազդեցություններ ստորգետնյա ջրերի հոսքերի վրա՝ շինարարությունից առաջ ծրագրի տեղամասը չորացնելու անհրաժեշտության արդյունքում: | | X | |
| ▪ Երկարաժամկետ ազդեցություններ տեղական հիդրոլոգիայի վրա՝ շենքի ներսում կամ մոտակայքում կոշտ մակերեսներ կառուցելու պատճառով: | | X | |

| Սքրինինգի հարցեր | Այո | Ոչ | Դիտողություններ |
|---|---|---|---|
| ▪ Ծրագրի շինարարության և շահագործման ընթացքում բնակչության մեծ ներհոսք, ինչն առաջացնում է սոցիալական ենթակառուցվածքների և ծառայությունների (օրինակ՝ ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի) վրա բեռի ավելացում: | | X | |
| ▪ Սոցիալական բախումներ, եթե աշխատանքի են ընդունվում այլ շրջաններից կամ երկրներից եկած աշխատողները: | | X | |
| ▪ Համայնքի անվտանգությանը սպառնացող վտանգները, որոնք առաջանում են հրդեհի, էլեկտրական ցնցումների կամ շահագործման ընթացքում շենքի անվտանգության միջոցառումների ձախողման հետևանքով: | X | | Կարող է լինել սահմանափակ, բայց՝ կառավարելի ազդեցություն |
| ▪ Համայնքի առողջությանը և անվտանգությանը սպառնացող ռիսկեր՝ թափոնների կառավարման և հեռացման պատճառով: | | X | |
| ▪ Համայնքի անվտանգության ռիսկեր՝ պայմանավորված ինչպես վթարային, այնպես էլ՝ բնական վտանգներով, հատկապես այն դեպքում, երբ ծրագրի կառուցվածքային տարրերը կամ բաղադրիչները հասանելի են ազդեցության ենթակա համայնքի անդամներին, կամ երբ դրանց խափանումը կարող է հանգեցնել համայնքին պատճառվող վնասի՝ ծրագրի շինարարության, շահագործման և շահագործումից հանելու ընթացքում: | X | | Կարող է լինել սահմանափակ, բայց՝ կառավարելի ազդեցություն |

## Հավելված 2. Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված/վավերացված միջազգային պայմանագրերը և կոնվենցիաները շրջակա միջավայրի և կենսաբազմազանության պաշտպանությանը վերաբերյալ

| No | Կոնվենցիա կամ արձանագրություն, անվանում և վայր | Ուժի մեջ է | Ստորա-գրվել է | Վավե-րացվել է | Մեկնա-բանու-թյուն |
|---|---|---|---|---|---|
| 1. | Միջազգային նշանակության խոնավ տարածքների, հատկապես՝ ջրլող թռչունների բնադրավայրերի մասին (Ռամսար, 1971 թվական) | 1975 | 1993 | Վավե-րացվել է ԽՍՀՄ-ի կողմից | |
| 2. | Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա (Ռիո դե Ժանեյրո, 1992 թվական) | 1993 | 1992 | 1993 | Վերա-գրանցվել է ՄԱԿ-ում 1993 թ. |
| 3. | Կենսաբանական անվտանգության մասին կարթագենյան արձանագրություն (Կարթագեն, 2000 թվական) | | 2000 | 2004 | |
| 4. | Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք, 1992 թվական) | 1994 | 1992 | 1993 | Վերա-գրանցվել է ՄԱԿ-ում 1993 թ. |

| No | Կոնվենցիա կամ արձանագրություն, անվանում և վայր | Ուժի մեջ է | Ստորա-գրվել է | Վավե-րացվել է | Մեկնա-բանու-թյուն |
|---|---|---|---|---|---|
| 5. | Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997 թվական) | | | 2002 | Վերա-գրանցվել է ՄԱԿ-ում 2003 թ. |
| 6. | Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին կոնվենցիա (Ժնև, 1979 թվական) | 1983 | | 1996 | Վերա-գրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ. |
| 7. | «Անդրսահմանյան համատեքսում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիա (Էսպու, 1991 թվական) | 1997 | | 1996 | Վերա-գրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ. |
| | «Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին» արձանագրություն (Կիև 2003 թվական) | | 2003 | | |
| 8. | «Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցության մասին» կոնվենցիա (Հելսինկի, 1992 թվական) | 2000 | | 1996 | Վերա-գրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ. |
| 9. | «Անդրսահմանային ջրերում արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցության հետևանքով քաղաքացիական պատասխանատվության և վնասի հատուցման մասին արձանագրություն» (Կիև, 2003 թվական) | | 2003 | | |
| 10. | Անապատացման դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի կոնվենցիա (Փարիզ, 1994 թվական) | 1996 | 1994 | 1997 | Վերա-գրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ. |
| 11. | ՄԱԿ-ի վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին կոնվենցիա (Բազել, 1989 թվական) | 1992 | | 1999 | Վերա-գրանցվել է ՄԱԿ-ում 1999 թ. |
| 12. | Օզոնային շերտի պահպանության մասին կոնվենցիա (Վիեննա, 1985 թվական) | 1988 | | 1999 | Վերա-գրանցվել է ՄԱԿ-ում 1999 թ. |
| 13. | Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին արձանագրություն (Մոնրեալ, 1987 թվական) | 1989 | | 1999 | Վերա-գրանցվել է ՄԱԿ-ում 1999 թ. |
| 14. | Կոնվենցիա տեղեկատվության մատչելիության, որոշումների կայացման գործընթացում | 2001 | 1998 | 2001 | |

| No | Կոնվենցիա կամ արձանագրություն, անվանում և վայր | Ուժի մեջ է | Ստորա-գրվել է | Վավե-րացվել է | Մեկնա-բանու-թյուն |
|---|---|---|---|---|---|
| | հասարակության մասնակցության և բնապահպանական հարցերում արդարադատության մատչելիության վերաբերյալ (Օրհուս, 1998 թվական) | | | | |
| 15. | Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի կիրառման մասին կոնվենցիա (Ռոտերդամ, 1998 թվական) | | 1998 | 2003 | |
| 16. | Անդրսահմանային ջրահոսքերի և միջազգային լճերի պաշտպանության և օգտագործման մասին կոնվենցիան (Հելսինկի, 1992 թվական) | 1996 | 1999 | | |
| 17. | Ջրի և առողջության մասին արձանագրություն (Լոնդոն, 1999 թվական) | | 1999 | | |
| 18. | Կայուն օրգանական աղտոտիչների մասին Ստոկհոլմի կոնվենցիա (Ստոկհոլմ, 2001 թվական) | | 2001 | 2003 | |
| 19. | Շրջակա միջավայրի փոխակերպման տեխնիկական միջոցների ռազմական կամ այլ կարգի թշնամական օգտագործումն արգելելու մասին կոնվենցիա (Ժնև, 1976 թվական) | 1978 | | 2001 | Վերա-գրանցվել է ՄԱԿ-ում 2002 թ. |
| 20. | Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենսիա, 2000 թվական) | | | 2004 | |
| 21. | Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին կոնվենցիա (Փարիզ, 1972 թվական) | | | 1993 | |
| 22. | Էներգետիկ խարտիայի պայմանագիր (Լիսաբոն, 1994 թվական) | | | 1997 | |
| 23. | Էներգետիկ խարտիայի արձանագրություն էներգաարդյունավետության և հարակից բնապահպանական ասպեկտների վերաբերյալ (Լիսաբոն, 1994 թվական) | | | 1997 | |
| 24. | Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիա (Բեռն 1979 թվական) | 1982 | 2006 | | |

## Հավելված 3. Հանրային հաղորդակցության և քննարկումների վերաբերյալ հաշվետվություն

Ծանաչողական հանդիպում Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի վարչական ղեկավարության հետ

1. 2023թ. մայիսի 12-ին ճանաչողական հանդիպում է տեղի ունեցել Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի վարչական ղեկավարության հետ: Հանդիպումը Նախագծի մասին համայնքին իրազեկելու, դրա սոցիալական և շրջակա միջավայրի վրա ազդեցությունը և առաջարկվող մեղմացման միջոցառումները հակիրճ ներկայացնելու նպատակ է հետապնդել: Հանդիպումը տեղի է ունեցել Ոսկեհատի վարչակազմի շենքում, Ոսկեհատի վարչական ղեկավար պրն. Արմեն Խուդաբաշյանի, Ոսկեհատի միջնակարգ դպրոցի տնօրենի պաշտոնակատար տկն Սոֆիկ Պետրոսյանի, շրջակա միջավայրի պահպանության հարցերով ԱԶԲ ազգային խորհրդատու պրն. Տիգրան Օգանեզովի և ՀՏԶՀ-ի սոցիալական հարցերով մասնագետ տկն Քնարիկ Գրիգորյանի մասնակցությամբ:







2. Հանդիպումը հնարավորություն է տվել մանրամասն տեղեկություններ ստանալ Նախագծի, ՇՄԱՆՓ-ի ընթացքի, հնարավոր բացասական ազդեցությունների մեղմացման

միջոցառումների մասին: Ազդակիր բնակավայրի ղեկավարությունը տեղեկացել է Նախագծի նախաձեռնողների՝ ՀՀ օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության թիվ 1325 որոշմամբ սահմանված կարգով և ԱՉԲ-ի անվտանգության մեխանիզմների քաղաքականության հանրային քննարկումների և ծանուցման պահանջներին համապատասխան հանրային քննարկումներ կազմակերպելու հանձնառության մասին:

3. Ազդակիր բնակավայրի վարչական ղեկավարությունից ծրագրված հանրային քննարկումներում հանրության բովանդակային ու արդյունավետ մասնակցություն ապահովելու հարցում աջակցություն ցուցաբերելու ակնկալիք է հայտնվել:

4. Նշվել է, որ նախքան հանրային լսումների անցկացումը ՀՏԶՀ-ը ապահովել է թեմայի շուրջ արդիական և անհրաժեշտ տեղեկությունների հասանելիությունը, դրանց ներառականությունը ԱԵԱ-ների, հատկապես՝ կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց և խոցելի խմբերի համար:

5. Բնակավայրի վարչական ղեկավարության ներկայացուցիչներն իրենց հերթին պարտավորվել են աջակցել Նախագծի վերաբերյալ տեղեկությունների հանրայնացմանը և տարածմանը, այդ թվում՝ իրենց պաշտոնական կայքէջերում համապատասխան հայտարարություններ ներբեռնելով, ինչպես նաև դրանք հրապարակելով հանրային տեսանելի հարթակներում:

6. Ազդակիր բնակավայրի ղեկավարությանը տրամադրվել է հետևել բովանդակությամբ հայտարարության տեքստը (ստորև՝ դրա ոչ պաշտոնական թարգմանությունը)՝ այն հրապարակայնացնելու և ազդակիր բնակչության ու շահագրգիռ շրջանակներում տարածելու նպատակով՝

«2023թ. մայիսի 18-ին ժամը 15:00-ին հրավիրում ենք ձեզ մասնակցելու «ՀՀ պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015 – 2035թթ. ծրագրի» շրջանակում Ոսկեհատի միջնակարգ դպրոցի վերակառուցման նախագծի վերաբերյալ հանրային քննարկմանը, որը տեղի է ունենալու Ոսկեհատի մշակույթի տանը: Քննարկման ընթացքում ներկայացվելու են շինարարական աշխատանքների սոցիալական և շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններն ու դրանց մեղմացման մեխանիզմները: Մասնակիցները հնարավորություն են ունենալու հարցեր ուղղել, բարձրաձայնել իրենց մտահոգությունները»:

7. Հայտարարությունը հրապարակվել է Վաղարշապատ համայնքի պաշտոնական կայքէջում (տե՛ս՝ Նկար 1) և սոցիալական մեդիա հարթակներից մեկում համայնքի պաշտոնական էջում (տե՛ս՝ Նկար 2): Հայտարարության տեքստը փակցվել է նաև հանրային նշանակության շենքերի, մասնավորապես՝ Ոսկեհատի միջնակարգ դպրոցի, Մշակույթի տան, Ոսկեհատի վարչական շենքի՝ հայտարարությունների համար առանձնացված տեսանելի վայրերում (տե՛ս՝ Նկար 3, Նկար 4):

Հանրային քննարկում Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրում

8. Հանրային քննարկումը տեղի է ունեցել 2023թ. մայիսի 18-ին և կազմակերպվել է ԱԶԲ ԱՄՔ հանրային քննարկումների և ծանուցման պահանջներին համապատասխան, ինչպես նաև «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով, «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության թիվ 1325 որոշմամբ սահմանված կարգով:

9. Հանդիպումը հյուրընկալվել է Ոսկեհատի վարչակազմի կողմից՝ վարչակազմի ղեկավար պրն. Արմեն Խուդաբաշյանի գլխավորությամբ: Հանդիպման մանրամասն արձանագրությունը, ներառյալ՝ մասնակիցների ցանկը, հանգամանորեն փաստագրում է մասնակիցների կողմից բարձրացված հարցերն ու մտահոգությունները:



*Նկար 1. Հանրային լսումների մասին ծանուցումը, որը հրապարակվել է Վաղարշապատ համայնքի պաշտոնական կայքէջում*




*Նկար 2. Հանրային լսումների մասին ծանուցումը, որը հրապարակվել է Facebook սոցիալական մեդիա հարթակում Վաղարշապատ համայնքի պաշտոնական էջում:*




*Նկար 3. Հանրային լսումների մասին ծանուցումը՝ փակցված հանրային նշանակության շենքի՝ հայտարարությունների համար առանձնացված տեսանելի վայրում:*



*Նկար 4. Հանրային լսումների մասին ծանուցումը՝ փակցված հանրային նշանակության շենքի՝ հայտարարությունների համար առանձնացված տեսանելի վայրում:*



*Նկար 5. Հանրային լսումների մասին ծանուցումը՝ փակցված հանրային նշանակության շենքի՝ հայտարարությունների համար առանձնացված տեսանելի վայրում:*

Հանրային քննարկումների արձանագրություն առ 18 մայիսի, 2023թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՈՍԿԵՀԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳՈՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ

**Ամսաթիվը և ժամը՝** 18 մայիսի, 2023թ., 15:00 – 17:00

**Վայրը՝** Մշակույթի տան հանդիսությունների սրահ

**Հասցեն՝** Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, Ոսկեհատ բնակավայր

**Մասնակիցներ՝**

Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի վարչական ղեկավար պրն. Արմեն Խուդաբաշյան,

Ոսկեհատի միջնակարգ դպրոցի տնօրենի պաշտոնակատար տկն Սոֆիկ Պետրոսյան,

Շրջակա միջավայրի պահպանության հարցերով ԱԶԲ-ի ազգային խորհրդատու պրն. Տիգրան Օգանեզով,

ՀՏԶՀ-ի սոցիալական հարցերով մասնագետ տկն Քնարիկ Գրիգորյան,

Վաղարշապատ համայնքի, Ոսկեհատ բնակավայրի վարչական ղեկավարության, Ոսկեհատի միջնակարգ դպրոցի տնօրինության ներկայացուցիչներ, ուսուցչական կազմ, Ոսկեհատ բնակավայրի բնակիչներ (ընդհանուր թիվը՝ 78, տե՛ս՝ Հավելված 1-ում ներկայացված ցանկը):

**Հանդիպման օրակարգը՝** Ոսկեհատի միջնակարգ դպրոցի վերակառուցման նախագծի բնապահպանական և սոցիալական ազդեցության ընդհանուր ներկայացում:

Բացման խոսքով հանդես է եկել Ոսկեհատի վարչական ղեկավար պրն. Արմեն Խուդաբաշյանը: Նա նշել է, որ խորհրդակցության նպատակը ՀՏԶՀ-ի կողմից իրականացվելիք Ոսկեհատի միջնակարգ դպրոցի վերակառուցման նախագծի քննարկումը և դրա իրականացմամբ պայմանավորված՝ շրջակա միջավայրի վրա և սոցիալական հնարավոր ազդեցությունների քննարկումն է: Մատնանշելով, որ խորհրդակցությունը կազմակերպվել է ԱԶԲ-ի կողմից՝ պրն. Խուդաբաշյանը խոսքը փոխանցել է շրջակա միջավայրի պահպանության հարցերով ԱԶԲ-ի ազգային խորհրդատու պրն. Տիգրան Օգանեզովին:

Տիգրան Օգանեզովը ողջունել է հանդիպման մասնակիցներին և նրանց տեղեկացրել, որ Ոսկեհատի միջնակարգ դպրոցի վերակառուցման նախագիծը ֆինանսավորվելու է «Բարգավաճ և կայուն Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի ճապոնական հիմնադրամի» կողմից, իրականացվելու է ՀՏԶՀ-ի կողմից և ամբողջացնելու է ԱԶԲ-ի ՍԱԲԾ-ը:

Նա հակիրճ ներկայացրել է հանդիպման օրակարգում ներառված հարցերը՝ նշելով, որ նախագծի իրականացմամբ պայմանավորված շրջակա միջավայրի վրա և սոցիալական հնարավոր ազդեցությունները ներկայացնելուց հետո հանդիպումը շարունակվելու է հարցուպատասխանի ձևաչափով, որի նպատակը ՇՄԱՆՓ-ին առնչվող բոլոր հարցերի քննարկումն ու կարգավորումն է: Տիգրան Օգանեզովը հանդիպման մասնակիցներին տեղեկացրել է նաև դպրոցի վերակառուցման շրջանակներում նախատեսվող նախագծման և շինարարության նորարարական լուծումների, դրանց սեյսմիկ անվտանգության, հաշմանդամություն ունեցող անձանց համար ներառականության ապահովման ուղղվածության, 21-րդ դարի հանրակրթության չափորոշիչներին համապատասխանության, ինչպես նաև արտադպրոցական միջոցառումների և այդ նպատակով համայնքային նշանակության ենթակառուցվածքների տրամադրման մասին: Նա ներկաներին վստահեցրել է, որ բացասական ազդեցության զգալի մասը բաժին է ընկնում շինարարության ակտիվ փուլին, վերաբերելու է հստակ նախանշված տարածքին, սահմանափակվելու է երթևեկության կազմակերպման որոշակի շեղումներով, նշել, որ ԲԿՊ-ում ներառվել են այդ ազդեցությունները մեղմացնելու արդյունավետ մեխանիզմներ:

Տիգրան Օգանեզովը ներկայացրել է Նախագծի իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության շրջանակը՝ կրկին ընդգծելով դրա՝ շինարարության ակտիվ բաժին ընկնելու հանգամանքը, ինչպես նաև տեղային և ժամանակավոր բնույթը: Այս համատեքստում նա մատնանշել է մթնոլորտային օդի որակին առնչվող հնարավոր ազդեցությունը՝ պայմանավորված հողային աշխատանքների հետևանքով առաջացող փոշու, ինչպես նաև շահագործվող մեքենաներից ու սարքավորումներից արտանետվող գազերի բարձր մակարդակով: Նա նշել է, որ ԲԿՊ-ը որոշակի միջոցառումներ է նախատեսում նշված ազդեցությունները մեղմացնելու նպատակով, այդ թվում՝ շինարարության գոտում շինհրապարակի կանոնավոր ջրցողումների տեսքով: Շինարարության ընթացքում փոխադրամիջոցների և տեխնիկայի շահագործումը առաջացնում է աղմուկ ու վիբրացիա, ինչպես նաև աղտոտիչների արտանետումներ: Տիգրան Օգանեզովը ներկաներին հավաստիացրել է, որ ազդեցության շրջանակը սահմանափակվելու է միջնակարգ դպրոցի տարածքով՝ բացառելով լրացուցիչ հողատարածքների վրա ազեցության ընդլայնումը: Նա կարևորել է Նախագծի իրականացման համար առանձնացված տարածքում հողի վերին շերտի հնարավորինս պահպանումը՝ հետագայում դրա կանաչապատման նպատակով, ինչպես նաև ընդգծել է վառելիքի, յուղի արտահոսքից և այլ հեղուկ նյութերից ու թափոններից հողի թունավորումը կանխարգելող միջոցառումների կարևոր նշանակությունը: Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության համատեքստում քննարկվել է նաև աղբի գոյացումն ու կուտակումը, ինչը պատշաճ չկառավարելու դեպքում առաջացնում է աղտոտվածություն, թունավորում, շրջակայքի էսթետիկայի կորուստ: Տիգրան Օգանեզովը մանրամասն ներկայացրել է շինարարական թափոնների տեսակները, թափոնների կառավարման և ազդեցության մեղմացման առաջարկվող մոտեցումները:

Նախագծում առաջնահերթ նշանակություն է տրվում սոցիալական համակարգերի վրա ազդեցությանը, այդ թվում՝ Ոսկեհատի միջնակարգ դպրոցի վերակառուցման նախագծի շրջանակներում շինարարական աշխատանքների հետևանքով առաջացած ցանկացած շեղում, խախտում կամ անհարմարություն՝ հատկապես հաշվի առնելով հարցի զգայունությունը: Նախագիծը անմիջական ազդեցություն է ունենալու դպրոցի անձնակազմի, ուսուցչական կազմի, աշակերտների, ինչպես նաև Ոսկեհատ բնակավայրի բնակիչների վրա: Բացի դրանից, բնակելի մի խումբ տների, գյուղատնտեսական նշանակության հողատարածքների և գերեզմանատան՝ դպրոցի մոտ տեղակայվածությունը ենթադրում է տեղի բնակչության կենսագործունեության վրա շինարարական աշխատանքներով պայմանավորված

ժամանակավոր անուղղակի բացասական ազդեցություն: Տիգրան Օգանեզովը թվարկել է ԲԿՊ-ի շրջանակներում նշված խնդիրները կարգավորելուն ուղղված համապարփակ միջոցառումները՝ ուղղված տեղի բնակչության վրա շինարարական աշխատանքներով պայմանավորված ցանկացած բացասական ազդեցությունից խուսափելուն, այն կանխարգելուն և մեղմացմանը: Հավատարիմ մնալով նշված սկզբունքներին՝ Նախագիծը նպատակ է հետապնդում դպրոցի վերակառուցման ողջ ընթացքում նվազագույնի հասցնել շինարարական աշխատանքներով պայմանավորված բացասական սոցիալական ազդեցությունը և երաշխավորել ազդակիր բնակչության բարեկեցությունը:

Ոսկեհատի միջնակարգ դպրոցի վերակառուցման ընթացքում շինարարական աշխատանքների ակտիվ փուլում ակնկալվում է նաև դպրոցի տարածքին հարակից ճանապարհներին երթևեկության ինտենսիվության աճ՝ պայմանավորված բեռնատար ավտոմեքենաների և տեխնիկայի շարժով, շինհրապարակ և դրանից դուրս շինանյութի փոխադրումներով: Միևնույն ժամանակ, գործող ճանապարհների երկարաժամկետ արգելափակում կամ հետիոտնային արահետների, մայթերի արգելափակում չի նախատեսվում: Այնուամենայնիվ, հանրության և հետիոտների անվտանգության համար առկա են որոշակի վտանգներ, տեղերում հնարավոր է երթևեկության խաթարում, մասնավորապես՝ բնակելի շենքերի ու ձեռնարկատիրությունների տարածք մուտքի արգելափակում կամ խոչընդոտում: Տիգրան Օգանեզովը բնակիչներին տեղեկացրել է, որ վերոշարադրյալ ազդեցություններից խուսափելու կամ դրանք նվազագույնի հասցնելու նպատակով շինարարության ընթացքում ազդեցությունների մեղմացման միջոցառումների առանցքում հասարակական կարգի ու անվտանգության ապահովումը, խցանումների և երթևեկության այլ շեղումների մեղմացումն է լինելու:

Հանդիպման երկրորդ մասում ՀՏԶՀ-ի սոցիալական հարցերով մասնագետ Քնարիկ Գրիգորյանը ներկայացրել է սոցիալական և տարաբնակեցման ազդեցության գնահատման նպատակը և մեթեդոլոգիան, ՀԳՀ-ի շրջանակներում անցկացված հետազոտության արդյունքները, Նախագծի ԲՔՄ-ի կառուցվածքը, ինչպես նաև բողոքարկման հայտ ներկայացնելու ընթացակարգը:

Հանդիպումն այնուհետև ընթացել է հարցուպատասխանի ձևաչափով, մասնակիցները հնարավորություն են ունեցել արտահայտել իրենց կարծիքը, ներկայացնել իրենց անհանգստացնող հարցերը, հանդես են եկել առաջարկություններով:

Ներկաների կողմից, մասնավորապես, անդրադարձ է կատարվել հետևյալ հարցերին՝

- ✓ Ռազմագիտության ուսուցիչը մտահոգություն է հայտնել շենքի վատթար վիճակի հետ կապված և հարց է առաջադրել կրող կոնստրուկցիաների նախագծային ամրացման նպատակահարմարության վերաբերյալ:

Տիգրան Օգանեզովը իրավացի է համարել սույն մտահոգությունը և վստահեցրել է, որ շենքի սեյսմակայունության փորձաքննություն է իրականացվելու, և բարձրաձայնված խնդրի վերաբերյալ որոշումը կայացվելու է՝ հաշվի առնելով այդ փորձաքննության արդյունքները:

- ✓ Ոսկեհատի վարչական ղեկավարը հետաքրքրվել է, թե հնարավոր է արդյոք դպրոցի նախագծում ներառել նաև ոռոգման համակարգի ներդնումը՝ նշելով, որ նման հետաքրքրությունը պայմանավորված է հողատարածքում աճող ծառերի ոռոգման կազմակերպման հարցում դպրոցի առջև ծառացած ընթացիկ խնդիրներով: Նշվել է նաև, որ դպրոցի տարածքում առկա է խոր ջրհոր, որը, սակայն, ներկայումս չի գործում:

Արձագանքելով հարցին՝ Տիգրան Օգանեզովը նշել է, որ ոռոգման համակարգի նախագիծը հիմնված է լինելու համայնքի և Նախագծին մասնակից այլ պատասխանատու մարմինների կողմից նախանշված տեխնիկական պահանջների վրա:

- ✓ Հանդիպման մասնակիցները դիմել են կիսաքանդ հրաձգարանը վերականգնելու խնդրանքով:

Տիգրան Օգանեզովը հավաստիացրել է, որ նրանց խնդրանքը պատշաճ կերպով դիտարկվելու է նախագծման փուլում:

Հանդիպման մասնակիցները նաև դիմել են դպրոցի ու գերեզմանատան տարածքների սահմանազատման համար քարե պարիսպ կառուցելու խնդրանքով: Բացի դրանից, նրանք առաջարկել են դպրոցի նոր մասնաշենքը տեղակայել հողատարածքի հակառակ կողմում՝ գերեզմանատան տարածքից հեռու: Ի կարևորումն վերոնշյալ առաջարկությունների՝ համաձայնություն է ձեռք բերվել լրացուցիչ քննարկելու նշված հարցերը՝ դրանք մանրամասն նախագծման փուլում ընդգրկելու հեռանկարով: Վերոնշյալ հարցերի և առաջարկությունների դիտարկման հետ մեկտեղ հանդիպումը նպաստել է համագործակցային մթնոլորտի ստեղծմանը, որի պայմաններում հնչեցված մտահոգությունները հաշվի են առնվել, իսկ հանդիպման մասնակիցները վստահություն են ձեռք բերել առ այն, որ իրենց կարծիքն ու գաղափարները նկատի են առնվելու որոշումների կայացման գործընթացում: Նախագծի թիմը ընդգծել է շահագրգիռ կողմերի բարձրաձայնած խնդիրներն արդյունավետորեն լուծելու նպատակով անհրաժեշտ գնահատում կատարելու և տեխնիկական պահանջները քննելու իրենց հանձնառությունը:

Գիտակցելով առաջարկությունների կարևորությունը՝ Նախագծի թիմն ընդունել է քննարկումներում ինժեներանախագծման թիմին ներգրավելու անհրաժեշտությունը: Վերջիններիս փորձն ու գաղափարներն անգնահատելի են հնչեցված առաջարկությունների՝ Նախագծի ընդհանուր կոնցեպցիայում ներամփոփման նպատակահարմարության և իրագործելիության տեսանկյունից:

**Մասնակիցների ցանկը**



Մասնակիցների ցանկ /List of Participants

Ոսկեհատի միջնակարգ դպրոցի վերակառուցման աշխատանքների վերաբերյալ հանրային քննարկման/
Public hearing on the reconstruction works of Voskehat secondary school

18.05.2023 Ոսկեհատ Voskehat

| | Անուն/Name | Պաշտոն/Position | Կոնտակտային տվյալներ/ Contact Information | Ստորագրություն/ Signiture |
|---|---|---|---|---|
| 1. | [illegible] | [illegible] | 093 195923 | [illegible] |
| 2. | [illegible] | [illegible] | 094-02-07-89 | [illegible] |
| 3. | [illegible] | [illegible] | 093-7500-99 | [illegible] |
| 4. | [illegible] | [illegible] | 077-699-553 | [illegible] |
| 5. | [illegible] | [illegible] | 098 51 10 48 | [illegible] |
| 6. | [illegible] | [illegible] | 093 78 00 95 | [illegible] |
| 7. | [illegible] | [illegible] | 094-79-22-77 | [illegible] |
| 8. | [illegible] | [illegible] | 095-576354 | [illegible] |
| 9. | [illegible] | [illegible] | 098-73.0055 | [illegible] |
| 10. | [illegible] | [illegible] | 077-66-80-34 | [illegible] |
| 11. | [illegible] | [illegible] | 093-44-97-31 | [illegible] |
| 12. | [illegible] | [illegible] | 098 429824 | [illegible] |
| 13. | [illegible] | [illegible] | 098 011719 | [illegible] |



| | | | | |
|---|---|---|---|---|
| 14. | [illegible] | [illegible] | 094-53-42-98 | [illegible] |
| 15. | [illegible] | [illegible] | 093-31-17-53 | [illegible] |
| 16. | [illegible] | [illegible] | 077-69-69-39 | [illegible] |
| 17. | [illegible] | [illegible] | 077-37-21-95 | [illegible] |
| 18. | [illegible] | [illegible] | 093-32-07-33 | [illegible] |
| 19. | [illegible] | [illegible] | 094-23-20-49 | [illegible] |
| 20. | [illegible] | [illegible] | 094-23-20-31 | [illegible] |
| 21. | [illegible] | [illegible] | 077-23-00-56 | [illegible] |
| 22. | [illegible] | [illegible] | 093-18-59-40 | [illegible] |
| 23. | [illegible] | [illegible] | 095-21-10-08 | [illegible] |
| 24. | [illegible] | [illegible] | 094-70-25-71 | [illegible] |
| 25. | [illegible] | [illegible] | 094704445 | [illegible] |
| 26. | [illegible] | [illegible] | 077190199 | [illegible] |
| 27. | [illegible] | [illegible] | 094851130 | [illegible] |
| 28. | [illegible] | [illegible] | 098014817 | [illegible] |
| 29. | [illegible] | [illegible] | 055260924 | [illegible] |









**Լուսանկարներ հանրային քննարկումից**













## Հավելված 4. Բողոքների լուծման մեխանիզմ

1. ԱԶԲ-ի ուղեցույցների և քաղաքականությունների՝ խնդիրների լուծման գործառույթից բխող Բողոքների լուծման մեխանիզմը (ԲԼՄ) մշակվել է ՇՄՆՈւ-ի/ԲԿՊ-ի շրջանակում և նպատակ ունի ծրագրի իրականացման ընթացքում շարունակաբար հաղորդակցվել ազդեցության ենթակա անձանց հետ, որպեսզի ստանա և հասցեագրի նրանց մտահոգությունները, բողոքները և առաջարկությունները Ծրագրի բնապահպանական կատարողականի վերաբերյալ: Բողոքների լուծման մեխանիզմը նախագծվել է՝ ծրագիրն իրականացնող կողմերին բարձրացված հարցերը հասցեագրելու հնարավորություն տալու նպատակով, միաժամանակ պահելով հետևյալ հիմնական սկզբունքները.
   - արագ, ժամանակին և արդյունավետորեն հասցեագրել ազդեցության ենթակա մարդկանց մտահոգությունները և բողոքները,
   - օգտագործել պարզ ընթացակարգ և թափանցիկ գործընթաց,
   - առանց որևէ ծախսի և հատուցման հասանելի լինել ազդեցության ենթակա մարդկանց բոլոր հատվածներին:
2. Գործընթացում հնարավոր ներգրավված և գրանցված բողոքը հասցեագրող կողմերն են ԱԵԱ-ները, կապալառուն, ճարտարագետը, ՀՏԶՀ-ն, ԿՄ-ը և Դատարանը և/կամ ԱԶԲ-ն: Բողոքները լուծելու համար նախատեսված մեխանիզմը պետք է մանրամասնորեն ներկայացվի հանրությանը: Ազդեցության ենթակա մարդիկ պատշաճորեն տեղեկացվել են այս մեխանիզմի մասին հանրային քննարկման և մասնակցության ընթացքում: Նույնը կարվի նաև հետագա հանրային քննարկումների ժամանակ: Բացի այդ, ԲԼՄ-ի առկայության մասին տեղեկատվությունը, և առաջարկությունները կամ բողոքներ բարձրացնելու նպատակով ԱԵԱ-ի կողմից ձեռնարկվելիք քայլերը պետք է հրապարակվեն ՀՏԶՀ-ի կայքում:
3. ՇՄՆՈւ-ն/ԲԿՊ-ը պարունակում է ծրագրի ազդեցության ենթակա մարդկանց և այլ շահագրգիռ խմբերի հետ մշտական հաղորդակցության հատուկ ենթապլան: Ավելին, մրցույթի հաղթող կապալառուն պետք է ունենա ԲԼՄ-ի պահանջն ընդունելու և շինարարության տեղամասերում դրա կիրառման ձևերի մասին համապատասխան տեղեկատվություն պարունակող՝ Ծրագրի տեղեկատվական ցուցատախտակ տեղադրելու պատասխանատվություն:
4. Ծրագրին առնչվող խնդիրների, բնապահպանական մտահոգությունների և ՇՄՆՈւ-ում/ԲԿՊ-ում ներառվելու նպատակով առաջարկվող և ծրագրի համար սահմանված այլ խնդիրների վերաբերյալ ծրագրի՝ բողոքի ներկայացման ԲԼՄ-ի ընթացակարգային քայլերը նախագծվել են և առաջարկվում են ստորև՝ Հոսքերի գծապատկերում (Գծապատկեր 1):

Նախաշինարարական փուլ

5. **Քայլ 1.** Ծրագրի ազդեցության ենթակա անձը իր առաջարկները/մտահոգությունները/բողոքները առաջին հերթին բարձրացնում է ՀՏԶՀ-ի մոտ: ՀՏԶՀ-ն ստանում բողոքը և լուծում է այն/պատասխանում է դրան: Եթե ԱԵԱ-ն չի բավարարվում պատասխանով, կամ ՀՏԶՀ-ի պատասխանատու անձնակազմին անհրաժեշտ է լրացուցիչ կարողություն՝ ԱԵԱ-ների բողոքը հասցեագրելու համար, ապա կարող է ձևավորվել Բողոքների վերանայման խումբ (ԲՎԽ)՝ ապահովելու գործի օրինականությունը, համապարփակ, արդարացի և թափանցիկ քննարկումը: ԲՎԽ-ի կազմը պետք է լինի հավասարակշռված և ներառի անկախ դիտորդի՝ բողոքների վերանայման գործընթացի անկողմնակալությունն ու թափանցիկությունն ապահովելու նպատակով: Առաջարկվում է ԲՎԽ-ի հետևյալ կազմը.
   a. ԾԻԳ-ի ներկայացուցիչ՝ նախագահող
   b. Երաշխիքների հարցերով թիմի ներկայացուցիչ՝ անդամ

c. Տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչ՝ սահմանված կարգով – անդամ
d. Հավաստագրված տեխնիկական փորձագետ՝ սահմանված կարգով – անդամ
e. Ճարտարագետի/կապալառուի ներկայացուցիչ՝ սահմանված կարգով
f. ԱԵԱ-ների ներկայացուցիչ – անդամ
g. Անկախ կողմ (օրինակ՝ ՀԿ) – դիտորդ

6. **Քայլ 2.** Եթե ԱԵԱ-ին չի բավարարում ՀՏԶՀ-ի որոշումը նույնիսկ այն բանից հետո, երբ ԲՎԽ-ը վերանայել է բողոքը, ապա նա կարող է բողոքը մուտքագրել ՏԿԵՆ: Գործի գրանցման, վերանայման և գործը լուծելու համար՝ ՏԿԵՆ-ը ղեկավարվում է Պետական կառավարման մասին ՀՀ օրենքով:

**Գծապատկեր 1. Բողոքների լուծման մեխանիզմի դիագրամ**



Շինարարության փուլ

7. **Քայլ 1**. Ծրագրի արդյունքում ազդեցության ենթակա անձը կարող է իր առաջարկները/մտահոգությունները/բողոքներն առաջին հերթին ներկայացնել բողոքների համար հատուկ նախատեսված կապալառուի անձնակազմին (շինարարության աշխղեկ, ճարտարագետ, սոցիալական կամ բնապահպանական ոլորտի մասնագետ), որպեսզի փորձ արվի տեղական մակարդակով ժամանակին և անհապաղ լուծել բողոքները: Կապալառուի կողմից հաստատված մեխանիզմը կլինի Ծրագրի ԲԼՄ-ի անբաժանելի մասը.
   a. Կապալառուն ապահովում է կոնտակտային տվյալների տրամադրումը (դաշտային գրասենյակի գտնվելու վայրը, աշխատանքային ժամերը, պատասխանատու կոնտակտային անձանց անունները, հեռախոսահամարները, փոստի և էլեկտրոնային փոստի սովորական հասցեները և այլն)՝ պաստառների և Ծրագրի տեղեկատվական ցուցատախտակների միջոցով:
   b. ԱԵԱ-ները կարող են տեղում մոտենալ կապալառուի ներկայացուցչին և/կամ առաջարկը/բողոքը գրանցել կապալառուի կողմից վարվող բողոքների գրանցամատյանում՝ ծրագրի ազդեցության գոտում կամ դրա մերձակայքում գտնվող դաշտային գրասենյակում: Բողոքը գրառելու ձևանմուշը, դիմումի բովանդակությունը և ձևաչափը  պետք է նշվեն կապալառուի ԲԿՊ-ում և համաձայնեցվեն ճարտարագետի հետ:
   c. Կապալառուն անմիջապես հասցեագրում է բողոքը, ձեռնարկում համապատասխան մեղմման միջոցառումներ խնդիրը ողջամիտ ժամկետում լուծելու համար և 15 օրվա ընթացքում ԱԵԱ-ին տրամադրում է գրավոր արձագանք/պատասխան՝ դրա պատճենն ուղարկելով ճարտարագետին և ՀՏՁՀ-ին: Մուտքագրված բողոքների/առաջարկների վերաբերյալ ներկայացված տվյալները կապալառուի կողմից պետք է տրամադրվեն ամսական հաշվետվությունում, որը թարմացվում է ամեն ամիս՝ բողոքի կարգավիճակն արտացոլելու նպատակով:

8. **Քայլ 2**. Եթե ԱԵԱ-ին չի բավարարում կապալառուի կողմից իր բողոքի լուծումը, ապա պետք է լինեն հետագա հնարավորություններ ևս: Այնուհետև ԱԵԱ-ն կարող է դիմել ճարտարագետին՝ կապալառուից պատասխանը ստանալուց/չստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում բողոքը գրանցելու միջոցով: Մուտքագրված առաջարկությունները/բողոքները դասակարգվում են ըստ բնապահպանական և սոցիալական/վերաբնակեցման հոդվածների: Բողոքներին առնչվող սոցիալական/վերաբնակեցման երաշխիքը պետք է քննարկվի ճարտարագետի և ՀՏՁՀ-ի համապատասխան մասնագետների շրջանակում: Ճարտարագետը պետք է բողոքին արձագանքի 15 օրվա ընթացքում:

9. **Քայլ 3**. Եթե ճարտարագետը չի բավարարում բողոքը, ապա ԱԵԱ-ն կարող է դիմել ՀՏՁՀ, ՏԿԵՆ և ԱՁԲ: Շինարարության փուլում ԾԻԳ-ի մակարդակով բողոքը ընթացք է ստանում նույն սխեմայով, ինչ-որ նախաշինարարական փուլում: Բոլոր կոնտակտային տվյալները կապալառուի կողմից պետք է տրվեն պաստառներում և ծրագրի տեղեկատվական ցուցատախտակում: Կապալառուն այս փուլում ծառայում է որպես մուտքակետ և տրամադրում անհրաժեշտ բացատրությունները ու օգնությունը նշված մարմիններին դիմելիս՝ անհրաժեշտության դեպքում ԱԵԱ-ի հետ անձնական կապի միջոցով:

10. **Վերջապես**, ԱԵԱ-ն միշտ կարող է հետամուտ լինել դատարանի ուշադրությանն ու միջամտությանը: Այնուհանդերձ, բոլոր ջանքերը կգործադրվեն խնդիրները կապալառուի, ճարտարագետի և ՀՏՁՀ-ի մակարդակով կարգավորելու համար: Եթե դա հնարավոր չէ, ապա փորձեր կարվեն հարցերը ՏԿԵՆ-ի մակարդակում լուծելու համար՝ դատավարությունից հնարավորինս խուսափելու/այն նվազագույնի հասցնելու նպատակով: Եթե ԱԵԱ-ն չի բավարարվում ԲԼՄ-ի տրամադրած բոլոր հնարավորությունները սպառելուց հետո, ապա նա կարող է դիմել ԱՁԲ-ին: Անկախ վերջնարդյունքից և լուծումներից՝ բոլոր բողոքները պատշաճ կերպով կփաստաթղթավորվեն և կտրամադրվեն վերանայման, մոնիթորինգի և գնահատման նպատակներով:

### Հավելված 5. Պատասխանատու մարմինների առաջադրանքները և ձեռքբերումները

| **Առաջադրանքներ/ ձեռքբերումներ** | **Կապալառու** | **Գլխավոր ճարտարագետ** | **ՀՏԶՀ** | **ԱԶԲ** |
| --- | --- | --- | --- | --- |
| Կարողությունների զարգացում. Երաշխիքների գծով անձնակազմի նշանակում | Բնապահպան- ության/ առողջապահության և անվտանգության, և սոցիալական ոլորտների ազգային մասնագետներ (լրիվ դրույքով): | Բնապահպանու- թյան/ առողջապահու- թյան և անվտանգության, և սոցիալական ոլորտների ազգային մասնագետներ (լրիվ դրույքով): | Բնապահպանու- թյան ոլորտի ազգային պա- տասխանատու (լրիվ դրույքով) Սոցիալական ոլորտի ազգային մասնագետ (լրիվ դրույքով): | Բնապահպանու- թյան ոլորտի միջազգային մասնագետ, բնապահպանու- թյան հարցերով ազգային խորհրդատու |
| Կարողությունների զարգացում. Վերապատրաս- տում և կողմնորոշման դասընթացներ | Անցկացնում է վերապատ- րաստման դասընթացներ շրջակա միջավայրի և առողջապա- հության ու անվտանգության խնդիրների վերաբերյալ՝ համաձայն Երաշխիքների ապահովման կողմնորոշման պլանի: | Վերապատրաստ- ման նստաշրջան- ներ ԱԶԲ-ի Երաշխիքների ապահովման և ազգային օրենսդրության պահանջների վերաբերյալ: | Հաճախում է վերապատ- րաստման դասընթացներին: | Հաճախում է վերապատ- րաստման դասընթացներին: |
| Հանրային քննարկում և հա- ղորդակցություն | Նախաշինարա- րական փուլի հանդիպումներ ԱԵԱ- ների և հանրության այլ անդամների հետ: ԲԼՄ-ի ստեղծում: | Մասնակցություն հանրային քննարկումներին և կապալառուի նախաշինարա- րական փուլի հանդիպումներին: | Մասնակցություն հանրային քննարկումներին և կապալառուի նախաշինարա- րական փուլի հանդիպումներին: ՇՄՆՈւ-ի և տարեկան հաշ- վետվությունների հրապարակում կայքում: | Հանրային քննարկումներ ՇՄՆՈւ-ի շրջանակում՝ համաձայն ԱԶԲ-ի ԱՄՔՓ-ի (2009 թ.): ՇՄՆՈւ-ի և տարեկան հաշ- վետվությունների հրապարակում կայքում: |
| Լրացուցիչ ուսում- նասիրություններ | Ճանապարհների և գույքի վիճակի նախաշինա- րարական փուլի ուսումնասիրություն և շինարարության գործընթացին խոչընդոտող ծառերի ու թփերի ուսում- նասիրություն: | Վերանայում է ճանապարհների և գույքի վիճակի ուսումնասի- րության մասին կապալառուի հաշվետվու- թյունը, տալիս է պաշտոնական հաստատում: Կապալառուի կողմից շինա- րարության գործընթացին խոչընդոտող | Քննարկում և հաստատում: | Քննարկում և թույլատրում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ծառերի ու թփերի ուսումնասի-րության վերա-նայում և հաստատում: | | |
| Կապալառուի բնապահպանական կառավարման առանձին պլանը | Պատրաստում և թարմացում (պահանջի դեպքում): | Վերանայում և պաշտոնական հաստատում: | Քննարկում և հաստատում: | Քննարկում և թույլատրում: |
| Մեղմման միջոցառումներ՝ ըստ ՇՄՆՈւ-ի/ ԲԿՊ-ի | ԲԿՊ-ում նկարագրված մեղմման միջոցառումների իրականացում ամենօրյա կտրվածքով: Իրականացման ինքնամոնիթորինգ ամենօրյա կտրվածքով | Իրականացման մոնիթորինգ կապալառուի կողմից: | Տեսչական ստուգում | Աուդիտ առաքելու-թյունների այցերի միջոցով: |
| Տեղամասային այցեր | Օրական | Շաբաթական | Ամսական | Համաձայն ԱԶԲ-ի ժամանակացույցի |
| Աշխատանքների մասով մեթոդական փաստաթղթեր | Աշխատանքների մեթոդական փաստաթղթերի, այդ թվում՝ բնապահպանական/ առողջապահության և անվտանգության/ սոցիալական ազդեցությունների գնահատման և մեղմման ծրագրի պատրաստում: | Կապալառուի՝ աշխատանք-ների մեթոդական փաստաթղթի վերանայում և հաստատում: | Քննարկում և հաստատում: | Քննարկում և թույլատրում, ըստ անհրաժեշտու-թյան: |
| ԲԼՄ | ԲԼՄ-ի ստեղծում՝ ՇՄՆՈւ-ում նկարագրված ընթացակարգերին համապատասխան: ԲԼՄ-ի և բողոքների կարգավիճակի մասին հաղորդում ամսական հաշվետվությունում: | ԲԼՄ-ի գրանցա-մատյանի մոնիթորինգ, խնդիրներին հետամտում և քննարկում ԱԵԱ-ների հետ: Կապալառուի պատասխա-նատվությունից դուրս գտնվող խնդիրների ուղղումը ՀՏԶՀ-ին: | Կապալառուի կողմից ուղղման կարգավիճակի հետևում: Կապալառուի պատասխա-նատվությունից դուրս գտնվող խնդիրների լուծում կամ ուղարկում ՏԿԵՆ-ին: | Շտկման կարգավիճակի հետևում: |
| Հաշվետվություն | Ուղղիչ գործողու-թյունների մասին հաշվետվություն՝ հիմնված ԳՃ-ի Մեղմման համապատասխա-նության և տեսչական | Վերանայել կապալառուի շաբաթական ՈւԳՊ-ը և Երաշխիքների ապահովման գոր-ծողությունների | Տարեկան հաշվետվություն ԱԶԲ-ին: Տարեկան հաշվետվության հրապարակումը ՀՏԶՀ-ի կայքում հայերեն և | Տարեկան հաշվետվության հրապարակումը ԱԶԲ-ի կայքում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ստուգման հաշվե-<br>տվություններով<br>նախատեսված<br>անհամապատաս-<br>խանության/մասնակի<br>համապատասխա-<br>նության և ուղղիչ<br>գործողությունների<br>պահանջների վրա,<br>շաբաթական<br>կտրվածքով:<br>Երաշխիքների<br>ապահովման<br>գործողությունների<br>ամսական<br>հաշվետվություն<br>(ԵԳՀ)՝ որպես<br>կապալառուի<br>Առաջընթացի մասին<br>ամսական<br>հաշվետվության մաս՝<br>ճարտարագետի<br>կողմից<br>հրահանգված<br>ձևաչափին<br>համապատասխան:<br>Վթարների/<br>պատահարների<br>մասին զեկույց՝<br>ՀԱՎԵԼՎԱԾ Ի-ի<br>ձևաչափի համաձայն:<br>Մոնիթորինգի<br>հաշվետվություն<br>ԹՎԺ-ի ընթացքում՝<br>կիսամյակային<br>կտրվածքով: | ամսական հաշ-<br>վետվությունները,<br>և հաստատել<br>դրանք:<br>Վերանայել<br>կապալառուի<br>Վթարների/<br>պատահարների<br>մասին զեկույց:<br>Բնապահպանա-<br>կան երաշխիք-<br>ների ապահով-<br>ման ամսական<br>հաշվետվության<br>պատրաստում `<br>որպես ԳՃ-ի<br>Առաջընթացի<br>մասին ամսական<br>հաշվետվության<br>մաս: Փուլի<br>ավարտի<br>հաշվետվության<br>պատրաստում<br>ծրագրի<br>շինարարության<br>փուլի ավարտին: | անգլերեն<br>լեզուներով:<br>Հետշինարարական<br>փուլի աուդիտի<br>հաշվետվություն՝<br>ԱՋԲ-ին:<br>Ճարտարագետի<br>ամսական և փուլի<br>ավարտի հաշվե-<br>տըվությունների<br>վերանայում: | |

### Հավելված 6 (ա). Բնապահպանական կառավարման պլան. Մեղմում

| Ոսկեհատի միջնակարգ դպրոցի վերակառուցում | | | | |
|---|---|---|---|---|
| **Ծրագրի գործողությունները** | **Հնարավոր բնապահպանական ազդեցություններ** | **Առաջարկվող մեղմման միջոցառումներ** | **Պատասխանատու մարմիններ** | **Մեղմման ինդիկատիվ ծախս** |
| **ՆԱԽԱԳԾՄԱՆ ՓՈՒԼ** | | | | |
| **Նախագծման Էտապ** | | | | |
| 1. Մրցութային և պայմանագրային փաստաթղթերի պատրաստում: | Երաշխիքային նկատառումներն արտացոլված չեն մրցութային և պայմանագրային փաստաթղթերում: | Մշակել Տեխնիկական մասնագրեր՝ հիմնվելով ԲԿՊ-ում սահմանված մեղմման միջոցառումների վրա, և ներառել բնապահպանական կետերը մրցութային և պայմանագրային փաստաթղթերի Առանձնահատուկ պայմաններում: | Նախագծի ճարտարագետ/ՀՏԶՀ<br>Մշակել Տեխնիկական մասնագրեր և ներառել համապատասխան բնապահպանական կետերը մրցութային և պայմանագրային փաստաթղթերում:<br><br>ՀՏԶՀ<br>Վերանայել մրցութային և պայմանագրային փաստաթղթերը:<br><br>ԱԶԲ<br>Տեղեկացված լինել ՀՏԶՀ-ի վերանայման արդյունքների մասին: | Ներառված է նախագծի ճարտարագետի բյուջեում: |
| 2. Տեղեկատվության հրապարակում, հանրային հաղորդակցություն, քննարկում և մասնակցություն: | Ծրագրի վերաբերյալ շահագրգիռ կողմերի և ազդեցության ենթակա կողմերի տեղեկատվության և ընկալման բացակայությունը կարող է հանգեցնել հիասթափության և բողոքների, ինչն էլ, իր հերթին, կարող է հանգեցնել Ծրագրի մասով ձգձգումների: | 1. Կազմակերպել հանդիպում-քննարկումներ հիմնական շահագրգիռ կողմերի հետ և ծրագրի վերաբերյալ հանրային քննարկումներ/լսումներ՝ համաձայն Հանրային քննարկումների և հաղորդակցության պլանի:<br><br>2. Ներկայացնել ԲԼՄ-ը, որը պետք է ստեղծել Ծրագրի համար:<br><br>3. Տեղադրել ծրագրի մասին տեղեկատվությունը և վերջնական | Նախագծի ճարտարագետ/ՀՏԶՀ<br>Կազմակերպում է հանրային քննարկումների/լսումների միջոցառումներ և փաստաթղթեր:<br><br>ՀՏԶՀ<br>Ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը և վերջնական ՇՄՆՌւ-ն/ԲԿՊ-ը տեղադրում է կայքում:<br>Աջակցում է հանրային քննարկումների/լսումների | Ներառված է նախագծի ճարտարագետի/ՀՏԶՀ-ի բյուջեում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ՇՄՆՈւ-Ն/ԲԿՊ-Ն ՀՏԶՀ-ի և ԱԶԲ-ի կայքերում: | կազմակերպմանը և մասնակցում է դրանցում:<br><br><u>ԱԶԲ</u><br>Ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը և վերջնական ՇՄՆՈւ-Ն/ԲԿՊ-ը տեղադրում է կայքում:<br><br>Մասնակցում է հանրային քննարկումներին/ լսումներին: | |
| **ՆԱԽԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓՈՒԼ** | | | | |
| **Մոբիլիզացիայի էտապ** | | | | |
| 3.Բնապահպահպանա-կան/ԱևԱ-ի և սոցիալական երաշխիքների ոլորտի անձնակազմի նշանակում: | Բնապահպահպա-նական/ԱևԱ-ի և սոցիալական կառավարման բացակայությունը կարող է հանգեցնել անհամապա-տասխանությանը պայ-մանագրի կետերին, ՏՄ-ներին և ՇՄՆՈւ-ին/ԲԿՊ-ին: | Նշանակել անձնակազմ, որը պատասխանատու կլինի պայմանագրի կետերին, այդ թվում՝ ՇՄՆՈւ-ին/ԲԿՊ-ին՝ ծրագրի շինարարական գործողությունների համապա-տասխանության իրականացման և մոնիթորինգի համար: | <u>ՀՏԶՀ</u><br>Նշանակել ծրագրի բնապահպանական ոլորտի պատասխանատուի:<br><br><u>Գլխավոր ճարտարագետ</u><br>Նշանակել ծրագրի համար բնապահպանության/ԱևՍ ոլորտի մասնագետի և սոցիալական ոլորտի մասնագետի:<br><br><u>Կապալառու</u><br>Աշխատանքի վերցնել Բնապահպանության/ԱևԱ և սոցիալական ոլորտների մասնագետների: | Ներառված է <u>համապատասխան</u> բյուջեներում և պայմանագրում:<br><br><u>Գլխավոր ճարտարագետ</u><br>24 ամսվա վարձատրությունը գնահատվել է 36 000 դոլարի չափով և ներառվել է բյուջեում:<br><br><u>Կապալառու</u><br>Շինարարության 24 ամիսների ժամանաշրջանի ընթացքում լրիվ դրույքով 1 ԱԱԲ մասնագետի ծախսը հաշվարկվել է 24,000 դոլարի չափով: |
| 4. Հաղորդակցություն հանրության հետ | Պլանավորված աշխատանքների, գործողությունների և դրանց իրականացման ժամանակացույցի վերաբերյալ | Իրականացնել միջոցառումներ՝ համաձայն Հանրային քննարկումների և հաղորդակցության պլանի.<br>1.Իրականացնել նախաշինա-րարական փուլի հանդիպումներ | <u>Կապալառու</u><br>Կազմակերպել հանդիպումներ:<br><br><u>Գլխավոր ճարտարագետ</u> | 233. Ներառված է կապալառուի բյուջեում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | համայնքների և ազդեցության ենթակա կողմերի տեղեկատվության և ընկալման բացակայությունը կարող է հանգեցնել հիասթափության և բողոքների, ինչն էլ իր հերթին կարող է բերել Ծրագրի մասով ձգձգումների և այլ խոչընդոտների: | պլանավորված աշխատանքների, գործողությունների և դրանց իրականացման ժամանակացույցի վերաբերյալ: Այդ նպատակով.<br>✓ վերհանել հնարավոր զգայուն ընկալիչները՝ օգտագործելով գործող ՇՄՆՕւ-ով/ԲԿՊ-ով տրված և տեղամաս կատարված շրջայցերի ընթացքում ձեռքբերված տվյալները,<br>✓ հաղորդակցվել, Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի ղեկավարների հետ՝ նրանց տրամադրելով տեղեկատվություն և հետամուտ լինելով նրանց աջակցությանը,<br>✓ տեղեկացնել հնարավոր ԱԵԱ-ներին և հանրությանը տեսանելի վայրերում տեղադրված հայտարարությունների և պաստառների միջոցով, որոնք պարունակում են տեղեկատվություն ծրագրի, հանդիպման ամսաթվի, վայրի և օրակարգի մասին, ինչպես նաև՝ կոնտակտային տվյալներ,<br>✓ պատրաստել ծրագրի հակիրճ տեսողական ներկայացումը, ներառյալ՝ շինարարական աշխա-տանքների նկարագրու-թյունը, ժամանակացույցը և բնապահպանական ու ԱԱԱ մեղմման միջոցառումները, | Աջակցել կազմակերպմանը և մասնակցել:<br><br><u>ՅՏՁՅ</u><br><br>Աջակցել կազմակերպմանը և մասնակցել: | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ✓ հանրությանը ներկայացնել գործող ՇՄՆՈՒ-ի/ԲԿՊ-ի ԲԼՄ-ը:<br>2. Գրառել նախաշինարարական փուլի հանդիպման արձանա-գրությունը, օրակարգը, մասնա-կիցների ցանկը, բարձրացված հարցերը, նկարները, և ամբողջական տեղեկատվությունը ներառել ԲԿՀ-ում:<br>3. Հասցեագրել բարձրացված խնդիրները կամ դրանք ուղարկել գլխավոր ճարտարագետին, և հաջորդիվ զեկուցել դրանց կարգավիճակի (լուծված/չլուծված) մասին ամսական առաջընթացի մասին առաջին հաշվետվությունում: | | |
| 5. Ծրագրի բոլոր կողմերի կողմնորոշումը, իրազեկվածության բարձրացումը և վերապատրաստումը բնապահպանական/ԱևԱ և սոցիալական երաշխիքների մասով: | Ծրագրի կառավարման, ճարտարագիտական/ տեխնիկական վերահսկո-ղության և կապալառուի անձնակազմի կողմից ԱԶԲ-ի անվտանգության մեխանիզմների և բնապահպանական, ԱևԱ և սոցիալական երաշխիքների ոլորտում Հայաստանի օրենսդրական պահանջների վերաբերյալ տեղեկատվության և ընկալման բացակայություն, ինչը հանգեցնում է պայմանագրային կետերի անտեսմանը: | Իրականացնել միջոցառումներ՝ համաձայն Բնապահպանական և երաշխիքների կողմնորոշման պլանի: Գլխավոր ճարտարագետի կողմից կազմակերպված՝ ԱԶԲ-ի անվտանգության մեխանիզմների վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ ՀՏԶՀ-ի և կապալառուի ճարտարագի-տական և բնապահպանական, առողջապահության ու անվտան-գության ոլորտների անձնակազմի համար՝ նախքան շինարարական աշխատանքները մեկնարկելը:<br><br>Ապահովել Կապալառուի կողմից կազմակերպվող բնապահպանական կողմնորոշման/անվտանգության թեմայով ներածական դասընթացը կապալառուների և ենթակապալառուների բոլոր աշխատողների համար՝ մեկնարկը տալուց հետո առաջին շաբաթվա | <u>Գլխավոր ճարտարագետ</u><br>Կազմակերպել վերապատրաստման նստաշրջաններ՝ մոբիլիզացիայի ժամանակահատվածում մեկնարկը տալուց հետո, նախքան շինարարական աշխատանքները սկսելը:<br><br><u>Կապալառու</u><br>Մշակում է Երաշխիքների ապահովման կողմնորոշման պլանը և իրականացնում բոլոր աշխատողների վերապատրաստումը մոբիլիզացիայի ժամանակահատվածում՝ նախքան շինարարական աշխատանքները մեկնարկելը:<br><br><u>ՀՏԶՀ</u> | <u>Գլխավոր ճարտարագետ</u><br>Վերապատրաստման ծախսը ներառված է գլխավոր ինժեների՝ ԱԱԲ ոլորտի լրիվ դրույքով մասնագետի բյուջեում:<br><br><u>Կապալառու</u><br>Վերապատրաստման ծախսը ներառված է կապալառուի՝ ԱԱԲ ոլորտի լրիվ դրույքով մասնագետի բյուջեում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ընթացքում և նախքան շինարարական աշխատանքները սկսելը: | Մասնակցում է վերապատրաստման նստաշրջաններին:<br><br><u>ԱՉԲ</u><br>Մասնակցում է վերապատրաստման նստաշրջաններին: | |
| 6. Տեղամասում մոբիլի-զացիոն աշխատանքներ. ճանապարհների գծանշում, գլխավոր գրասենյակ և դաշտային ճամբարներ: | Շինարարական աշխատանքները սկսվում են նախքան երաշխիքների ապահովման միջոցա-ռումներ ձեռնարկելը: | 1. Իրականացնել ճանապարհ-ների տեսանելի գծանշում և հստակորեն ուրվագծել ճանապարհի իրավունքը՝ տեղադրելով ամուր և ժապավենային ցանկապատեր (ինչը պահանջվում է ճարտարագետի կողմից):<br>2. Կազմակերպել դաշտային ճամբարի տարածքը, ներառյալ՝ պահեստը, կայանատեղին, արհեստանոց-արտադրամասերը և այլն:<br>3. Ապահովել սանիտարական հարմարություններ ողջ անձնակազմի համար:<br>4. Անձնակազմին ապահովել արտահագուստով և ԱՊՄ-ով: | <u>Կապալառու</u><br>Իրականացնում է Մոբիլիզացիայի պլանը:<br><br><u>Գլխավոր ճարտարագետ</u><br>Մոնիթորինգի է ենթարկում Մոբիլիզացիայի պլանի իրականացումը:<br><br><u>ՀՏՋՀ</u><br>Ստուգում է Մոբիլիզացիայի պլանի իրականացումը: | Ներառված է կապալառուի բյուջեում: |
| 7. Ճանապարհների և գույքի վիճակի ուսումնասիրություն: | Տեղական ճանապարհները կարող են վնասվել շահագործվող մեքենաների և բեռնատարների պատճառով: | Ուսումնասիրության վերաբերյալ հաշվետվություն, որը պատրաստվել և ներկայացվել է նախքան շինարարական աշխատանքները մեկնարկելը: | <u>Կապալառու</u><br>Կատարում է ուսումնա-սիրություն և ներկայացնում ուսումնասիրության վերա-բերյալ հաշվետվությունը:<br><br><u>Գլխավոր ճարտարագետ</u><br>Վերանայում և հաստատում է հաշվետվությունը: Մոնիթորինգի է ենթարկում ուսումնասիրության իրականացումը:<br><br><u>ՀՏՋՀ</u><br>Վերահսկողություն է իրականցնում գործընթացի նկատմամբ: | Ներառված է կապալառուի բյուջեում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ** | | | | |
| **1. Բնապահպանական և առողջապահության ու անվտանգության կողմնորոշման պլան** | | | | |
| 8. Բնապահպանական/ ԱևԱ/սոցիալական երաշխիքների մասով ծրագրի բոլոր կողմերի կողմնորոշում, իրազեկվածության բարձրացում և վերապատրաստում: | Ծրագրի ճարտարագիտա-կան/տեխնիկական վերա-հսկողության և կապալառուի անձնակազմի կողմից ԱԶԲ-ի երաշխիքների ապահովման, և բնապահպանական, ԱևԱ և սոցիալական պաշտպանության մասով Հայաստանի օրենսդրական պահանջների վերաբերյալ տեղեկատվության և ընկալման բացակայություն, ինչը հանգեցնում է պայմանագրային կետերի անտեսմանը: | Իրականացնել միջոցառումներ՝ համաձայն Բնապահպանական և անվտանգության կողմնորոշման պլանի:<br>1. Պարբերաբար իրականացնել գլխավոր ճարտարագետի անձնակազմի վերապատ-րաստում բնապահպանական/ ԱևԱ/սոցիալական երաշխիքների վերաբերյալ՝ ամեն անգամ, երբ տեղի է ունենում անձնակազմի փոխարինում:<br>2. Պարբերաբար իրականացնել կապալառուի և ենթակա-պալառուի աշխատողների վերապատրաստում՝ համաձայն և Երաշխիքների ապահովման կողմնորոշման պլանի՝ ղեկավար-վելով հետևյալ պահանջներով.<br><br>ա. առնվազն մեկ պարտադիր վերապատրաստման նստաշրջան ողջ անձնակազմի համար՝ տարեկան կտրվածքով,<br>բ. նախքան աշխատանքը սկսելը նոր վարձու աշխատողների վերապատրաստում երաշխիք-ների ապահովման վերաբերյալ, ներառյալ՝ արտակարգ իրավիճակներին արձագանքման թեմայով վերապատրաստումը,<br>գ. աշխատանքին ներհատուկ անվտանգության վերաբերյալ վերապատրաստում նախքան նոր տիպի աշխատանք սկսելը,<br>դ. ճարտարագետի պահանջով՝ լրացուցիչ միջանկյալ վերապատրաստման դասընթացներ | <u>Կապալառու</u><br>Պատրաստում է կողմնորոշման ծրագիրը:<br>Իրականացնում է Կետ 2-ում նշված վերապատրաստման դասընթացները:<br><br><u>Գլխավոր ճարտարագետ</u><br>Վերանայում և հաստատում է ծրագիրը, և աջակցում է դրա իրականացմանն ու մոնիթորինգի է ենթարկում այն:<br><br><u>ՅՏՃՅ</u><br>Ստուգում է իրականացումը: | <u>Կապալառու</u><br>Ներառված է լրիվ դրույքով ԱԱԲ մասնագետի ծախսերում:<br><br><br><br><u>Գլխավոր ճարտարագետ</u><br>Ներառված է ԲԱԱՍ ոլորտի մասնագետի վարձատրության մեջ: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | հատուկ թեմաներով և/կամ թիրախային աշխատանքային խմբերի հետ,<br>ե. վերապատրաստման և կողմնորոշման այլ նստաշրջան-ներ՝ համաձայն Աշխատանքային առողջության և անվտանգության պլանի: | | |
| **2. Աշխատանքային առողջության և անվտանգության պլան** | | | | |
| 9. Տեղամասի բոլոր գործողությունները | Ծրագրի մասով գործող առողջապահական և անվտանգության կարգավորումների վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը կարող է հանգեցնել աշխատողների, ինչպես նաև՝ Ծրագրի ազդեցության ենթակա մարդկանց և տեղամասի մերձակայքում գտնվող այլ մարդկանց հիվանդու-թյանը, վնասվածքներին կամ մահվանը, ինչի պատճառը ենթարկվելն է նյութերի ազդեցությանը. սահելը, սայթաքել ու ընկնելը և առարկաների անկումը: | I. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՈՆՈՐՇՄԱՆ ԾՐԱԳԻՐ<br>1. Ապահովել, որպեսզի ողջ անձնակազմն անցնի Աշխատանքային առողջության և անվտանգության կողմնորոշման վերապատրաստման դասընթացները:<br>2. Առողջության և անվտանգության համար պատասխանատուները նշանակվում են յուրաքանչյուր աշխատանքային հատվածում, իսկ նրանց կոնտակտները տեղադրվում են տեսանելի տեղերում:<br>3. Ներդրվում են աշխատանքին վերաբերող կանոնավոր ցուցում-ներ ողջ անձնակազմի անվտանգ աշխատանքի վերաբերյալ՝ Հայաստանի օրենսդրության համաձայն, ինչպես նաև՝ նոր վարձու աշխատողների համար՝ նախքան աշխատանքը սկսելը: Գրանցամատյանը վարվում է և հասանելի է ստուգման համար:<br><br>II. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ<br>4. Անձնակազմին տրամադրել արտահագուստ և ԱՊՄ, և ապահովել, | <u>Կապալառու</u><br>Պատրաստում, ներկայացնում և իրականացնում է ենթապլանը:<br>Աշխատանքի վերցնել սողուն-ներով զբաղվող մասնագետի (հերպետոլոգ)՝ անձնակազմին վերապատրաստելու, և օձերի ու այլ սողունների առանձնյակներին հավաքելու և մեկուսացնելու նպա-տակով, եթե այդպիսիք դիտարկվեն շինարարության տեղամասում:<br><br><u>Գլխավոր ճարտարագետ</u><br>Վերանայում, հաստատում է պլանը և մոնիթորինգի ենթարկում իրականացումը:<br>Վերանայում է պատա-հարների հաշվառման գրանցամատյանը:<br><br><u>ՀՏՋՀ</u><br>Վերանայում է պլանը և աջակցում ճարտարագետին: | Ներառված է կապալառուի բյուջեում:<br><br>Թվով 60 բանվորների համար ԱՊՄ-ի ծախսը, մեկ բանվորի համար 250 դոլարի հաշվարկով, կազմում է<br>15,000 դոլար: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | որպեսզի տեղամա-սում յուրաքանչուրը կրի դրանք:<br>5. Առողջության և անվտանգության մասով վթարները պետք է արձանագրվեն և դրանց մասին պետք է զեկուցել ճարտարագետին ու համապատասխան մարմիններին:<br><br>III. ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ՕԺԱՆ-ԴԱԿ ՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ<br>6. Տրամադրել անվտանգության գործիքներ և ստեղծել օժանդակ հարմարություններ<br>7. Շինարարության տեղամասում բացառել անապահով աշխատան-քային գործելակերպերը և անապահով գործիքները:<br>8. Բոլոր փորված խրամուղիները, փոսերը, յուղերը և այլնը ապահով ցանկապատված են, ծածկված ու պաշտպանված են մինչև աշխատանքային օրվա ավարտը:<br>9.Հրդեհաշիջման սարքավո-րումներն առկա և հեշտ հասանելի են բոլոր շահագործվող մեքենաներում, դաշտային ճամբարներում և շինարարության տեղամասի բոլոր հատվածներում:<br>IV. ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒ-ԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ<br>10. Բուժաշխատողի կողմից աշխատողի և անձնակազմի այլ անդամների առողջության կանոնավոր բժշկական զննումներ և տեղում առկա գրառումներ ստուգման համար:<br>11. Առաջին օգնության հավաքածուներն առկա և հեշտ հասանելի են բոլոր շահագործվող | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | մեքենաներում և շինարարության տեղամասի բոլոր հատվածներում:<br>12. Կապալառուի անձնակազմին տրամադրել քսանյութեր, ուսումնական նյութեր, բավարար քանակությամբ բարձրորակ պահպանակներ, ՍՃՓՎ/ՄԻԱՎ կանոնավոր թեստավորում, իսկ անհրաժեշտության դեպքերում՝ ՍՃՓՎ-ի բուժում և ՁԻԱՀ-ի բուժում, և այդ ամենն՝ անվճար:<br>13. Մշակել վարակիչ հիվանդությունների (օրինակ՝ Քովիդ-19) մասով Առողջության և անվտանգության ծրագիր. ապահովել վարակիչ հիվանդությունների (օրինակ՝ Քովիդ-19) վերահսկողության մի-ջոցների, գործիքների և հարմա-րությունների առկայությունը բոլոր աշխատանքային տարածքներում:<br>V. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆ-ԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ<br>13. Ձեռնարկել բոլոր ողջամիտ նախազգուշական միջոցները (պինդ և ժապավենային ցանկապատում, պահակակետեր, արգելող պաստառներ և այլն) աշխատանքային տարածքը մեկուսացնելու և շինարարության տեղամաս չարտոնված մուտքը կանխելու նպատակով:<br>14. Տեսանելիորեն տեղադրել ընթացող շինարարական աշխատանքների մասին տեղեկացնող և վտանգի մասին նախազգուշացնող ցուցանակներ/պաստառներ:<br>15. Ապահովել շրջանցիկ ճանապարհ տեղի բնակիչների և այլ մարդկանց | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | համար՝ ապահովելու, որպեսզի նրանք մուտք չունենան աշխատանքային տարածք: Բոլոր անհրաժեշտ տե-ղերում տեղադրել ցուցանակներ, որոնք ցույց կտան շրջանցիկ անցուղին:<br>16. Ապահովել աշխատանքային տարածքի ներսում անվտանգ միջանցք անցորդների համար շրջանցումը հնարավոր չլինելու դեպքում:<br>17. Տեղադրել կամրջակներ փորված խրամուղիների վրա՝ ապահովելու մուտքը դեպի բնակելի տներ և/կամ բիզնեսներ:<br>18. Մաքուր պահել մարդկանց կողմից օգտագործվող անցու-ղիները և բացառել շինարա-րության տեղամասերից դուրս եկող ցեխից մակերևույթի սայթաքունությունը:<br>VI ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՆԱՎՈՐ ՍՈՂՈՒՆՆԵՐԻՑ<br>19. Օգտագործել ԱՊՄ. աշխատել բարձր կոշկատակեր ունեցող կոշիկներով և պաշտպանիչ ձեռնոցներով:<br>20. Հնարավորինս անվտանգ հեռավորություն պահպանել ցանկացած տեսակի օձերից և այլ սողուններից:<br>21. Աշխատանքների սկզբում ներգրավել սողունների գծով մասնագետի (հերպետոլոգ), ով անձնակազմին կսովորեցնի, թե ինչպես ճանաչել դրանք, և կբռնի աշխատանքային տարածքում հայտնաբերված սողունների առանձնակներին ու դրանց բաց կթողնի այդ կենդանիների | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | բնակության համար բարենպաստ ապահով վայրում:<br>22. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինարարական աշխատանքներն իրականացվելու են Արմավիրի մարզում, որտեղ գործում է մասնագիտական բժշկական օգնություն (հիվանդա-նոցներում), թունավոր օձի խայթոցի դեպքում դրա դեմ օգտագործվող շիճուկ կամ այլ դեղամիջոցներ ունենալու կարիք չկա. տուժածին պետք է հնարավորինս շուտ տեղափոխել մոտակա հիվանդանոց: | | |
| **3. Հանրային քննարկումների և հաղորդակցության պլան** | | | | |
| 10.Հանրային քննարկումներ, լսումներ, հանդիպումներ, իրազեկվածության բարձրացում: | Համայնքների և ազդեցու-թյան ենթակա կողմերի մոտ՝ պլանավորված աշխա-տանքների, գործողու-թյունների և դրանց իրականացման ժամանա-կացույցի վերաբերյալ տեղե-կատվության և ընկալման բացակայությունը կարող է հանգեցնել հիասթա-փության և բողոքների, ինչն էլ, իր հերթին, կարող է հանգեցնել Ծրագրի ձգձգումների և այլ խոչընդոտների: | 1. Իրականացնել գործող ՇՄՆՈՒ-ում նկարագրված միջոցա-ռումները և իրականացնել Հանրային քննարկումների և հաղորդակցության պլանը:<br>2. Ստեղծել ԲԼՄ ծրագրի համար և վարել այն, մասնավորապես.<br>ա. Տեղադրել պաստառներ կամ ծրագրի տեղեկատվական ցուցատախտակներ հանրության համար համապատասխան տեղեկատվությամբ. դաշտային գրասենյակի գտնվելու վայրը, աշխատանքային ժամերը, պատասխանատու կոնտակտային անձանց անունները, «թեժ գծի» հեռախոսահամարները, փոստային և էլեկտրոնային փոստի հասցեները և այլն:<br>բ. տեղաբաշխել հանրության և ԱԵԱ-ների կողմից բարձրացվող խնդիրներով զբաղվելու համար պատասխանատու աշխատող-ներին՝ ճանապարհի յուրաքան-չյուր հատվածում: Ապահովել նրանց | <u>Կապալառու</u><br>Իրականացննում է ՀՔՀՊ-ը և ստեղծել ԲԼՄ:<br><br><u>Գլխավոր ճարտարագետ</u><br>Հասցեագրում և/կամ փո-խանցում է կապալառուի պատասխանատվության շրջանակից դուրս եղած խնդիրները:<br><br><u>ՀՏԶՀ</u><br>Հասցեագրում և լուծում է իր պատասխանատվության ներքո եղած խնդիրները: | Սույն ենթապլանի մշակման, իրականաց-ման և կառավարման ծախսը ներառված է կապալառուի բյուջեում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | օպերատիվ համագործակ-ցությունը սոցիալական ոլորտի մասնագետի հետ: գ. մշակել դիմումի ձևանմուշ հանրային բողոքների և առաջարկությունների համար: դ. վարել բողոքների գրանցամատյանը և այն պահել դաշտային գրասենյակում՝ հեշտ հասանելի ազդեցության ենթակա մարդկանց և ստուգման համար: Գրանցամատյանում գրանցել ԱԵԱ-ների բոլոր գրավոր ու բանավոր դիմումները, և զեկուցել լուծման կարգավիճակի մասին ամսական առաջընթացի հաշվետվությունում: 3. Կազմակերպել պարբերական հանդիպումներ համայնքի անդամների հետ՝ ցակացած առաջացող հարցը քննարկելու նպատակով, եթե այդպիսին կան: 4. Նախապես (առնվազն 1 օր առաջ) ցուցատախտակների և պաստառների միջոցով տեղեկացնել ազդեցություն կրող բնակչությանը ցանկացած անհարմարությունների մասին, ինչպիսիք են՝ երթևեկության հասանելիության ընդհատում-ները և պայմանները, պայթեցման աշխատանքները, տեղական ջրամատակարարումը, էլեկտրա-կանությունը և այլն: | | |
| **4. Բուսական և կենդանական աշխարհի պահպանություն և բուսականությունից մաքրում** | | | | |
| 11. Մաքրում ու արմատահանում, և հողային աշխատանքներ, այլ շինարարական աշխատանքներ: | Բուսական և կենդանական աշխարհի կենսամիջավայրերի դեգրադացիա, տեսակների կորուստ: Կենդանական աշխարհի տեսակների և նրանց կենսամիջավայրի խախտում՝ | 1. Ապահովել, որպեսզի բոլոր աշխատողները և անձնակազմի այլ անդամներ վերապատ-րաստվեն բուսական և կենդանական աշխարհի պահպանության և բուսականությունից մաքրման պլանի պահանջների վերաբերյալ՝ նախքան | <u>Կապալառու</u> Պատրաստում է Բուսական և կենդանական աշխարհի պահպանության և բուսականությունից մաքրման պլանը, ներառյալ՝ Ծառերի կառավարման պլանը, | Կապալառուի ԱԱԲ մասնագետի կողմից այս ենթապլանի մշակման, իրականացման և կառավարման ծախսերը ներառված են կապալառուի բյուջեում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | վնասաբեր ժամանակներում բուսականությունից մաքրման ընթացքում: | որևէ հատվածում աշխատանքը սկսելը:<br><br>*Ծառերի (թփերի) հատում.*<br>2. Հստակորեն գծանշել այն տարածքները, որոնք պետք է մաքրվեն կամ այլ կերպ խաթարվեն: Աշխատողները և սարքավորումները մնում են գծանշված տարածքներում՝ կենսամիջավայրերին հասցվող վնասը կանխելու և/կամ նվազագույնի հասցնելու նպատակով:<br>2. Ծանուցել ճարտարագետին նախքան ծառերի և թփերի որևէ հատում սկսելը<br>3. Հատված ծառերի և թփերի գրանցամատյանը վարվում է և հասանելի է ստուգման համար:<br>4. Խստորեն կատարել բուսականության հատման և մաքրման աշխատանքները՝ համաձայն Տեխնիկական մասնագրերի Մաքրում և արմատահանում բաժնի, և Ծառեր և թփեր բաժնի:<br>5. Ապահովել, որպեսզի աշխատողներն օգտագործեն համապատասխան ԱՊՄ-ը՝ ծառերը հատելիս և բուսակա-նությունը մաքրող քիմիական նյութերն օգտագործելիս:<br>6. Կառավարել հատված և մաքրված բուսականությունը՝ համաձայն Թափոնների և նյութերի հեռացման ծրագրի: Բացառել փայտի թափոնների այրումը:<br>7. Տեղ հատկացնել փայտի թափոնների և մաքրված խոտի ժամանակավոր կուտակման համար, | իրականացնում և կառավարում է պահանջվող մեղմման միջոցառումները:<br>Աշխատանքի է վերցնում սողունների գծով մասնագետի (հերպետոլոգ)՝ օձերի ու այլ սողունների առանձնյակներին հավաքելու և մեկուսացնելու նպատակով, եթե այդպիսիք դիտարկվեն շինարարության տեղամասում:<br><br><u>Գլխավոր ճարտարագետ</u><br>Վերանայում և հաստատում է պլանը, մոնիթորինգի է ենթարկում իրականացումը և կառավարումը:<br><br><u>ՀՏԶՀ</u><br>Աջակցում է ՇՄՆ-ի հետ կապերի հաստատմանը:<br>Վերահսկողություն է իրականացնում գործընթացի նկատմամբ և ստուգում է իրականացումը: | Մանրամասն նախագծում գնահատված ծառերի և թփերի մասով՝ համայնքում գոյություն ունեցող ծառերի պահպանության արժեքը գնահատվելու է թարմացված ՇՄՆՈւ-ում՝ հիմնվելով ծառերի և թփերի հաշվարկված քանակի և տեսակի վրա: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | և դրանք հեռացնել 2 օրվա ընթացքում:<br>8. Ձեռնարկել միջոցառումներ՝ այն ծառերն ու թփերը պաշտպանելու համար, որոնք չեն հատվելու, բայց կարող են ենթարկվել ազդեցության (նշել դրանք այնպես, որ հեշտ ճանաչելի լինեն աշխատողների համար, տրանսպորտային միջոցների տեղաշարժի, թափոնների և նյութերի հեռացման կարգավորրում և այլն):<br>9. Խուսափել տարածքի ցանկացած աղտոտումից և անհարկի ծառահատումներից ու բուսականության մաքրումից: Կտրել միայն այն ծառերն ու թփերը, որոնք խոչընդոտում են աշխատանքներին. ձեռնպահ մնալ ծառերը, փայտանյութը, մացառները, մշակաբույսերը և այլ բուսական աշխարհը՝ աշխատանքների կատարման համար անհրաժեշտ չափից ավելի ոչնչացնելուց, հեռացնելուց կամ մաքրելուց:<br>10. Վերականգնել խոտածածկը և այլ բուսականությունը ժամանակավոր օգտագործվող տարածքներում:<br>*Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ*<br>11. Դադարեցնել աշխատանքներն անհայտ տեսակների հանդիպելու դեպքում և պարզել՝ դրանք Կարմիր գրքում գրանցված, հազվագյուտ, թե՞ անհետացող տեսակներ են: Անհրաժեշտության դեպքում կանգնեցնել ժամանակավոր պաշտպանիչ պատեր այն հատվածներում, որտեղ հաճախ են հայտնվում կենդանիներ (եթե այդպիսիք կան): | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 12. Խուսափել ծրագրի ազդեցության գոտուց դուրս թափոնների և/կամ նյութերի տեղադրումից՝ շրջակայքի կենդանական աշխարհին պատճառվող ցանկացած վնաս կանխարգելելու նպատակով: 13. Օգտագործել ցածր աղմուկ, վիբրացիա և ավելի քիչ արտանետվածք ունեցող սարքեր այն վայրերում, որոնք մոտ են հանդիպած բներին և այլ հատվածների, որտեղ կենդանի-ները հաճախ են հայտնվում: 14. Պլանավորել աշխատանքների կատարման ժամանակացույցը՝ բնադրման/բազմացման/ բուծման խաթարման վտանգը նվազագույնի հասցնելու նպատակով: Խուսափել շինարարական աշխատանքներից երեկոյան և գիշերային ժամերին, կենդանիների բազմացման շրջանում և այլն: 15. Ձեռնարկել պաշտպանության միջոցառումները և վիրավորված կենդանի հայտնաբերելու դեպքում տեղեկացնել ինժեներին: 16. Հնարավորության դեպքում բռնել շինարարության տեղամա-սում հայտնաբերված ողնաշարա-վորներին, դրանք տեղադրել հատուկ կոնտեյներում և տեղափոխել տվյալ տեսակի համար ներհատուկ տարածք՝ մարդկանց բնակավայրերից հեռու: 17. Հողային աշխատանքների փուլում ներգրավել սողունների գծով մասնագետի (հերպետոլոգ), ով կհավաքի և կմեկուսացնի առանձնյակներին (եթե այդպիսիք կան): | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 21. Իրականացնել թունավոր սողուններից պաշտպանվելու միջոցառումներ, որոնք առաջարկվում են սույն ՇՄՆՈւ-ում:<br>22. Առավելագույնս խուսափել տարածքի հետագա աղտոտումից և սահմանափակել ծառերի հատումը: | | |
| **5. Շրջակա միջավայրի պաշտպանության պլան** | | | | |
| 12.Հողային աշխատանքներ, Ճանապարհային աշխատանքներ, Նյութերի տեղափոխում և փոխադրում<br>Այլ շինարարական գործունեություն | Հողի էրոզիա<br><br>Չափից ավելի փոշի և օդի աղտոտվածություն՝ պայմանավորված տրանսպորտային միջոցների արտանետումներով:<br><br>Չափից շատ աղմուկ և վիբրացիա: | *Օդի աղտոտվածության և փոշու վերահսկողություն*<br>1. Նվազագույնի հասցնել փոշու արտանետումները՝ շինարարա-կան աշխատանքների տարածք-ներում մակերեսների պարբերա-կան ջրցանման միջոցով:<br>Ջրման հաճախականությունը պետք է համաձայնեցնել ճարտարագետի հետ՝ կախված հողի տեսակից և սեզոնային ու եղանակային պայմաններից, սակայն՝ ոչ պակաս, քան 2-3 անգամ աշխատանքային օրվա ընթացքում:<br>2. Աշխատանքները պլանավորել այնպես, որ նվազագույնի հասցվեն ազդեցության ենթակա փորված տարածքները՝ որպես փոշու արտանետումների հիմնական աղբյուր, և խուսափել փորված հողի կույտերը տեղամասում երկար ժամանակ պահելուց:<br>3. Առաքել շինանյութը օգտագործման պահին և բացառել տեղում այն զանգվածային նյութերի վաղաժամ կուտակումները, որոնք չեն կարող օգտագործվել հենց այդ օրը:<br>4. Ծածկել զանգվածային նյութերի կույտերը, եթե դրանք, այնուհանդերձ, երկար ժամանակ մնում են տեղում՝ փոշու արտանետումները կանխելու նպատակով: | <u>Կապալառու</u><br>Իրականացնում է անհրաժեշտ մեղմման միջոցառումները և կառավարում դրանք:<br>Կազմում և գլխավոր ճարտարագետի հաստատմանն է ներկայացնում Քանդման մեթոդի մասին փաստաթուղթը:<br><br><u>Գլխավոր ճարտարագետ</u><br>Մոնիթորինգի է ենթարկում պահանջվող մեղմման միջոցառումների իրականա-ցումը և կառավարումը:<br>Վերանայում և հաստատում է կապալառուի կողմից մշակված Քանդման մեթոդի մասին փաստաթուղթը:<br><br><u>ՀՏԶՀ</u><br>Աջակցում է ՇՄՆ-ի հետ կապերին:<br>Վերահսկողություն է իրականացնում գործընթացի նկատմամբ և ստուգում է իրականացումը: | Հետևյալ ծախսերն են առնչվում շրջակա միջավայրի պաշտպանությանը.<br>ա) Հողի վերին շերտի ծավալը գնահատվելու է Մանրամասն նախագծում: Հողի վերին շերտի դուրսբերման, կուտակման և վերաօգտագործման ծախսը կգնահատվի Մանրամասն նախագծի հիման վրա և կներառվի կապալառուի բյուջեում:<br>բ) Ցանվող խոտի ծավալը գնահատվելու է Մանրամասն նախագծում և կներառվի կապալառուի բյուջեում:<br>Շինարարության ժամանակացույցի 18 ամիսներից 6 ամիսների (180 օր) ընթացքում փոշու արտանետումը կանխելու նպատակով՝ էրոզիայի և աճի ռիսկ ենթադրող անբերի հողի վրա խոտ ցանելու արժեքը կգնահատվի Մանրամասն նախագծի հիման վրա և կներառվի կապալառուի բյուջեում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 5. Կարգավորել տրանսպորտային միջոցների և մեքենաների արագության մակարդակը՝ փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով: Շինարարության տեղամասում արագության մակարդակը չպետք է գերազանցի 10-20 կմ/ժ-ը:<br>6. Ճանապարհները պարբերաբար մաքրել ճամփեզրերին կուտակված ցեխից և ավազից, քանի որ դրանք դառնում են փոշու արտանետումների աղբյուր:<br>7. Ապահովել, որպեսզի բոլոր բեռնատարներն օգտագործեն ծածկեր՝ զանգվածային նյութերը հասարակական ճանապարհ-ներով տեղափոխելիս, և բնակելի տարածքների հարևանությամբ գտնվող շինարարության տեղամասերում:<br>8. Անհրաժեշտության դեպքում աշխատողներին տրամադրել փոշեպաշտպան դիմակներ և ապահովել նրանց կողմից դրանց օգտագործումը:<br>9. Իրականացնել մեքենաների և սարքավորումների կանոնավոր տեխնիկական զննում ու վերանորոգում՝ գազի ավելորդ արտանետումներից խուսափելու համար:<br>10. Ներդնել և կիրառել հին շենքերի քանդման համապա-տասխան տեխնոլոգիաներ՝ համաձայն գլխավոր ճարտարագետի կողմից հաստատված Քանդման մեթոդի մասին փաստաթղթի: | | դ) Անբերի հողի և շինարարական ուղիների վրա ջրցանի արժեքը կգնահատվի Մանրամասն նախագծի հիման վրա և կներառվի կապալառուի բյուջեում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | *Հողի էրոզիայի և նստվածքների վերահսկողություն*<br>1. Հնարավորության դեպքում պահպանել առկա հողի շերտը: Հողը երբեք չխաթարել, եթե չկա դրա անհրաժեշտությունը:<br>2. Ապահովել ժամանակավոր ծածկույթ, ինչպիսին է արագ աճող խոտն այն վայրերում, որտեղ հողի շերտը հեռացվում է, և հողը երկար ժամանակ գտնվում է ազդեցության տակ:<br>3. Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ հողի էրոզիան կանխելու և թեքությունների կայունությունն ապահովելու համար:<br>4. Հեռացնել հողի վերին շերտը մաքրման և արմատահանման աշխատանքներից հետո՝ նախքան հողի փորումը սկսելը, և այն առանձնացնել մեծ քարերից ու ապարներից:<br>5. Չափել հեռացված և պահպանված հողի վերին շերտը, իսկ արձանագրումները պահել ստուգման համար հասանելի հաշվառման գրանցամատյանում:<br>6. Պահպանել հողի վերին շերտը 2 մ-ից ոչ ավելի բարձրություն ունեցող սովորական կույտերով՝ ճարտարագետի հետ համաձայնեցված հատուկ հատկացված տարածքներում, պահպանելով անվտանգ հեռավորություն թափոններից և այլ նյութերից:<br>7. Կառավարել հողի վերին շերտը՝ դրա քիմիական և կենսաբանական հատկություն-ները պահպանելու նպատակով: Այն վերաօգտագործել | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ծառեր, թփեր տնկելու և կանաչապատման այլ կարիքների համար:<br>8. Ցանել խոտ երկար ժամանակով պահպանվող հողի վերին շերտի կույտերի վրա՝ էրոզիայից և կորուստներից խուսափելու համար:<br>9. Հողի վերին շերտի կույտերի վրա ստեղծել հեղեղաջրերի արտահոսքն ապահովող ջրահեռացման գծեր՝ էրոզիայից խուսափելու նպատակով:<br>*Աղմուկի և վիբրացիայի վերահսկողություն*<br>1. Խուսափել շինարարական օբյեկտները, ճամբարները, մեքենաներն ու սարքավորումները զգայուն ընկալիչների, զորօրինակ՝ վատ մեկուսացված տների, դպրոցների, այլ հասարակական և բնակելի տարածքների մոտ տեղակայելուց:<br>2. Աղմկոտ գործողությունները պլանավորել օրվա կեսերին, երբ դա հնարավոր է:<br>3. Ապահովել, որպեսզի զգայուն ընկալիչների մոտ վիբրացիայի մակարդակները (վատ մեկուսաց-ված տներ, դպրոցներ) պարբե-րաբար վերահսկվեն. աշխղեկները և աշխատողները տեղյակ են ճարտարագետի կողմից պահանջվող շինարարության պատշաճ մեթոդի մասին:<br>5. Ապահովել, որպեսզի բոլոր մեքենաները հագեցված լինեն համապատասխան խլացու-ցիչներով և բացառել ոչ պատշաճ վիճակում գտնվող մեքենաները:<br>6. Ապահովել, որպեսզի տեղամասում գտնվող աշխատող-ներն ու այլ | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | աշխատակիցներ՝ աղմկոտ միջավայրում աշխա-տելիս ապահովված լինեն համապատասխան ԱՊՄ-ով, այդ թվում՝ ականջները պաշտպանող միջոցներով: | | |
| **6. Մակերևութային և ստորգետնյա ջրերի պահպանության պլան** | | | | |
| 13. Դպրոցի վերակառուցման աշխատանքներ | Մակերևութային և ստորգետնյա ջրերի աղտոտում. | 1. Տեղակայել աղտոտում, փոշի և նստվածք գոյացնող օբյեկտներն ու սարքավորումները ոռոգման ջրանցքից և ջրհավաք առուներից հնարավորինս հեռու:<br>2. Կառուցել աշխատանքային տարածքի ջրահեռացման համակարգ, նախապես հավաքել հոսքաջրերը և դրանք մաքրել նախքան դեպի ջրահեռացման գիծ հեռացնելը: Կանխել շինարարության բոլոր տեղամասերից հողմաջրերի և հոսքաջրերի ցանկացած չմաքրված ջրահեռացում:<br>3. Կանխել ջրհոսքը շինարարության բոլոր տեղամասերից, այդ թվում՝ շինարարական ճամբարներից, քարհանքերից, քարաջարդ և բետոնի խմբաքանակի գործարանից, թափոնների հեռացման վայրից և այլն:<br>4. Մաքրել շինարարական աշխատանքների արդյունքում առաջացած հոսքաջրերը հողից և այլ նստվածքներից՝ նախքան դրանց ջրահեռացումը դեպի ջրանցքներ:<br>5. Պարբերաբար ստուգել, վերանորոգել և պահպանել ջրահեռացման կառույցները՝ հատկապես տեղատարափ անձրևներից հետո նստվածքա-կուտկումից խուսափելու համար: | <u>Կապալառու</u><br>Իրականացնում է պահանջվող մեղման միջոցառումները:<br><br><u>Գլխավոր ճարտարագետ</u><br>Մշտադիտարկում է իրականացումը և կառավարումը:<br><br><u>ՀՏԶՀ</u><br>Աջակցում է ՇՄՆ-ի հետ կապերի հաստատման գործում: Վերահսկողություն է իրականացնում գործընթացների նկատմամբ և ստուգում է իրականացումը: | Ներառված է կապալառուի բյուջեում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 6. Կառուցել յուղաբաժանիչներ և այլ նյութերի որսիչներ՝ կոշտ և հեղուկ թափոնների արտահոսքը դեպի ոռոգման ջրանցք և ջրհավաք առուներ խստորեն վերահսկելու նպատակով:<br>7. Մաքրել մեքենաները և սարքավորումները, ձեռնարկել վերանորոգման և լիցքավորման աշխատանքները ոռոգման ջրանցքներից և ջրհավաք առուներից անվտանգ հեռավորության վրա:<br>8. Տեղադրել որսիչներ բոլոր բեռնատար մեքենաներում և մեքենասարքավորումներում՝ ջրի աղտոտումը՝ պատահական թափման դեպքում կանխելու նպատակով:<br>9. Բացառել ցանկացած անթույլատրելի ջրառ և ապահովել անսահմանափակ հոսք դեպի ոռոգման ջրանցք ու ջրհավաք առուներ:<br>10. Տեղադրել ջրարգելակ կամ նմանատիպ սահմանափակող սարքեր բոլոր օբյեկտներում՝ պատահական թափման դեպքում աղտոտումը կանխելու նպատակով: | | |
| **7. Կոմունալ ծառայությունների/տնտեսության պաշտպանության և տեղափոխման պլան** | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 14. Հողային աշխատանքներ և կոմունալ ծառայությունների տեղափոխման աշխատանքներ | Գործող կոմունալ ծառայությունների վնասը և մատուցվող ծառայությունների խաթարումն առաջացնում է ազդեցություն և բարձրացնում ԱԵԱ-ների անգոհունակությունը: | Նախքան տարածքում աշխատանքներ մեկնարկելը կապալառուն պետք է բնակչությանը ծանուցի ջրամատակարարման, էլեկտրաէներգիայի և գազի մատակարարման ընդհատումների մասին:<br>1. Իրականացնել կոմունալ ծառայությունների պաշտպանու-թյունը և տեղափոխումը՝ խստիվ համապատասխանելով Տեխնիկական մասնագրերին:<br>2. Կոմունալ ծառայությունների սեփականատիրոջ հետ միասին՝ պարզել ծառայությունների ճշգրիտ վայրը և, անհրաժեշտության դեպքում, իրականացնել փորձնական փորումներ:<br>3. Ծառայությունների ժամա-նակավոր խաթարումը նվազագույնի հասցնելու նպատակով՝ պլանավորել աշխատանքների իրականացման ժամանակացույցը և իրականացնել այն:<br>4. Ծառայությունների հնարավոր խափտման մասին ԱԵԱ-ներին ծանուցել նախքան աշխատանքների մեկնարկը:<br>5. Տեղափոխել շինարարական աշխատանքների ընթացքում հայտնաբերված այն կոմունալ ծառայությունները, որոնք չեն վերհանվել Նախագծման փուլում կամ պաշտպանել դրանք հնարավոր վնասներից: | <u>Կապալառու</u><br>Ուսումնասիրում է կոմունալ ծառայությունները նախքան փորման աշխատանքները:<br>Կապ է հաստատում կոմունալ ծառայությունների սեփականատերերի, տեղական իշխանությունների և ծառայություն մատուցողների հետ:<br><br><u>Գլխավոր ճարտարագետ</u><br>Վերահսկում և մոնիթորինգի է ենթարկում իրականացումը:<br><br><u>ՀՏԶՀ</u><br>Աջակցում է սեփականատերերի, տեղական իշխանությունների և ծառայություններ մատուցողների հետ կապեր հաստատելու հարցում: | Կոմունալ ծառայությունների պաշտպանության և տեղափոխման ծախսը հնարավոր չէ ճշգրտորեն հաշվարկել՝ որպես բնապահպանական մեղմման միջոցառում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 6. Վնասված կոմունալ ծառայությունները վերականգնել առավելագույնը 1-2 օրվա ընթացքում կապալառուի սեփական միջոցներով: | | |
| **8. Շինաշխատանքային ճամբարների պլան** | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 15. Աշխատանքներին առնչվող հարմարու-թյունների ստեղծում. հիմնական գրասենյակ և դաշտային ճամբարներ, ներառյալ՝ շարժական տները, սարքավորումների և նյութերի պահեստային տարածքը, մեքենաների կայանատեղիները, սանիտարական և ճաշի ու հանգստի համար նախատեսված հարմարությունները աշխատողների և այլ անձնակազմի համար: | Տեղի բնակիչներին պատճառվող անհանգստություն, բնակչության և տեղական/կենտրոնական իշխանությունների հետ հնարավոր կոնֆլիկտային իրավիճակ, ինչպես նաև՝ հողի և ստորգետնյա ջրերի աղտոտում: | 1. Դաշտային ճամբարը հստակորեն տեղակայել ծրագրի տարածքի ազդեցության գոտու սահմաններում, որքան հնարավոր է հեռու բնակելի տարածքներից՝ բնակիչներին չանհանգստացնելու համար: Պահպանվում է 50 մ բուֆերային հեռավորություն զգայուն ընկալիչներից՝ բնակելի և այլ շենքերից ու բիզնեսներից:<br>2. Եթե ճամբարը ստեղծվում է ծրագրի տարածքից դուրս, ապա ստանալ հողի սեփականատիրոջ թույլտվությունը՝ նախքան նրա տարածքում ճամբար ստեղծելը:<br>3. Խուսափել բնական լանդշաֆտի և բուսականությամբ ծածկված մակերևույթների վրա ճամբարներ, ժամանակավոր շինություններ, մեքենաների և մեքենասարքավորումների կայանատեղիներ և այլ հարմարություններ տեղադրելուց:<br>4. Ապահովել սանիտարական հարմարություններ ողջ անձնակազմի համար. բավարար քանակությամբ խմելու և լվացքի ջուր, զուգարաններ, ճաշի և հանգստի համար սեզոնային հարմարություններ: Ապահովել, որպեսզի նման հարմարությունները հասանելի լինեն բոլոր աշխատողներին և, որպեսզի անձնակազմի մյուս անդամներն ունենան համապատասխան հասարա-կական հարմարությունների (զուգարաններ, ձեռքի լվացարաններ, ցնցուղներ և այլն), ճաշարանի և | Կապալառու<br>Իրականացնում է պահանջվող մեղմման միջոցառումները և կառավարում է:<br><br>Գլխավոր ճարտարագետ<br>Մոնիթորինգի է ենթարկում իրականացումը և կառավարումը:<br><br>ՀՏՁՀ<br>Վերահսկողություն է իրականացնում գործընթացների նկատմամբ և ստուգում է իրականացումը: | Կապալառուի կողմից սույն ենթապլանի մշակման, իրականացման և կառավարման ծախսն արդեն ներառված է ընդհանուր շինարարության ծախսում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | գրասենյակների ողջամիտ հասանելիություն:<br>5. Գիշերային ժամերին ապահովել շինարարության տեղամասի և ճամբարի լուսավորությունը:<br>6. Նյութերի ժամանակավոր պահեստավորման տարածքները հատկացված են, իսկ նյութերը՝ հավաքված կանոնավոր կույտերով և ծածկված սորուն նյութերի պարագայում:<br>7. Պարկերը և տարաները պետք է ապահովված լինեն տվյալ նյութի անվանման և վնասակարության /այն է՝ վտանգավոր/ոչ վտանգավոր/ մասին նշում պարունակող պիտակով:<br>8. Մեքենաների կայանա-տեղիները, վերանորոգման և լիցքավորման կետերը կազմակերպվում են խճաքարով և/կամ այլ ներկլանիչ նյութերով ծածկված անթափանցելի տարածքում,<br>9. Աշխատանքային օրվանից առաջ իրականացվող մեքենաների կանոնավոր տեխնիկական զննում՝ արտահոսքը և հողի աղտոտումը կանխելու համար:<br>10. Յուղի, քսանյութերի, վառելիքի արտահոսքերի դեպքում տարածքը մաքրվել է, իսկ աղտոտված ներկլանիչները տե-ղափոխվել թափոնների հեռաց-ման համար նախատեսված վայր:<br>11. Շինարարության տեղամասից ցեխի և կեղտի տարածումը կանխելու նպատակով ճամբարի տարածքի | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | լվացման-մաքրման աշխատանքները պարբերաբար կազմակերպվել են:<br>12. Ձեռնարկված են բոլոր ողջամիտ նախազգուշական միջոցները (պինդ ցանկապատեր, պահակակետեր և այլն)՝ տարածք չարտոնված մուտքը կանխելու համար:<br>13. Բոլոր մեքենաները, այդ թվում՝ աշխատող անձնակազմի մաս-նավոր մեքենաներն ապահովված են ծրագրի և/կամ ընկերության տարբերանշաններով: | | |
| **9. Տեղամասի կառավարման պլան (ծրագրի ազդեցության գոտուց դուրս օգտագործվող տարածքների համար)** | | | | |
| 16.Քարհանքեր, գրունտային տեղամասեր, բետոնի խմբաքանակի և ասֆալտի գործարաններ, լցակույտավայրեր | Աղմուկի և փոշու հետ կապված անհանգստու-թյուն, ազդեցություններ շրջակա միջավայրի վրա, ներառյալ՝ պատմական, մշակութային վայրերը և հուշարձանները, գեղագի-տական տեսքի կորուստ, տեղական կենսապահովման և հաղորդակցության պատկերի խաթարում, փոխգործակցություն շինարարական աշխատուժի հետ, ճնշում շրջակա բնական ռեսուրսների վրա, ինչպիսիք են, օրինակ՝ էրոզիան և նստվածքակուտակումը, ճանապարհներին հասցվող վնաս և սոցիալական ծառայություններ: | 1. Նորերը բացելու փոխարեն՝ նախապատվությունը տալ գործող քարհանքերին, բետոնի խմբաքանակի և ասֆալտի գործարաններին:<br>2. Հիմնել և շահագործել քարհանքը և գրունտային փոսը, լցակույտավայրը, բետոնի խմբաքանակի և ասֆալտի գործարանները՝ խստիվ համապատասխանելով ճարտարագետի կողմից հաստատված տեղանքին հատուկ բնապահպանական կառավարման պլանին (ՏՀԲԿՊ):<br>3. Այն դեպքում, երբ բետոնի խմբաքանակի և ասֆալտի գործարանները նոր են ստեղծվում, ապա դա իրականացվելու է ՏՀԲԿՊ-ի շրջանակում ռիսկի գնահատման հիման վրա վերհանված՝ հնարավոր ազդեցությունը կրող ընկալիչներից, այն է, բնակելի տարածքներից որքան հնարավոր է հեռու, տեղական բնակչությանն անհանգստա-ցնելուց խուսափելու նպատակով: | Կապալառու<br>Պատրաստում է ՏՀԲԿՊ, իրականացնում է պահանջվող մեղմման միջոցառումներ և կառավարում է:<br><br>Գլխավոր ճարտարագետ<br>Վերանայում և հաստատում է պլանը, մոնիթորինգի է ենթարկում իրականացումը և կառավարումը:<br><br>ՀՏԶՀ<br>Ստուգում է իրականացումը: | Կապալառուի կողմից սույն ենթապլանի մշակման, իրականացման և կառավարման ծախսն արդեն ներառված է ընդհանուր շինարարության ծախսում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 4. Խուսափել բետոնի խմբաքանակի և ասֆալտի գործարանները չխաթարված բնական լանդշաֆտի և բուսականությամբ ծածկված մակերևույթների վրա տեղակայելուց:<br>5. Կիրառել վերը ծրագրված բոլոր մեղմման միջոցառումները՝ օդի, ջրի որակի, բուսական և կենդանական աշխարհի, ջրահեռացման և այլ կոմունալ ծառայությունների, ինչպես նաև մերձակայքի բնակելի տարածքների բնակչության վրա ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով:<br>6. Պատրաստել ՏԿՊ մեքենաների մուտքի և շահագործման համար:<br>7. Պատրաստել թափոնների կառավարման պլան՝ աղբի գոյացման հետ կապված բոլոր խնդիրները լուծելու համար: | | |
| **10. Երթևեկության և հասանելիության կառավարման պլան** | | | | |
| 17. Տրանսպորտային միջոցների շարժը շինարարության տեղամասում և դրանից դուրս | Երթևեկության արգելափակում<br>Երթևեկության հետ կապված վտանգներ և անվտանգության խնդիրներ<br>Տեղական ճանապարհնե-րին հասցվող վնաս՝ ծանր շինտեխնիկայից և տրանսպորտային միջոցներից.<br>Փոշի, աղմուկ և վիբրացիա<br>Հասարակական ճանա-պարհներ տարվող կեղտն ու ցեխը: | 1. Կապալառուից պահանջվում է իրականացնել ճանապարհների և գույքի վիճակի նախաշինարարական փուլի ուսումնասիրություն՝ տեղական ճանապարհային ցանցի և ճամփեզրի ազդեցության ենթակա օբյեկտների վիճակը փաստագրելու նպատակով, և նա պետք է փոխհատուցի ու վերականգնի ցանկացած պատճառված վնաս:<br>2. Տրանսպորտային միջոցների և մեքենաների տեղաշարժը կազմակերպել այնպիսի եղանակով, որը նվազագույն խոչընդոտ կստեղծի հասարակական երթևեկության հոսքի համար:<br>3. Խուսափել ՏԿՊ-ի սխեմայով չնախատեսված հասարակական ճանապարհներն արգելափակելուց: | Կապալառու<br>Իրականացնում է և կառավարում:<br><br>Գլխավոր ճարտարագետ<br>Մոնիթորինգի է ենթարկում իրականացումը և կառավարումը:<br><br>ՀՏԶՀ<br>Ստուգում է իրականացումը | Կապալառուի կողմից սույն պլանի մշակման, իրականացման և կառավարման ծախսն արդեն ներառված է ընդհանուր շինարարության ծախսում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 4. Ապահովել ժամանակավոր շրջանցիկ ճանապարհների առկայություն երթևեկության և հետիոտների համար: Ստանալ պաշտոնական մարմիններից թույլտվություններ ՏԿՊ-ի, այդ թվում՝ ժամանակավոր շրջանցիկ երթուղիները համար:<br>5. Տեղորոշել շինարարության տեղամասերի մուտքերն ու ելքերն այնպես, որ դրանք նվազագույն անհանգստություն պատճառեն ընդհանուր երթևեկությանը և չվտանգեն հասարակական անվտանգությունը:<br>6.Շինարարության տեղամասերի բոլոր հնարավոր մուտքերի մոտ տեղադրել ընթացող շինարարական աշխատանքների վերաբերյալ բավականին շատ նախազգուշացնող նշաններ, ինչպես նաև երթևեկությունը կարգավորող նշաններ, գծանշումներ և ազդանշանորդներ:<br>7.Ներդնել համապատասխան շինարարական նշանների սխեմա, ներառյալ՝ ուղղության նշանները, գծանշումները, ճանապարհային ազդանշանները, լուսավորու-թյունը, երթևեկությունն ուղղորդելու նպատակով հստակ տեսանելի կոշտ արգելապատնեշները և արտաուղղումների պահպանումը:<br>8. Ապահովել հետիոտների համար ցանկապատված անվտանգ այլընտրանքային ճանապարհներ:<br>9. Ապահովել հասարակության անսահմանափակ՝ 24 ժամյա հասանելիությունը տներ, խանութներ, բիզնես և այլն: | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 10. Ամրագրել 20 կմ/ժ արագության սահմանաչափերը աշխատանքային տարածքում՝ անվտանգության և փոշու վերահսկման նպատակով:<br>11. Պլանավորել տրանսպորտային միջոցների ժամանակացույցը՝ հնարավորության դեպքում պիկ ժամերից խուսափելու համար:<br><br>*Տրանսպորտային միջոցների կառավարումը տեղամասում և դրա սահմաններից դուրս*<br>12. Պարբերաբար վերապատրաստել վարորդներին՝ անվտանգության հարցերով, կիրառել աշխատանքային ժամերի և արագության սահմանաչափեր (20 կմ/ժ), անհնազանդության համար կիրառել տուգանքների համակարգ:<br>13.Յատկացնել ավտոկայա- նատեղի, իսկ մեքենաների կայանատեղին տեղակայել միայն նախատեսված վայրերում:<br>14. Ապահովել, որպեսզի բոլոր տրանսպորտային միջոցները (բեռնատարներ և մասնավոր մեքենաներ) ապահովված լինեն ընկերության նույնականացման տարբերանշաններով:<br>15. Երաշխավորել, որ տրանսպորտային միջոցներն ապահովված լինեն ծածկված բեռներով՝ ավազ, հող, թափուկներ ու թափոններ տեղափոխելիս և դրանք օգտագործեն՝ շինարարության տեղամասից հեռանալիս և բնակելի տներին ու բիզնեսներին մոտ գտնվող աշխատանքային տարածքի ներսում: | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 16. Ապահովել, որպեսզի տրանսպորտային միջոցները հագեցված լինեն արտանետումների թուլացու-ցիչներով, խլացուցիչներով: 17. Բեռնատարների և տրանսպորտային միջոցների վերանորոգման, վերալիցքավորման և սպասարկման համար հատկացնել պատշաճ կահավորված կետեր և տրանսպորտային միջոցները սպասարկել միայն այդ տարածքում: 18. Ստուգել, որպեսզի մեքենաները պարբերաբար սպասարկվեն՝ վառելիքի և յուղի արտահոսքը կանխելու նպատակով: 19. Դադարեցնել արտահոսք ունեցող մեքենաների աշխատանքը և դրանք փոխարինել պատշաճ աշխատանքային վիճակում գտնվող մեքենաներով: 20. Տրամադրել միջոցներ անվադողերի մաքրման համար (տեղամասում խիճապատ մակերեսներ և մեքենաների լվացման հարմարություններ, որոնք ապահովված կլինեն ջրհոսքից համապատասխան պաշտպանությամբ) շինհրապարակից դուրս գալուց առաջ՝ շինարարության կեղտի և ցեխի տարածումը կանխելու նպատակով: 21. Պարբերաբար ստուգել հարակից ճանապարհներին շինարարության տեղամասերից եկող կեղտի և ցեխի կուտակումը: Ավլել և մաքրել ամեն անգամ, երբ դա կպահանջվի: | | |

| 11. Արտակարգ իրավիճակներին արձագանքման պլան | | | | |
|---|---|---|---|---|
| 18. Վտանգավոր նյութերի գործածման և այլ արտակարգ իրավիճակ-ներ (պատահարներ, վթարներ և այլն) | Շինարարության հետ կապված՝ հնարավոր աշխատանքային և հասա-րակական անվտանգու-թյանը սպառնացող վտանգներ:<br><br>Դիզելային վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսք կամ թափում, որոնք մտնում է հողերի և ստորգետնյա ջրերի մեջ: | *Վտանգավոր նյութերի գործածում*<br>1. Մշակել և իրականացնել ընթացակարգեր՝ ապահովելու վտանգավոր նյութերի անվտանգ գործածումը և պահպանումը: Տեսանելի տեղում փակցնել արտակարգ իրավիճակներին արձագանքման ընթացակարգերը պարունակող պաստառներ և պահել անվտանգության տվյալների թերթիկներ, որոնք մատչելի կլինեն ստուգման համար:<br>2. Տեղում պատրաստի վիճակում պահել արտահոսքերի մաքրման գործիքներ և աշխատողներին ուսուցանել դրանց պատշաճ օգտագործման մասին:<br>3. Անմիջապես մաքրել արտահոսքի տարածքը՝ հողի և ստորգետնյա ջրերի հնարավոր աղտոտումը կանխելու նպատակով, հատուկ ներկլանիչ նյութ օգտագործելու միջոցով:<br>4. Օգտագործել միայն այդ քիմիական նյութերն ու նշված վտանգավոր նյութերը, իսկ անհրաժեշտության դեպքում թարմացնել ցանկը:<br>5. Այդ նյութերը պետք է պահվեն տեղամասում, ապահովված լինեն նույնականացման պիտակներով և լինեն ծածկված ապահով և բնական օդափոխվող տարածքում, որն ունի անթափանցելի հատակ և դրա շուրջը գտնվող անթափանցելի հողաթումբ: Վերջինս պետք է ունենա ամենամեծ տանկի հզորության առնվազն 110%-ը:<br>6. Տեղակայել պահեստային տարածքը ջրահեռացման գծերից հեռու և | <u>Կապալառու</u><br>Ներդնում է պահանջվող մեղմման միջոցառումները և կառավարում է դրանք:<br><br><u>Գլխավոր ճարտարագետ</u><br>Մոնիթորինգի է ենթարկում իրականացումը և կառավարումը:<br><br><u>ՀՏԶՀ</u><br>Աջակցում է ՇՄՆ-ի հետ կապերի հաստատմանը: Ստուգում է իրականացումը: | Կապալառուի կողմից սույն ենթապլանի մշակման, իրականացման և կառավարման ծախսն արդեն ներառված է ընդհանուր շինարարության ծախսում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | խստիվ սահմանափակել մուտքը՝ այն թույլատրելով միայն արտոնված անձանց:<br>7. Շինարարության բոլոր տեղամասերին տրամադրել արտակարգ իրավիճակների համար կոնտակտային տվյալներ, տեղամասի համար պատաս-խանատու անձանց, և անվտանգության աշխատակից-ների անունները, հեռախոսահամարները և այլն:<br>8. Ապահովել, որպեսզի ԱԻԳ-ը և քիմիական նյութեր և վտանգավոր նյութեր գործածող բոլոր աշխատողները ստանան վտանգի և ռիսկերի կառավաման թեմայով վերապատրաստում:<br>9. ԳՃ-ին տեղեկացնել ցանկացած մեծածավալ թափման և արտահոսքի մասին, որ կարող է հանգեցնել հողի վարակի և ջրի աղտոտման:<br><br>*Աշխատանքային և հասարակական անվտանգությանը վերաբերող վթարներ/պատահարներ*<br>10. Անմիջապես տեղեկացնել ճարտարագետին շինարարության տեղամասում և մերձակայքում տեղի ունեցած ցանկացած վթարի/պատահարի/ չկայացած միջադեպերի մասին և ձեռնարկել առաջին օգնության միջոցառումներ:<br>11. Հետաքննել գործը՝ պարզելով պատճառները, և զեկուցել՝ լրացնելով վթարի մասին զեկույցի ձևը:<br>12. Ձեռնարկել գործուն միջոցներ հետագայում կրկնությունը կանխելու համար: | | |

| 12. Թափոնների և նյութերի կառավարման պլան | | | | |
|---|---|---|---|---|
| 19. Տեղամասի բոլոր գործողությունները | Անհամապատասխան վայրերում թափուկների հեռացումը:<br><br>Թափոններից և նյութերից գոյացող աղտոտիչները մուտք են գործում ջրահեռացման համակարգ և/կամ ներթափանցում ստորգետնյա ջրերը:<br><br>Ճանապարհների անվտանգության և շինարարության հետ կապված հնարավոր վտանգներ՝ չմաքրված շինհրապարակների պատճառով:<br><br>Վնասված արևային վահանակի մոդուլների հեռացման հետ կապված հնարավոր վտանգներ: | *Շինանյութերի կառավարում*<br><br>1. Շինարարության ընթացքում օգտագործվող բոլոր տեսակի նյութերի համար հատկացնել պահեստային տարածք, որն ապահոված կլինի յուրաքանչյուր տեսակի համար համապատասխան հարմարություններով:<br>2. Խուսափել շինարարության տարածքում չափազանց մեծ քանակությամբ նյութերի առաքումից և դրանց երկարաժամկետ կուտակումից:<br>3. Ծածկել սորուն նյութերի կույտերը՝ դրանց տարածումից և փոշուց խուսափելու նպատակով:<br>4. Պահել աշխատանքային գործիքները, գործիքները և օժանդակ հարմարանքները, զորօրինակ՝ սանդուղքները, փայտամածները, եռակցման և կտրող սարքավորումները և այլնը, պահեստային տարածքներում՝ կանոնավոր կազմակերպված վիճակում:<br>5. Վտանգալից և վտանգավոր նյութերը պահել հատուկ տեղերում, որոնք ապահոված կլինեն անվտանգության սարքերով, պիտակներով և վտանգի մասին զգուշացնող պաստառներով: Այդ տեղերը ծածկված և ապահոված կլինեն՝ դրանց հասանելիությունը սահմանափակելու նպատակով, և կպարունակեն անջրանցիկ սալահատակ, որը ջրհոսքը կուղղի դեպի անվտանգ պահեստավորման տարածք: | <u>Կապալառու</u><br>Իրականացում և մոնիթորինգ:<br><br><u>Գլխավոր ճարտարագետ</u><br>Մոնիթորինգի է ենթարկում իրականացումը և կառավարումը:<br><br><u>ՀՏԶՀ</u><br>Աջակցում է ՏԿԵՆ-ի և ՇՄՆ-ի հետ կապերի հաստատմանը՝ թույլտվությունների և հեռացման վայերի ստացման հարցում: Ստուգում է իրականացումը: | Կապալառուի կողմից սույն ենթապլանի մշակման, իրականացման և կառավարման ծախսն արդեն ներառված է ընդհանուր շինարարության ծախսերում:<br><br>Թափոնների հեռացման և տեղադրման ծախսը ներառված է կապալառուր բյուջեում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 6. Պարբերաբար ստուգել հեղուկ նյութ պահող տարաների ամբողջականությունը՝ դրանց արտահոսքից և թափվելուց խուսափելու համար:<br><br>*Թափոնների կառավարում*<br>1. Դասակարգել թափուկները և այլ շինարարական թափոնները ըստ տեսակների. պինդ, հեղուկ, վտանգալից և վտանգավոր, ինչպես նաև՝ վերամշակվող նյութեր:<br>2. Վարել գոյացող թափոնների տեսակի և քանակության հաշվառման գրանցամատյան, յուրաքանչյուր ամսվա սկզբին թարմացնել գրանցված տվյալները և ապահովել ստուգման համար դրանց հասանելիությունը:<br>3.Կազմակերպել թափոնների կառավարմանը վերաբերող վերապատրաստման ծրագիր կապալառուի անձնակազմի համար և ապահովել, որպեսզի ողջ անձնակազմը լինի վերապատրաստված:<br>4. Պարբերաբար տեղամասից հեռացնել շինարարական թափոնը, աղբը և զիբիլը՝ փոշուց և աղբի երկարատև կուտակումից խուսափելու նպատակով: Հեռացման հաճախականությունը՝ որպես մոնիթորինգի նպատակների համար շեմ, կիստակեցվի ԳՃ-ի կողմից:<br>5. Նախքան փոխադրումը և վերջնական հեռացումը՝ ամբողջ թափոնները և նյութերը հավաքել կանոնավոր կույտերով ծրագրի ազդեցության գոտում գտնվող ժամանակավոր կուտակման | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | վայրերում կամ հողամասի սեփականատիրոջ հետ համաձայնեցված տարածքներում:<br>6. Հավաքել յուղի, քսանյութի և վառելիքի ավելորդ քանակությունները՝ դրանց թափվելուց խուսափելու համար: Պահել դրանք կնքված բաքերի մեջ՝ համապատասխան հեռացման վայրերում:<br>7. Հավաքել ամբողջ թափոնային յուղը և այն վերաօգտագործել շինարարության ընթացքում կամ առաքել թափոնային յուղի վերամշակման կայան. եթե ոչ, ապա հավաքել հատուկ տարաներում և տեղափոխել հաստատված հեռացման տարածք:<br>8. Կառուցել լվացաջրերի հեռացման համակարգ և այն ուղղել դեպի տեղական կոյուղագիծ:<br>9. Հավաքել կեղտաջրերը հատուկ ջրամբարներում և պատշաճ կերպով դրանք մաքրել յուղից և վառելիքից՝ նախքան տեղական կոյուղագիծ դրանց մուտքը:<br>10. Ստանալ թափոնների հեռացման բոլոր թույլտվությունները և դրանք հեռացնել միայն թույլատրված տեղանքներում:<br>11. Տեղադրել կափարիչներով ապահովված աղբահանության հատուկ տարաներ՝ անհրաժեշտ քանակությամբ, որպեսզի դրանք օգտագործման համար հարմար ողջամիտ հեռավորության վրա տեղադրվեն շինարարության բոլոր հատվածներում և կապալառուի օբյեկտներում, այն է՝ գրասենյակներում, դաշտային | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ճամբարներում և շարժական տներում:<br>12. Աղբի հավաքման տարաներն ունեն բավարար տարողունակություն, որպեսզի պարունակեն սպասվող թափոնները մինչև դրանց հաջորդ դատարկումը:<br>13. Ժամանակին դատարկել աղբի հավաքման տարաները՝ խուսափելով ծանրաբեռնումից: Աղբը պետք է ամեն օր կամ ավելի հաճախ հեռացվի տեղամասից, հատկապես՝ ամառային սեզոնին:<br>14. Խուսափել ծրագրի տարածքից դուրս ցանկացած լցակույտից, որը կարող է խոչընդոտ դառնալ երթևեկության և հանրության համար:<br>15. Շինարարության փուլի ընթացքում ցանկացած վնասված արևային վահանկի մոդուլ կտեղափոխվի արևային վահա-նակների համակարգի տեղադըր-ման կապալառուի տարածքը: Այս մոդուլները կպահեստավորվեն, կենթարկվեն հետագա մշակման, վերամշակման կամ հնարավոր վերաօգտագործման:<br>16. Այդ վնասված մոդուլներից գոյացող թափոնները ծրագրի տարածքում պահելը կամ քաղաքային աղբավայրերում տեղավորելը խստիվ արգելվում է: | | |
| **13. Մշակութային ժառանգության կառավարման պլան (պատահական գտածոների հայտնաբերման ընթացակարգ)** | | | | |
| 20. Շինարարական գործունեություն հնագիտական կամ պատմական վայրերի անմիջական մերձակայքում | Հնագիտական, պատմական և մշակութային ռեսուրսների վնաս կամ կորուստ: | Հնագիտական գտածոների պատահական հայտնաբերման դեպքում կապալառուն ղեկավարվում է ստրև ներկայացված ընթացակարգերով.<br>✓ անմիջապես դադարեցնում է աշխատանքները: | Կապալառու<br>Հետևում է պատահական գտածոների հայտնաբերման ընթացակարգին՝ ըստ անհրաժեշտության:<br><br>Գլխավոր ճարտարագետ | Կապալառու<br>Եթե հայտնաբերվում են հնագիտական պատահական գտածոների պաշարներ, ապա դրանք ներառվում են շինարարության |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ✓ ծանուցում է գլխավոր ճարտարագետին և ՀՏԶՀ-ին:<br>✓ մեկուսացնում է այդ տեղանքը:<br>✓ փաստաթղթավորում է (լուսանկարում է) գտածոները և անմիջականորեն շրջապատող տարածքը:<br>✓ տեղեկացնում է ԿԳՄՍՆ-ին և խորհրդակցում, որպեսզի որոշի, թե ինչպես այն պահպանել:<br>✓ ստանում է ԿԳՄՍՆ-ի կողմից շինարարական աշխատանքները շարու-նակելու թույլտվությունը: | Փոփոխում է նախագիծը՝ հնագիտական/մշակութային ուսումնասիրության առաջարկությունները ներառելու նպատակով, եթե այդպիսիք լինեն:<br><br><u>ՀՏԶՀ</u><br>Աջակցում է համապատասխան մարմինների հետ կապերի հաստատմանը:<br>Ստուգում է իրականացումը: | ընդհանուր արժեքի մեջ, որը գնահատվում է շինարարության ընդհանուր արժեքի առավելագույնը 2%-ի չափով: |
| **14. Տեղամասի վերականգնման, կանաչապատման և բուսական ծածկույթի վերականգնման պլան** | | | | |
| 21. Բոլոր վայրերի տեղամասերի վերականգնում: Բուսական ծածկույթի վերականգնում և կանաչապատում: | Շինարարական աղբը և նյութերը չեն հեռացվում և թողնվում են շինարարության տեղամասում:<br>Մաքրված բուսականությունն ու ծառերը լիարժեքորեն չեն փոխհատուցվում բուսական ծածկույթի վերականգնման աշխատանքներով:<br>Տեղամասի գեղագիտական պատկերը գոհացուցիչ չէ: | 1. Աշխատանքային և շրջակա տարածքից հեռացնել շինարարության հետ կապված բոլոր նյութերն ու սարքավորումները, ներառյալ՝ շարժական տները, թափոնները և չօգտագործված նյութերը:<br>2. Բոլոր մեքենաները, ներառյալ՝ անսարքին մեքենաները և տրանսպորտային միջոցները, պետք է հեռացվեն տեղամասից:<br>3. Հեռացնել տարածքը գրավող բոլոր ժամանակավոր հարմարությունները և ցանկապատերը:<br>4. Տեղամասը կանաչապատված է՝ ապահովելու տարածքի պատշաճ ջրահեռացումը:<br>5. Մաքրել շինարարության տեղամասը աղբից և յուղի ու վառելիքի արտանետումների հետքերից, եթե այդպիսիք կան:<br>6. Ըստ անհրաժեշտության՝ վերականգնել հողի շերտը և | <u>Կապալառու</u><br>Իրականացնում է 1-5-րդ կետերով նախատեսված բոլոր միջոցառումները:<br><br><u>Գլխավոր ճարտարագետ</u><br>Տրամադրում է կանաչապատման նախագիծը:<br>Վերանայում է պլանը և մշտադիտարկում իրականացումը:<br><br><u>ՀՏԶՀ</u><br>Մշտադիտարկում է իրականացումը: | Մանրամասն նախագծում գնահատված ծառերի և թփերի մասով՝ գոյություն ունեցող համայնքային ծառերի պահպանության արժեքը կգնահատվի թարմացված ՇՄՆՈւ-ում՝ հիմնվելով ծառերի և թփերի հաշվարկված քանակի և տեսակի վրա:<br><br>Ծախսերը վերաբերում են դպրոցի տարածքում գտնվող ծառերին և թփերին: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | թուլացած հողը, որի պատճառը է ծանր տեխնիկան է:<br>7. Կատարել բուսական ծածկույթի վերականգնման աշխատանքներ՝ համաձայն Կանաչապատման նախագծի  և Ծառերի կառավարման պլանի, որը ներառում է տնկում, պահպանում և մոնիթորինգ՝ ծառերի, թփերի, այլ բույսերի և սիզամարգերի գոյատևման բարձր մակարդակ և արագ աճ ապահովելու նպատակով: | | |
| **ՀԵՏՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓՈՒԼ** | | | | |
| Թերությունների վերացման ժամկետ | Շինարարության փուլում վերհանված բոլոր ազդեցությունները: | Շինարարության փուլում նախատեսված գործողությանը բնորոշ բոլոր մեղմման միջոցառումները:<br><br>Բնապահպանական աուդիտ ԹՎԺ-ի ավարտին: | Կապալառու<br>Իրականացնում է ԲԿՊ-ն այն ժամանակահատվածի համար, երբ կապալառուն իրականացրել է թերությունների ուղղման աշխատանքները, և ճարտարագետին տրամադրում է բնապահպանական երաշխիքների հաշվետվությունը:<br><br>Գլխավոր ճարտարագետ<br>Մոնիթորինգի է ենթարկում ծառերի և այլ բույսերի գոյատևումը աշխատանքների ընթացքում և ԹՎԺ-ը,<br>ՀՏԶՀ-ին տրամադրում է բնապահպանական երաշխիքների մասին հաշվետվությունը:<br><br>ՀՏԶՀ<br>Կկատարվի հետշինարարա-կան փուլի բնապահպանա-կան աուդիտ կպատրաստվի ստուգաթերթը և կներկայացվի ԱԶԲ-ին: | Կապալառուի կողմից կատարվող մոնիթորինգի արժեքը չի կարող գնահատվել այս պահի դրությամբ: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Դպրոցի վարչակազմ | Կանաչապատման գեղագիտական պատկերը վտանգված է: | Ծառերի, թփերի, այլ բույսերի և սիզամարգերի աճի և առողջության մոնիթորինգ, մահացած, վնասված կամ անառողջ տեսակների փոխարինում և սիզամարգերի սխալ աճեցված մակերևույթների կրկնակի տնկում: | Դպրոցի վարչակազմ<br>Մշակում և ստեղծում է Սոցիալական կառավարման բնապահպանական համակարգը:<br><br>ՀՏԶՀ<br>Իրականացնում է բնապահպանական աուդիտ տարեկան կտրվածքով: | ՀՏԶՀ-ի կողմից երկարաժամկետ աուդիտի արժեքը ներառված է ՀՏԶՀ-ի բյուջեում: |

## Հավելված 6 (բ). Բնապահպանական կառավարման պլան. Մոնիթորինգ

| | Գործողություն/ Վայր | Մոնիթորինգի ենթակա պարամետրեր | Մոնիթորինգի վայր/եր | Գործիքներ և մեթոդ | Բնապահպանական կատարողականի ցուցանիշ | Պատասխանատու մարմիններ | Հաճախականություն (ֆորմալ մոնիթորինգ) |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | **ՆԱԽԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓՈՒԼ (Մոբիլիզացիայի փուլ)** | | | | | | |
| 1. | Աշխատանքի հնարավորություններ տեղացի աշխատողների, որակավորում չունեցող աշխատողների և կանանց համար | Վարձու աշխատանքի են վերցվել տեղացի աշխատողները, որակավորում չունեցող աշխատողները և կանայք: | Շինարարության տեղամաս | Կապալառուի փաստաթղթերի վերանայում, այդ թվում՝ տեղացի աշխատողների, որակավորում չունեցող աշխատողների և կանանց համար աշխատանքի հայ-տարարությունների քանակը: | Ծրագրի համար վարձու աշխատանքի վերցված տեղացի աշխատողների, որակավորում չունեցող աշխատողների և կանանց թիվը: | <u>Կապալառու</u><br>Մշակում է վարձու աշխատանքի վերցնելու ծրագիրը տեղացի աշխատողների, որակավորում չունեցող աշխատողների և կանանց համար:<br><br><u>Գլխավոր ճարտարագետ</u><br>Սոցիալական ոլորտի մասնագետը վերանայում է կապալառուի վարձու աշխատանքի վերցնելու ծրագիրը և հաստատում այն:<br><br>Վերահսկման ծախսը կներառվի ճարտարագետի բյուջեում:<br><br><u>ՀՏԶՀ</u><br>Վերահսկում է գլխավոր ճարտարագետին: | Մեկ անգամ մոբիլիզացիայի ընթացքում, երբ կապալառուն նախատեսում է հավաքագրում<br><br>Թարմացում և հաշվետվություն շինարարության փուլում: |
| 2. | Երաշխիքների կառավարման համակարգ | Բնապահպա-նական/ԱԱԱ և սոցիալական երաշխիքների համար | Շինարարության տեղամաս | Ինքնակենսա-գրրականների վերանայում և հարցազրույց թեկնածուների հետ: | Կապալառուի բնապահպանական/ԱԱԱ և սոցիալական երաշխիքների | <u>Կապալառու</u><br>Տրամադրում է Բնապահպանական ոլորտի մասնագետի, ԱԱԱ | Մեկ անգամ՝ մոբիլիզացիայի ընթացքում և թարմացում փոխարինման և |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | պատասխանատու անձնակազմը նշանակվել է: | | | ոլորտի մասնագետների ինքնակենսագրա-կանները, տեղամասի համար պատասխանատու անձանց ցուցակը: | ոլորտի մասնագետի և սոցիալական ոլորտի մասնագետի ինքնակեն-սագրականները և տեղամասի համար պատասխանատու անձանց ցանկը, և նրանց վերցնում է վարձու աշխատանքի գլխավոր ճարտարագետի հաստատումից հետո:<br><br>Գլխավոր ճարտարագետ<br>Վերանայում է ինքնակեն-սագրականները և հաստատում երաշխիքների գծով մասնագետներին:<br><br>ՀՏԶՀ<br>Վերահսկում է գործընթացը: | նախագծի փոփոխման դեպքում: |
| 3. | Նախաշինարա-րական փուլի հանդիպումներ պլանավորված աշխատանքներ ի վերաբերյալ: | Հանրության հետ նախաշինարարական փուլի հանդիպումը կազմակերպվել և իրականացվել է: | Տարածք, որի համար տրամադրվել է աշխատանքների մեկնարկի թույլտվություն: | Տեղեկատվությունը հրապարակվել է պաստառների, հրավերների միջոցով: Ներկայացման նյութը պատ-րաստվել է: | Կապալառուի պաստառներ, ներկայացման նյութ, հանդիպման արձանագրություն | Կապալառու<br>Պատրաստում է ներկայացման նյութերը, կազմակերպում է հանրության հետ հանդիպում, հրավիրում է ճարտարագետին, | Մեկ անգամ մոբիլիզացիայի ընթացքում և և ամեն անգամ, երբ տրվում է աշխատանքները սկսելու նոր թույլտվություն: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Հանդիպումը կազմակերպվել է: Կազմակերպված հանդիպման փաս-տաթղթավորումը վարվել է: | | պատրաստում է հանդիպման արձանագրություն ը:<br><br><u>Գլխավոր ճարտարագետ</u> Տեղեկացնում է ՀՏԶՀ-ին, մասնակցում է հանդիպմանը և վերանայում է կապալառուի հանդիպման արձանագրություն ը:<br><br><u>ՀՏԶՀ</u> Հրավիրում է ԱԶԲ-ի ներկայացուցիչներ ին՝ հանդիպմանը մասնակցելու համար: Վերահսկում է գործընթացը: | |
| 4. | Կողմնորոշում, իրազեկվածությ ան բարձրացում և վերապատրաս տում բնապահպանա կան/ ԱևԱ/սոցիալակ ան երաշխիքների վերաբերյալ: | Վերապատրաստմ ան նստաշրջանը կազմակերպվել է և իրականացվել: | Շինարարության տեղամաս: | Կապալառուի վերապատրաստման ծրագրի վերանայում, ներառյալ՝ վերա-պատրաստման նյութերը:<br><br>Մասնակցություն Կապալառուի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացին: | Վերապատրաստ ման դասընթացին հաճախած՝ կապալառուի և ենթակապալառու ի ճարտարագիտա կան, ղեկավար և բանվոր անձնակազմի թվաքանակը: | <u>Կապալառու</u> Իրականացնում է վերապատրաստ-ման ծրագիրը, հրավիրում է ճարտարագետին և ներկայացնում է հաշվետվություն:<br><br><u>Գլխավոր ճարտարագետ</u> Տեղեկացնում է ՀՏԶՀ-ին, | Մեկ անգամ՝ մոբիլիզացիայի շրջանում ողջ անձնակազմի համար, և երբ պայմանագիր է կնքվում նոր ենթա-կապալառուի հետ: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | մասնակցում է վերա-պատրաստմանը և վերանայում է կապալառուի հաշվետվությունը:<br><br>ՀՏԶՀ<br>Հրավիրում է ԱԶԲ-ի ներկա-յացուցիչներին՝ մասնակցելու վերապատ-րաստմանը:<br>Վերահսկում է գործընթացը: | |
| 5. | Մոբիլիզացիայի աշխատանքները տեղամասում: | Ճանապարհների գծանշումն իրականացվել է, հիմնական գրասենյակը և դաշտային ճամբարները ստեղծվել են: | Շինարարության տեղամաս: | Կապալառուի Մոբիլիզացիայի պլանի վերանայում:<br><br>Մոնիթորինգային այցեր տեղամաս:<br><br>. | Մոբիլիզացիայի պլանում սահմանված բոլոր պահանջները կատարվել են: | Կապալառու<br>Պատրաստում և իրականացնում է Մոբիլիզացիայի պլանը:<br><br>Գլխավոր ճարտարագետ<br>Վերանայում և հաստատում է կապալառուի Մոբիլիզացիայի պլանը:<br><br>ՀՏԶՀ<br>Վերահսկում է գործընթացը: | Մեկ անգամ՝ մոբիլիզացիայի շրջանում և հետագայում, երբ տրվում է մեկնարկի թույլտվությունը ճանապարհների նոր հատվածներում:: |
| 6. | Աշխատանքային առողջություն և անվտանգություն | Ողջ անձնակազմին տրամադրվել է արտահագուստ և ԱՊՄ:<br>Անվտանգության միջոցները | Շինարարության տեղամաս: | Մոնիթորինգային այցեր տեղամաս: | Շինարարության բոլոր տեղամասերը ապահով սարքավորված են: Ողջ անձնակազմն | Կապալառու<br>Իրականացնում է աշխատանքային առողջության և անվտանգության պահանջները: | Մեկ անգամ՝ մոբիլիզացիայի շրջանում և հաջորդիվ՝ շինարարության ընթացքում: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | տեղադրվել և ստեղծվել են շինարարության բոլոր տեղամասերում: | | | ապահովված է արտահա-գուստով և ԱՊՄ-ով: | <u>Գլխավոր ճարտարագետ</u><br>Մոնիթորինգի է ենթարկում իրականացումը:<br><br><u>ՀՏՉՀ</u><br>Վերահսկում է գործընթացը: | |
| | **ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ** | | | | | | |
| 7. | Բնապահպանական և անվտանգային կողմնորոշում | Ողջ անձնակազմին տրամադրվել է արտահագուստ և ԱՊՄ:<br>Անվտանգության միջոցները տեղադրվել և ստեղծվել են շինարարության բոլոր տեղամասերում: | Շինարարության տեղամաս: | Աշխատանքային առողջության և անվտանգության փաստաթղթերի ստուգում:<br><br>Շինարարության տեղամասերի ստուգում:<br><br>Պատահարների և/կամ վթարների հաշվառման գրանցամատյանի ստուգում: | Անվտանգության ը վերաբերող հրահանգներն առկա են դաշտային գրասենյակում:<br><br>Վերապատրաստման նստաշրջանի մասնակիցների ցուցակն առկա է:<br><br>Տեղամաս կատարվող տեսչական այցերի վերաբերյալ հաշվետվություններն առկա են:<br><br>Պատահարների/ վթարների մասին զեկույցներն առկա են: | <u>Կապալառու</u><br>Իրականացնում է Աշխատանքային առողջության և անվտանգության պահանջները և ինքնամոնիթորինգ: Արժեքը ներառված է կապալառուի բյուջեում:<br><br><u>Գլխավոր ճարտարագետ</u><br>Իրականացնում է Աշխատանքային առողջության և անվտանգության պահանջների իրականացման մոնիթորինգ:<br><br>Վերահսկողության ծախսը ներառված է ճարտարագետի բուջեում:<br><br><u>ՀՏՉՀ</u><br>Վերահսկում է գործընթացը: | Համաձայն կանոնավոր մոնիթորինգի ժամանակացույցի: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 8. Հ | Հանրային քննարկումներ և հաղորդակ-ցություն | ԱԵԱ-երի համար տեղեկատվություն ծրագրի Բողոքների լուծման մեխանիզմի վերաբերյալ: | Շինարարության տեղամաս: | Գրանցամատյանի վերանայում<br><br>Մոնիթորինգային այցեր տեղամաս:<br><br>Հանրային քննարկումներ և հանդիպումներ: | Հանրային քննարկումների և հաղորդակ-ցության պլանն առկա է:<br><br>ԲԼՄ-ն ներդրվել է: | Կապալառու<br>Իրականացնում է Հանրային քննարկումների և հաղորդակցության պլանը<br><br>Գլխավոր ճարտարագետ<br>Վերանայում և վերահսկում է Հանրային քննարկումների և հաղորդակցության պլանի իրականացումը:<br><br>Վերահսկողության արժեքը ներառված է ճարտարագետի բյուջեում:<br><br>ՀՏԶՀ<br>Վերահսկում է գործընթացը: | Համաձայն ֆորմալ մոնիթորինգի կանոնավոր ժամանակացույցի: |
| 9. | Մշակութային ժառանգության կառավարում (պատահական գտածոների հայտնաբերման ընթացակարգ) | Մշակութային ժառանգության կառավարման պլանում նախատեսված մեղման միջոցառումների իրականացում: | Շինարարության տեղամաս: | Տեսողական մոնիթորինգ՝ տեղամաս կատարվող այցելությունների միջոցով: | Հնագիտական և պատահական գտածոների վերաբերյալ վերապատրաստ ումն անցկացվել է: | Կապալառու<br>Իրականացնում է Մշակութային ժառանգության կառավարման պլանի պահանջները:<br><br>Գլխավոր ճարտարագետ<br>Վերահսկում է Մշակութային ժառանգության կառավարման պլանի | Պլանը պետք է հաստատվի մինչև շինարարական աշխատանքների մեկնարկը և այնուհետև պարբերաբար թարմացվել՝ նոր հայտնաբերումների դեպքում փոփոխություններին համապատասխանելու համար |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | պահանջների իրականացումը:<br><br>Վերահսկողության ծախսը ներառված է ճարտարագետի բյուջեում:<br><br><u>ՀՏԶՀ</u><br>Վերահսկում է գործընթացը: | Կանոնավոր մոնիթորինգը կատարվում է կանոնավոր ֆորմալ մոնիթորինգի համաձայն:ց. |
| 10. | Մակերևու-թային և ստորգետնյա ջրերի պահպանու-թյուն | Մեղմման միջոցառումների իրականացում | Ոռոգման ջրանցք | Շինարարական աշխատանքների տեսողական մոնիթորինգ մակերևութային ջրային մարմինների մերձակայքում: | Մակերևութային և ստորգետնյա ջրերի պահպանության պլանն առկա է: | <u>Կապալառու</u><br>Իրականացնում է Մակերևութային և ստորգետնյա ջրերի պահպանության պլանի պահանջները:<br><br><u>Գլխավոր ճարտարագետ</u><br>Վերահսկում է Մակերևութային և ստորգետնյա ջրերի պահպանության պլանի պահանջների իրականացումը:<br>Վերահսկողության ծախսը ներառված է ճարտարագետի բյուջեում:<br><br><u>ՀՏԶՀ</u><br>Վերահսկում է գործընթացը: | Համաձայն կանոնավոր մոնիթորինգի ժամանակացույցի: |
| 11. | Բուսական և կենդանական | Բուսականություն ից մաքրումը | Շինարարության տեղամաս: | Մոնիթորինգային այցեր տեղամաս: | Մեղմման միջոցառումները | <u>Կապալառու</u> | Կանոնավոր ֆորմալ մոնիթորինգի |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
